

Եվրոպական Միության Հարևանության ծրագիր

Գյուղատնտեսության և գյուղական
շրջանների զարգացման ոլորտների
գնահատումն Արևելյան
գործընկերության երկրներում

Հայաստանի Հանրապետություն



Ֆինանսավորվել է Եվրոպական հանձնաժողովի կողմից



Իրականացվել է ՊԳԿ-ի կողմից



ՊԳԿ-ի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակ

Benczur utca 34.
H-1068 Budapest
Hungary
Tel: +36 1 4612000 Fax: +36 1 3517029
E-mail: FAO-RO-Europe@fao.org

GCP/RER/041/EC
ENPI 2012/298-262

Ծրագրի սկիզբը՝ 16 հուլիս 2012թ.
Ծրագրի ավարտը՝ 31 դեկտեմբերի 2012թ.

Սույն հրատարակությունն իրականացվել է Եվրոպական Միության աջակցությամբ: ՊԳԿ-ն հրատարակության բովանդակության միակ պատասխանատուն է: Բովանդակությունը որևէ ձևով չի արտացոլում Եվրոպական Միության տեսակետները:

Սույն հրատարակության մեջ օգտագործված նշանները և նյութի ներկայացումը չեն ենթադրում ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից որևէ տեսակետի արտահայտում, որը վերաբերում է որևէ երկրի, տարածքի, քաղաքի, բնագավառի կամ դրա իշխանությունների իրավական կամ զարգացման կարգավիճակին կամ դրա սահմանների սահմանազատմանը: Կոնկրետ ընկերությունների կամ արտադրողների ապրանքների հիշատակումը՝ լինեն դրանք արտոնագրված, թե ոչ, չի ենթադրում, որ դրանք հաստատվել կամ հանձնարարվել են ՊԳԿ-ի կողմից՝ նախընտրելով դրանք նմանատիպ այլ ապրանքներից, որոնք հիշատակված չեն:

Հապավումների ցանկ

ԳՏԾ	Գործողությունների տարեկան ծրագիր
ԳԳԾԶ	Գյուղատնտեսություն և գյուղական շրջանների զարգացում
ՀԴ	Հայկական դրամ, ազգային արժույթ /2012թ. սեպտեմբերի դրությամբ 1 եվրոն հավասար է 534 դրամի/
ՕԳՀՀ	Օրգանական գյուղատնտեսության հայկական հիմնադրամ
ՄՕՏՀ	Սևծովյան տնտեսական համագործակցություն
ԲԱԾ	Բյուջետային աջակցության ծրագիր
ՊԿՄԶՀԾ	Պետական կառավարման մարմինների զարգացման համապարփակ ծրագիր
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ԱՀՔՑ	Արտաքին հարաբերությունների գծով քաղաքացիների ցանց
ԱԳ	Արևելյան գործընկերություն
ՎԶԵԲ	Վերակառուցման և զարգացման եվրոպական Բանկ
ԵՀ	Եվրոպական հանձնաժողով
ԵՄ	Եվրոպական Միություն
Եվրովիճ	Եվրոպական վիճակագրական ծառայություն
ԽՀԱԱԳ	Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտի
ՀԶԳ	Համագործակցության զարգացման գործիք
Ազրո ԳՏ	Գյուղատնտեսության և գյուղական շրջանների գլխավոր տնօրինություն
ԶՀ ԳՏ	Զարգացման և համագործակցության հարցերի գլխավոր տնօրինություն /Եվրոպա էյթ/
ԴՄԶԳ	Դանիայի Միջազգային զարգացման գործակալություն
ՁՑԵ	Ձեռնարկությունների ցանց Եվրոպա
ԲԱԳ	Բնապահպանական ազդեցության գնահատում
ԳԳԾԶԵՀԾ	Գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացման եվրոպական հարևանության ծրագիր
ԵՀՔԳ	Եվրոպական հարևանության քաղաքականության գործիք
ԲԲՊԿԿ	Բնապահպանություն և բնական պաշարների կայուն կառավարում
ԲԿՎ	Բնապահպանական կատարողականի վերանայում
ԵՄՊ	Եվրոպական Միության պատվիրակություն
ԳՄԴ	Գյուղատնտեսական միությունների դաշնություն
ԳՏՎՑ	Գյուղացիական տնտեսությունների վերլուծական ցանց
ՊԳԿ	ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն
ԿՓՇԿ	Կլիմայի փոփոխությունների ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիա
ՕՈԻՆ	Օտարերկրյա ուղղակի ներդրումներ
ՊԱԾ	Պարենային անվտանգության ծրագիր
ԺՏԶԿ	Ժողովրդավարության և տնտեսական զարգացման կազմակերպություն
ՆՏԱ	ներքին տեղահանված անձ
ՕՇՄԴ	Օրգանական շարժումների միջազգային դաշնություն
ՃՄՀԳ	Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն
ՀՄՀ	Հազարամյակի մարտահրավեր համաձայնագիր
ՀԶՆ	Հազարամյակի զարգացման նպատակներ
ԳՆ	Գյուղատնտեսության նախարարություն
ԷՆ	Էկոնոմիկայի նախարարություն

ՖՆ	Ֆինանսների նախարարություն
ՏԿՆ	Տարածքային կառավարման նախարարություն
ՄԾԾ	Միջնաժամկետ ծախսերի շրջանակ
ՈՊԴ	Ոչ պետական դերակատարներ /ակտորներ/
ՊՖԿ	Պետական ֆինանսների կառավարում
ԳՀ	Գնողունակության հավասարություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՇԶԳ	Շվեյցարիայի Զարգացման գործակալություն
ՄՆՀ	Սոցիալական ներդրումների հիմնադրամ
ԿԲԱ	Կառավարման բարելավման աջակցություն
ՓՄԶ	Փոքր ու միջին ձեռնարկություն
ՀՊԲՏ	Հատուկ պահպանվող բնական տարածքներ
ՄԲՄ	Մանիտարական և բուսասանիտարական
ՈՔԱԾ	Ոլորտի քաղաքականության աջակցության ծրագիր
ՏԱԻԷՄ	Տեխնիկական աջակցություն և տեղեկատվության փոխանակում /Ընդհանուր ընդլայնման ԳՏ/
ՏՀԾ	Տեխնիկական համագործակցության ծրագիր
ՄԱԿ-ի ԵՏՀ	ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով
ՄԱԿԶԾ	ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր
ՄԱԿԲԾ	ՄԱԿ-ի Բնապահպանական ծրագիր
ԱՄՆՄԶԳ	ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն
ԱՄՆԳԴ	ԱՄՆ գյուղատնտեսության դեպարտամենտ

Բովանդակություն

1. Հապավումների ցանկ	5
1.1. Ճյուղի վերլուծության համատեքստն ու նպատակը	9
1.2. Ուսումնասիրությունն իրականացնող խումբը	9
1.3. Երախտագիտություն	10
2. Նախապատմությունը և հիմնական թվական տվյալները	11
2.1. Ընդհանուր համատեքստը և տնտեսական ցուցանիշները	11
2.2. Գյուղատնտեսությունը և ագրարային ոլորտը	15
3. Կառավարության քաղաքականությունը գյուղատնտեսության և գյուղական վայրերի զարգացման վերաբերյալ	33
3.1. Ազգային ենթասոբենսդրական ակտերի ժամանակակից նկարագրությունն ու գնահատականը	33
3.2. Գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացման՝ կառավարության ներկա և ծրագրված քաղաքականությունը միջամտելու և/կամ ռազմավարության նկարագրությունն ու գնահատումը	37
3.3 Ինչպես են կառավարության համապատասխան ծրագրերը տեղավորվում ԳԳՇԶԷՇԾ-ի մեթոդների մեջ	46
4. Ինստիտուցիոնալ կարողությունների գնահատումը	47
4.1. ԳԳՇԶԷՇԾ-ի մոտեցումները կառավարելու, իրականացնելու և դիտարկելու՝ պետական մարմինների գնահատականը	47
4.2. ԳԳՇԶԷՇԾ-ի մոտեցումների կառավարման, իրականացման և մոնիտորինգի հարցում գյուղատնտեսության և գյուղական շրջանների տնտեսության շահագրգիռ կողմերի գնահատականը	51
4.3. Եվրոպական հարեւանության Գյուղատնտեսության եւ գյուղական զարգացման ծրագրի (ENPARD) մոտեցումների կիրառման նպատակով գյուղատնտեսության եւ գյուղական տնտեսության բնագավառի, այդ թվում նաեւ՝ մասնավոր հատվածի շահագրգիռ կողմերի ուսուցման կարիքների գնահատում	53
5. Առկա ընթացիկ ծրագրերի վերանայում	54
5.1. Ընթացիկ ծրագրերի վերանայում	54
5.2. Գյուղատնտեսության եւ գյուղական զարգացման քաղաքականությունների շրջանակում իրականացվող համեմատական վերլուծություն	58
6. Սահմանափակումներ եւ SWOT վերլուծություն	60
6.1. SWOT վերլուծությունը ըստ ոլորտների	60
6.2. Առավել կարեւոր գերակա ոլորտների ցանկը	63
7. Առաջարկություններ երկկողմ համատեքստում իրականացվելիք գործողությունների վերաբերյալ	64
7.1 Հետագա գործունեության շրջանակներում՝ գյուղատնտեսական և գյուղական հատվածի զարգացման առումով բացահայտված բացերը	65
7.2 Վերը նշված բացթողումների ուղղությամբ Հայաստանում և Հարավային Կովկասում առաջարկվող գործողություններ	67
8. Տարածաշրջանային բացերի և առաջնահերթությունների բացահայտում , և հետագա գործողությունների վերաբերյալ առաջարկություններ	68
8.1. Գյուղատնտեսական արտադրանքի և գյուղի զարգացման, ներառյալ անասնապահության, տարածաշրջանային տարբերությունների և անհամապատասխանությունների գնահատումը	69
8.2. Առաջարկներ գործողությունների վերաբերյալ, որոնք կարող են / պետք է իրականացվեն տարածաշրջանային համատեքստում	71

9. Եզրահանգումները և քաղած դասերը.....	74
9.1. Եզրակացություններ	74
9.2. Գյուղատնտեսության և գյուղի զարգացման փորձագիտական խմբի համար տարածաշրջանային ընդհանուր օրակարգային հարցեր	76
10. Հղումներ և օգտագործված աղբյուրները.....	77
11. Հավելվածներ	79
Հավելված 1: Մեմինարի զեկույցը	80
Հավելված 2: Ոլորտի դոնորական ծրագրերը	86
Հավելված 3: Գյուղատնտեսության նախարարության նկատառումները հաշվետվության վերաբերյալ	95

1. Ներածություն

1.1. Ճյուղի վերլուծության համատեքստն ու նպատակը

Արևելյան գործընկերության երկրներից շատերում կա գյուղական բնակչություն, որն իր գոյության համար ինչ-որ չափով հույսը դնում է փոքր ու բաժանված հողամասերի, համայնքային կամ պետական արտադրարարների վրա: Այդ փոքր հողակտորների տերերը շատ սահմանափակ ռեսուրսներ ունեն, որոնց աճի ներուժը նույնպես փոքր է: Այդ հողակտորներից ստացված արտադրանքը հաճախ ծառայում է միայն գոյությունը պահպանելուն: Ավելցուկ արտադրանքի վաճառքը դժվարանում է կազմակերպված շուկաների հետ ունեցած սահմանափակ կապերի և վերամշակման, պահեստավորման, կառավարման, փաթեթավորման կամ բաշխման հասանելիության կամ բացակայության պատճառով:

Դոնորները, ներառյալ ԵՄ-ն և ՊԳԿ-ն արդեն իսկ աջակցություն են տրամադրում, սակայն ներկա համաշխարհային ճգնաժամը, ի թիվս այլ հետևանքների, պարենի իր չափազանց բարձր գներով ցույց է տվել, որ ԱԳ-ի երկրներին հարկավոր է էլ ավելի ամրապնդել գյուղատնտեսական քաղաքականության ձևակերպումը, որը միտված է աջակցելու փոքր ագարակատերերին և նրանց միություններին, աջակցելու գյուղատնտեսության բնագավառում մասնավոր ու պետական շահագրգիռ կողմերին, կայուն կերպով մեծացնելու գյուղատնտեսական արտադրությունը և արդիականացնելու գյուղատնտեսությունն ու գյուղական շրջանները:

Գյուղատնտեսության և գյուղական շրջանների ընդհանուր գնահատումը վճռորոշ կլինի գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացման հատվածի պատշաճ ռազմավարություն մշակելու համար: Այդ ուսումնասիրություններն իրենց նպաստը կբերեն ոլորտում տիրող վիճակի գնահատման հարցում, առաջնահերթ ուշադրություն կդարձնեն և կնախանջեն ենթաոլորտները, միջամտության բնագավառները և շահառուներին՝ խորհրդակցելով տեղի պետական ու մասնավոր շահագրգիռ կողմերի հետ:

Ամբողջ ծրագիրը համահունչ է Եվրոպական հարևանության քաղաքականության գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացման ծրագրին՝ ԵՄ-ի նախաձեռնություն, որն ստեղծվել է գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացման՝ ԵՄ-ի լավագույն փորձի հիման վրա: Սույն ծրագրի արդյունքների հիման վրա Եվրոպական հարևանության քաղաքականության գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացման ծրագրերը և գործունեությունը կարող են ճանաչվել, մշակվել ու իրականացվել ԱԳ-ի շահագրգիռ երկրներում:

1.2. Ուսումնասիրությունն իրականացնող խումբը

Սույն ուսումնասիրությունն իրականացվել է հետևյալ խմբի կողմից՝

- ԵՄ/ՊԳԿ ղեկավար կոմիտե
- Ռիչարդ Էբերլին, ՊԳԿ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակի՝ գյուղական զարգացման և հողի սեփականության հարցերով պատասխանատու
- Մադալի Հեռանց, ՊԳԿ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակի՝ կենդանիների առողջության պահպանման հարցերով կրտսեր պատասխանատու
- Մարկ Լե Մելեուր, միջազգային խորհրդատու
- Ադրիան Նիլ, միջազգային խորհրդատու
- Սիմուս Օ'Գրեյդի, միջազգային խորհրդատու
- Դրագան Անգելովսկի, միջազգային խորհրդատու
- Նորա Ալանակյան, ազգային խորհրդատու

- Միասկ Ղարազյոզյան, ազգային խորհրդատու
- Սամվել Ավետիսյան, ազգային խորհրդատու

1.3. Երախտագիտություն

ՊԳԿ-ի պատասխանատու թիմը շնորհակալություն է հայտնում ԵՀ-ին այս կարճաժամկետ, սակայն ինտենսիվ ծրագրի ընթացքում տրամադրած աջակցության և ուղղորդման համար: Մասնավորապես.

Եվրոպական հանձնաժողովին՝ հատուկ շնորհակալություն հայտնելով՝

- Խեոուս Լավինյային, Իզաբել Կոմբեսին և Դոմինիկ Օլևինսկիին.
- Հայաստանում ԵՄ պատվիրակությանը:

ՊԳԿ-ի թիմն իր երախտագիտությունն է հայտնում նաև հանրային և մասնավոր հաստատություններին և քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, մասնավորապես ՀՀ Գյուղատնտեսության նախարարությանը, որը հետաքրքրությամբ արձագանքեց այս գործընթացին և ոգևորությամբ մասնակցելով արժեքավոր տեղեկություններ տրամադրեց գնահատմանը:

Ի վերջո ՊԳԿ թիմը ցանկանում է ծրագրի իրականացմանը աջակցելու համար իր անկեղծ շնորհակալությունը հայտնել՝

- ՊԳԿ գործընկերներին Հայաստանում, մասնավորապես սկն. Գայանե Նասոյանին.
- ՊԳԿ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակի դաշտային ծրագրերի բաժնին, մասնավորապես Էստեր Բարտաին, Ադասի Հարությունյանին, Ռայմունդ Յելեին և Գորան Ստավրիկին:


2. Նախապատմությունը և հիմնական թվական տվյալները

2.1. Ընդհանուր համատեքստը և տնտեսական ցուցանիշները

Աշխարհագրություն

Հայաստանը Հարավային Կովկասում գտնվող լեռնային ու դեպի ծով ելք չունեցող երկիր է, որի տարածքը կազմում է 29,800 քառ. կմ: Տարածքի ավելի քան 90 տոկոսը գտնվում է ծովի մակերևույթից 1,000 մ-ից ավելի բարձրության վրա: Հայաստանի տարածքի ամենացածր կետը գտնվում է Դերեդ գետի հովտում՝ 380մ, իսկ ամենաբարձր Արագած լեռան գագաթն է՝ 4,090մ: Կլիման լեռնային մայրցամաքային է՝ շոգ ամառներով և ցուրտ ձմեռներով:

Տարածքը՝ 2,97մ հա /ջուր՝ 0.15մ հա/
Վարելահողերը՝ 0.452մ հա
Բազմամյա մշակաբույսերը՝ 0.0296մ հա
Խոտհարքները՝ 0.128մ հա
Արոտավայրերը՝ 1.118մ հա
Մշակվող հողերը՝ 16.78 տոկոս
Անտառները՝ 0.371մ հա /9.7 տոկոս/
Բնակչությունը՝ 3.1 միլիոն /2011թ. տվյալներով/
Գյուղական բնակչությունը՝ 36/3 տոկոս
2011թ. 1 շնչին ընկնող ՀՆԵ /գնողունակության
համարժեքություն / 6,140ԱՄՆ դոլար¹
2008թ. GINI գործակիցը՝ 30.86
2010թ. HDI դասակարգումը՝ 169 երկրներից 76-րդն է
Արտադրության կառուցվածքն ըստ գյուղացիական
տնտեսությունների տեսակի
- փոքր հողակտորների սեփականատերեր՝ 97.2 տոկոս
- այլ սուբյեկտներ՝ 2.8 տոկոս
Հողատիրության միջին չափը՝ 1.4հա



Վարչական շրջանները



Հայաստանը բաժանված է տասը վարչական կենտրոնների կամ մարզերի: Յուրաքանչյուր մարզում գործում են ինքնակառավարվող համայնքներ, որոնք կազմված են մեկ կամ ավելի բնակավայրերից: Համայնքների ը դասակարգումը՝ քաղաքային կամ գյուղական: Ներկայումս կա 915 համայնք՝ 49 քաղաքային և 866 գյուղական վարչական համայնքներ: Մայրաքաղաք Երևանը նույնպես ունի համայնքի կարգավիճակ և բաժանված է տասներկու կիսաինքնավար շրջանների:

Տնտեսությունն ու առևտուրը

2009թ. տնտեսությունը մեծ անկում ապրեց՝ հասանալիս աշխարհային տնտեսական ճգնաժամի պատճառով 2008թ. հետ համեմատած ՀՆԱ-ն ընկավ 14.4 տոկոսով՝ մինչև 16.25 մլրդ ԱՄՆ դոլար: Այդ անկումը աշխարհում ամենախոշորներից մեկն էր: Այժմ տնտեսությունը վերականգնվել է և հասել մինչև 2009թ. եղած մակարդակին՝ կազմելով 18.17 մլրդ ԱՄՆ դոլար /2011թ.

¹ Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի տվյալներ

գնողունակության համարժեքություն/, իսկ պաշտոնական տվյալներով գործազրկությունը կազմում է 6.2 տոկոս: 2011թ. տնտեսական աճն ավելացավ 4.6 տոկոսով, 2012թ. ակնկալվում է, որ այն կկազմի մոտ 4 տոկոս: Արդյունաբերությունը կազմում է աճի ավելի քան կեսը, հատկապես հանքարդյունաբերության ոլորտում, ագրոարդյունաբերության մեջ՝ ավելի պակաս: Արդյունաբերական արտադրանքը նախաձգնաժամային ժամանակահատվածի հետ համեմատած ավելացել է 17.5, իսկ գյուղատնտեսական արտադրանքը՝ 8.1 տոկոսով: 2011թ. արտահանումը կազմել է 1.3մլրդ ԱՄՆ դոլար՝ հիմնականում չուգուն, անմշակ պղինձ, գունավոր մետաղներ, ադամանդներ, օգտակար հանածոներ, սննդամթերքներ, խմիչքներ և էներգիա: Արտահանման մեջ սննդամթերքները և խմիչքները՝ հիմնականում կոնյակ /64 տոկոս/, կազմում են 230մլն ԱՄՆ դոլար: Ներկրումը կազմել է 3.4մլրդ ԱՄՆ դոլար, որից սննդամթերքներն ու խմիչքները՝ 702մլն ԱՄՆ դոլար: Ներկրումների ընդհանուր ծավալի մոտ 21 տոկոսը կազմում են գյուղատնտեսական ապրանքները:

2009թ. հետ համեմատած 2011թ. ԵՄ-ի հետ երկկողմ առևտուրն ավելացել է՝ ԵՄ-ի արտահանումը դեպի Հայաստան ավելացել է 15.7 տոկոսով, իսկ Հայաստանից դեպի ԵՄ արտահանումն ավելացել է 23.3 տոկոսով: Առևտրային հարաբերություններն առավել զարգացնելու նպատակով Հայաստանն զբաղված է ԽՀԱԱԳ-ի շուրջ բնակչություններն սկսելու համար հիմնական հանձնարարականների իրականացման հարցում առաջընթաց գրանցելով: Մասնավորապես, դա վերաբերում է առևտրի տեխնիկական խոչընդոտների, սանիտարական և բուսասանիտարական չափանիշների, մտավոր սեփականության իրավունքների բնագավառներում օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումներին և պարենային անվտանգության ռազմավարության ընդունմանը:

Չնայած վերականգնմանը՝ Հայաստանի տնտեսությունը դեռևս խոցելի է, ինչպես վկայում է ընթացիկ հաշվի մեծ դեֆիցիտը: Թույլ կողմերը ներառում են արտահանման ոչ բազմազան լինելը, արտերկրի շուկաների սահմանափակ հասանելիությունը և մեծ կախվածությունը դրամական փոխանցումներից: Արտահանման կառուցվածքը դեռևս հիմնված է ռետուրսների վրա, որտեղ գերակշռում են ցածր հավելյալ արժեքի բաղադրիչը և չհավասարակշռված կառուցվածքը, որը պահանջում է տնտեսական հիմքի /բազայի/ ընդլայնում և արտահանման կառուցվածքի բազմազանեցում: Արտահանման զարգացման նպատակով ՀՀ կառավարության ձեռնարկած ջանքերի թվում է արդյունաբերական քաղաքականության հաստատումը, որի առաջին տեղում է արտահանումը միտված՝ արտահանման ամենամեծ ներուժ ունեցող ոլորտների սահմանմանը, որպեսզի աջակցություն ցուցաբերվի այդ ոլորտներին:

Բնակչությունը

2011թ. տվյալներով ՀՀ բնակչությունը կազմում է 3.1մլն, որի տարեկան աճը 0.107 տոկոս է: Բնակչության երկու երրորդն ապրում է մայրաքաղաք Երևանում և երեք մերձակա մարզերում՝ Արմավիրում, Արարատում և Կոտայքում:

Մարզ	Բնակչություն	%	Խտություն /կմ ²
Երևան	1,188,877	38.35%	5,196.4
Արմավիր	255,861	8.25%	206.2
Արարատ	252,665	8.15%	126.1
Կոտայք	241,337	7.78%	114.9

Բնակչության մնացած մեկ երրորդն ապրում է ոչ խիտ բնակեցված և լեռնային գյուղական բնակավայրերում, որտեղ ցածր եկամուտներ ապահովող բնատնտեսությունն ու հողագործությունն ապրուստի կարևոր աղբյուր են: ՊԳԿ-ի կողմից Հայաստանը դասակարգված է որպես սովի չափավոր բարձր աստիճանի երկիր՝ 21 տոկոս թերսնվող բնակչությամբ /ՊԳԿ/²: Համաշխարհային տնտեսական անկման, այդ թվում՝ սննդամթերքի գների բարձրացման պատճառով 2008-2011թթ. աղքատության մակարդակը 27.6-ից հասել է 35.8 տոկոսի՝ գյուղական ու քաղաքային բնակավայրերում աղքատության ավել կամ պակաս հավասար աստիճանով:

Գյուղատնտեսությունից զատ եկամտի միակ ամենակարևոր աղբյուրը տղամարդ աշխատողների սեզոնային միգրացիան է դեպի ԱՊՀ այլ երկրներ: Տղամարդկանց միգրացիայի արդյունքում Հայաստանի տնային տնտեսությունների մեկ երրորդը ղեկավարում են կանայք, դրա ավելացման միտումը նկատելի է հատկապես երկրի գյուղական բնակավայրերում: Կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսություններն ամենաաղքատն են: ԱՄՆ-ի կատարած վերլուծությունների համաձայն՝ դրամական փոխանցումները՝ 2004թ. ՀՆԱ-ի 19 տոկոսը /ամենաբարձրը/ ժամանակահատվածից ի վեր կազմում են ՀՆԱ-ի միջինը 16 տոկոսը: Այդ փոխանցումները Հայաստանի համար արտարժույթի ներհոսքի կարևոր աղբյուր են, որոնք միջինը 38 տոկոսով ավելի են, քան ընդհանուր արտահանումը, երկու անգամ ավելի, քան ուղղակի օտարերկրյա ներդրումները, ութ անգամ ավելի, քան բանկային հոսքերը և չորս անգամ ավելի, քան դեպի ՀՀ եկող պաշտոնական պետական ներհոսքերը: Դրանք ֆինանսավորում են ներկրման մոտ 40 տոկոսը: Հայաստանն աշխարհում ամենամեծ դրամական փոխանցումներ ստացող 15 երկրներից մեկն է: Նրա փոխանցումների 89 տոկոսը գալիս է Ռուսաստանից, հիմնականում ԱՄՆ դոլարով և փոխանցվում է բանկային համակարգի միջոցով:

Պետական ֆինանսները

2012թ. ամփոփ պետական բյուջեն կազմված է 938.5 մլրդ դրամի /մոտ 2.3մլրդ ԱՄՆ դոլար/³ եկամուտներից /հարկային եկամուտներ, պետական ու սոցիալական ապահովագրության տուրքեր, պաշտոնական դրամաշնորհներ և այլ եկամուտներ/, 1071.0 մլրդ դրամի ծախսերից, 132.5մլրդ դրամի /մոտ 0.33մլրդ ԱՄՆ դոլար/ պակասուրդից: Համայնքային ամփոփ բյուջեներից երկուսն են 93.7մլրդ դրամի եկամուտները, ներառյալ դրամաշնորհները պետական բյուջեից և 93.7մլրդ դրամի ծախսերը: Տնտեսական անկումից դուրս գալու և բյուջեի առողջացման շնորհիվ 2010թ. բյուջեի պակասուրդը 5 տոկոսից բարելավվել է, իսկ 2012թ. համար նախատեսված է 3.1 տոկոսի բյուջեի պակասուրդ:

2010թ. սկսվեց ԱՄՆ-ի կողմից 404մլն ԱՄՆ դոլարի վարկային եռամյա ծրագիրը, որի առաջին մասնաբաժինը՝ 50.7մլն ԱՄՆ դոլար, տրվել է 2012թ. հունիսին: Այդ վճարված գումարը մոտ 270մլն ԱՄՆ դոլարի է հասցնում ծրագրով նախատեսված՝ Հայաստանի կառավարությանն ու Կենտրոնական բանկին հատկացված ցածր տոկոսադրույքներով միջոցների ամբողջ գումարը: 2009թ. չբացահայտված պայմաններով Ռուսաստանը Հայաստանին է տրամադրել 500մլն ԱՄՆ դոլարի կայունացման վարկ:

² Պարենային անվտանգության և գյուղատնտեսության հարցեր, հունվար-մարտ 2012թ: Պարենի անվտանգության ցուցանիշներ՝ www.foodsec.org/ar:

³ 1 ԱՄՆ դոլարը հավասար է 405 դրամի /2012թ. հոկտեմբեր/

ԵՄ հետ հարաբերությունները

2012թ. սեպտեմբերին ԵՄ-ն հայտարարեց ԵՀՔԳ-ով նախատեսված՝ Հայաստանին 2011-2013թթ. համար 157մլն եվրոյի երկկողմ աջակցություն տրամադրելու մասին, որը նախորդ ժամանակահատվածի համար նախատեսվածի կրկնակին է: Բացի այդ, 2013թ. համար “ավելին ավելիի դիմաց” սկզբունքով հատկացվել է ևս 15մլն եվրո: 2011թ. ԵՀՔԳ-ի Գործողությունների ծրագրով նախատեսված Ֆինանսավորման մասին համաձայնագիրը ներառում է ԵՄ-Հայաստան համաձայնագրի աջակցության շրջանակային ծրագիրը՝ 19.1մլն եվրո /հիմնականում պետական կառավարման մարմինների զարգացման համապարփակ ծրագիր՝ աջակցելու համար ԽՀԱԱԳ-ին/ և աջակցությունը ԵՀՔ-ի Գործողությունների ծրագրի իրականացմանը, 24մլն եվրո՝ ԵՄ ապագա Ասոցացման համաձայնագրի նախապատրաստման համար:

2.2. Գյուղատնտեսությունը և ագրարային ոլորտը

1980-ականների վերջին ծանր երկրաշարժի, Խորհրդային Միության փլուզման և Լեռնային Ղարաբաղի հակամարտության միացյալ հետևանքները կտրուկ կերպով ավելացրեցին աղքատության մակարդակը: Նախկին Խորհրդային Միության պետություններից Հայաստանն իրականացրել է նաև հողի ամենահամապարփակ բարեփոխման ծրագրերից մեկը: Հողային բարեփոխումներն սկսվեցին 1991թ., իսկ 1994թ. կեսին գյուղատնտեսական նշանակության հողերի մեծ մասը սեփականաշնորհված էր: Արդյունքում ստեղծվեցին մոտ 340,000 մասնավոր գյուղացիական տնտեսություններ, սակայն առանց համապատասխան մեքենաների ու տեխնիկայի, ոռոգման ջրի ու գյուղատնտեսական առաջավոր պրակտիկայի: Հողերը բաժանվեցին ավելի քան 1.2մլն կտորների՝ յուրաքանչյուր գյուղացիական տնտեսությանը միջինը երեք առանձին հողակտոր: Յուրաքանչյուր մասնավոր տնտեսություն ունի միջինը 1.4հա հող, այդ թվում՝ 1.06հա վարելահող:

Բարեփոխումներն առաջ բերեցին բազմաթիվ պրոբլեմներ, քանի որ գյուղատնտեսության և մարքեթինգի համակարգերը հարմարեցված էին խոշոր գյուղատնտեսական ձեռնարկությունների չափանիշներին: Տարածաշրջանի բազում այլ երկրների նման կոլեկտիվ ու պետական գյուղատնտեսության անկումից, հողի սեփականաշնորհումից և փոքր գյուղական ագրարկների կազմավորումից հետո տեղի ունեցավ ոչ գյուղատնտեսական աշխատուժի զգալի տոկոսային հարաբերակցության տեղափոխություն դեպի գյուղատնտեսական գործունեություն: Շատ տնային տնտեսությունների համար դա անցումային շրջանից հետո դժվարությունները հաղթահարելու հիմնական ռազմավարությունն էր: Արդյունքում գյուղատնտեսության մեջ երկու անգամ մեծացավ զբաղվածությունը՝ համեմատած բարեփոխումներից առաջ ընկած ժամանակահատվածի հետ:

Գյուղատնտեսությունը Հայաստանում խոշոր տնտեսական ոլորտ է, որը 2010թ. կազմում էր ՀՆԱ-ի 18.6 տոկոսը /2000թ.՝ 25.5 տոկոս/, նրանում 2010թ. զբաղված էր բնակչության 38.6 տոկոսը՝ համեմատած 2000թ. 18.6 տոկոսի հետ: Համախառը գյուղատնտեսական արտադրանքի մեծ մասը՝ 97.2 տոկոս, արտադրվում է գյուղացիական տնտեսություններում, իսկ 2.8 տոկոսը՝ գյուղատնտեսական կազմակերպություններում:

Գյուղատնտեսության աճի տեմպերը անցած տասնամյակի ընթացքում զգալիորեն տատանվել են: Այդուհանդերձ, գյուղատնտեսությունը պահպանել է իր առանցքային նշանակությունը զբաղվածության և գյուղական բնակչության եկամուտների, ինչպես նաև տեղական սննդամթերքի մատակարարման մասով և սննդամթերքի ու խմիչքների արտահանման ընդլայնման աղբյուր է: Գյուղական բնակչության զբաղվածության վերջին ուսումնասիրությունների համաձայն՝ մշակաբույսերի և անասնաբուծական ապրանքների արտադրությունից ու վերամշակումից ստացված տնային տնտեսությունների ամսական ընդհանուր միջին եկամուտը, այդ թվում՝ սեփական սպառման, կազմում է մոտ 45,000 դրամ՝ մոտ 110 ԱՄՆ դոլար /մշակաբույսերի արտադրությունից և վերամշակումից՝ երկու երրորդը, անասնաբուծությունից՝ մեկ երրորդը, այսինքն՝ մշակաբույսերից՝ 68 տոկոս, իսկ անասնաբուծությունից՝ 32 տոկոս/:

Պարարտ հրաբխային հողը թույլ է տալիս մշակել ցորեն ու գարի, ինչպես նաև արածելու խոտ անասունների համար: Ոռոգվող մշակաբույսերից են ծիրանը, դեղձը, սալորը, խնձորը, բալը, ընկույզը, սերկևիլը, թուզը, նուռը, այլ մրգեր և խաղող՝ աշխարհով մեկ հայտնի կոնյակի հումքը: Հայաստանը

սահմանափակ հողային ռեսուրսներ ունի՝ վարելահողերը /մեկ անձին ընկնող հա/ ըստ ՊԳԿ-ի⁴ տվյալների 2009թ. կազմում էին ընդամենը 0.15հա՝ վարելահողերը կազմում են ամբողջ երկրի հողերի ընդամենը 16.8 տոկոսը: Գյուղատնտեսական արտադրությունը հիմնականում հակված է դեպի մշակաբույսեր, որոնք 2006թ. կազմում էին համախառը գյուղատնտեսական արտադրանքի 64 տոկոսը: Շատ մշակաբույսեր ռոտզում են պահանջում: Այդուհանդերձ, խորհրդային ժամանակվա էժան էներգիան թույլ էր տալիս կառուցել էլեկտրաէներգիայով աշխատող ռոտզման համակարգեր, հետևաբար հատվածային հողօգտագործման հետ միասին 1990-ականների ճգնաժամը բերեց ռոտզման ցանցի օգտագործման քայքայման:

Գյուղատնտեսական արտադրության արդյունավետ կազմակերպումը լրջորեն խոչընդոտվում է հողային բարեփոխումներից հետո ստեղծված տնտեսությունների փոքր չափերի ու գյուղատնտեսական վատ պրակտիկայի պատճառով: Հողի օգտագործման դինամիկան պրոբլեմի լուծման բանալին է և ցուցիչը: 2010թ. մշակաբույսերի համար նախատեսված ընդհանուր գյուղատնտեսական տարածքը 2.83մ հա էր՝ համեմատած 2009թ. 3.0մ հա-ի հետ: Ավելացել են միայն անասնակերերի մշակաբույսերը՝ 2009թ. հետ համեմատած՝ 2 տոկոսով պակաս 2010թ.:

Հողատիրությունը և օգտագործումը

Հողի սեփականաշնորհման իրավական հիմքը 1991թ. ընդունված Հողային օրենսգիրքը և 'Գյուղատնտեսական ու գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին' օրենքն էին: Այդ իրավական ակտերով նախատեսված էին հողի սեփականության բազմաթիվ տեսակների կանոններ՝ պետական, մասնավոր ու կոլեկտիվ տնտեսություններ: Վարելահողերն ու բազմամյա բույսերի տնկադաշտերը մասնավորեցվեցին, իսկ արոտավայրերն ու խոտհարքները մնացին պետության և համայնքների սեփականություն, որոնք կարելի էր վարձակալել կամ երկարաժամկետ օգտագործման համար տալ առանց վարձավճարի: Դրանցից մի քանիսը հետագայում դրվեցին աճուրդի:

2012թ. հուլիսի 1-ի դրությամբ մասնավոր հատվածը, այսինքն՝ ֆերմերները, 340,000 մասնավոր ֆերմերային տնտեսությունները և առևտրային սուբյեկտները գյուղատնտեսական հողերի 22.1 տոկոսի տերն են, 47 տոկոսը համայնքային սեփականություն է, իսկ 30.2 տոկոսը պատկանում է պետությանը: Մասնավոր հատվածի բաժինը հատկապես մեծ է վարելահողերի /71.8 տոկոս/ և բազմամյա բույսերի տնկադաշտերի /90.4 տոկոս/ մեջ:

Պետական վիճակագրական տվյալների համաձայն՝ հողի 32 տոկոսը չի օգտագործվում հետևյալ պատճառներով՝ դրանք մոտ են գտնվում Հայաստան-Ադրբեջան սահմանի վտանգավոր կամ ականապատված գոտիներին, որոշ վարելահողեր հեռու են բնակավայրերից կամ գյուղատնտեսությամբ զբաղվելու համար չափազանց փոքր են: Արդյունքում վարելահողերի մշակումը գտնվում է ցածր մակարդակի վրա՝ 2010թ. օգտագործվել է ընդամենը 63 տոկոսը, այսինքն՝ վարելահողերի 0.17մ հա /ամբողջի մոտ 37 տոկոսը/ 2010թ. չի մշակվել:

⁴ Ժամանակավոր մշակաբույսերի համար հատկացված հողեր /երկու անգամ հավաքած բերքի հողերը մեկ անգամ են հաշվում/, ժամանակավոր մարգագետիններ խոտ հնձելու կամ արածելու համար, վաճառքի համար նախատեսված բանջարեղեն աճեցնելու բանջարանոցի և բանջարանոցի համար նախատեսված հողեր և ժամանակավորապես խոտան հողեր: Փոփոխական մշակման արդյունքում լքված հողերը բացառվում են:

Գյուղատնտեսական հողերի կառուցվածքն ըստ հողատեսակների և սեփականության /2012թ. հուլիսի 1-ի դրությամբ/⁵

	Հողատեսակ	Ընդհանուր	Հողի անվանումը, 000-ական հա				
			Գյուղացիական տնտեսություններ	Իրավաբանական անձինք	Համայնքային	Պետական	Օտարերկրյա
1	Վարելահող	448.5	322.2	2.4	109.8	12.8	0.1
		100	71.8%	0.5%	24.5%	2.9%	0.0%
2	Բազմամյա մշակաբույսեր	33.4	30.2	1.1	2.1	0.01	0.002
		100.0	90.4%	3.3%	6.3%	0.0%	0.0%
3	Այդ թվում՝ պտղատու այգիներ	19.2	17.2	0.5	1.5	0.0	0.0
		100.0	89.6%	2.6%	7.8%	0.0%	0.0%
4	Խաղողի այգիներ	14.2	13.0	0.6	0.6	0.0	0.0
		100.0	91.5%	4.2%	4.2%	0.0%	0.0%
5	Խոտհարքներ	121.6	56.3	0.3	34.5	30.5	0.0
		100.0	46.3%	0.2%	28.4%	25.1%	0.0%
6	Արոտավայրեր	1056.3	16.7	11.5	571.6	456.4	0.1
		100.0	1.6%	1.1%	54.1%	43.2%	0.0%
7	Այլ	392.6	9.1	3.1	246.2	134.2	0.04
		100.0	2.3%	0.8%	62.7%	34.2%	0.0%
8	Ընդհանուր	2052.4	435.5	18.4	964.2	633.9	0.2
		100.0	21.2%	0.9%	47.0%	30.9%	0.01%

Աղբյուրը՝ Պետական կադաստր

2012թ. հուլիսի 1-ի դրությամբ ոռոգվող հողերի ընդհանուր տարածքը կազմում էր 154,400հա, որը 1990-ականների հետ համեմատած կտրուկ անկում է, երբ ոռոգվող հողերի ընդհանուր տարածքը կազմում էր 275,000հա: Այդ անկման պատճառները ոռոգման ենթակառուցվածքների վատ պահպանումն ու խարխլումն են, պոմպակայանի չափազործումը էլեկտրաէներգիայի բարձր գների պատճառով, գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու համար շրջանառու միջոցների բացակայությունը և այլն: Նախկինում ոռոգվող հողերի 56 տոկոսը ներկայումս չի ոռոգվում կամ մշակվում:

Այս համատեքստում հիմնական հարցերը աղակալումն ու ոչ պատշաճ ոռոգման պատճառով հողի ալկալիզացիան են, կրծողների և հիվանդությունների դեմ պայքարը, ցանքաշրջանառության

⁵ http://www.cadastre.am/storage/files/pages/pg_5039182166_HanrBal_22.pdf

բացակայությունը, հողօգտագործման կազմակերպման ժամանակ սննդարար նյութերի շրջանառության պատշաճ մեթոդներն ու լավագույն գյուղատնտեսական պրակտիկան: Հողերի քայքայման, մշակման համար միջոցների բացակայության, անարդյունավետ արտադրական համակարգի, ոռոգման անբավարարության, դեպի դուրս միգրացիայի և այլ պատճառների արդյունքում հսկայական թվով հողեր չեն օգտագործվում կամ թերի են օգտագործվում, ուստի չափազանց կարևոր է միջազգային առաջավոր փորձի հետ մեկտեղ բարձրացնել հողօգտագործման աստիճանն ու արդյունավետությունը: Այս համատեքստում հողամասերի մեծացումը ռազմավարական նպատակ է, որին պետք է հասնել, իսկ դա անելու համար հարկավոր է մշակել ու իրականացնել բազմաթիվ համատեղ ջանքեր, ներառյալ օրենսդրական միջոցներ, պետական աջակցություն, ոռոգման համակարգի վերականգնում, արտադրության բազմազանեցում, համագործակցության զարգացում և այլ ծրագրեր:

Զբաղվածությունը գյուղատնտեսության մեջ

Գյուղատնտեսությունը շարունակում է մնալ աշխատանք կլանող ամենամեծ հատվածը: Պաշտոնական տվյալների համաձայն երկրում աշխատանք ունեցող բնակչության մոտ 45 տոկոսը զբաղված է գյուղատնտեսության մեջ: Փաստորեն այդ թիվը կարող է ավելի ցածր լինել, քանի որ հաշվարկը հիմնված է ավելի շուտ հողի սեփականության, քան փաստացի զբաղվածության վրա: Այլ ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ այս թիվը կարող է մոտ լինել լրիվ դրույքով աշխատող մարդկանց 24 տոկոսին:⁶

Գյուղատնտեսական արտադրությունն ու միտումները

ՀՀ 915 համայնքներից 866-ը գյուղական համայնքներ են: Ներկայումս մասնավոր հատվածն ապահովում է Հայաստանի համախառը գյուղատնտեսական արտադրանքի ամենամեծ բաժինը՝ 94 տոկոս: Գյուղական վայրերում ապրող բնակչության եկամուտների զգալի մասն ստեղծվում է գյուղատնտեսական արտադրության և գյուղատնտեսության մեջ վճարովի աշխատանքի միջոցով:

Պարենի ազգային հավասարակշռությունից ստացված տվյալների համաձայն սննդամթերքի ամենակարևոր տեսակների ինքնաբավության աստիճանն ըստ դրանց էներգետիկ արժեքի հաշվարկման կազմում է 58-60 տոկոս: Երկրում ինքնաբավության բարձր մակարդակն ապահովվում է կարտոֆիլի, հացահատիկային մշակաբույսերի զանազան տեսակների, սեխի, մրգերի, բանջարեղենի, խաղողի, կաթի, ոչխարի մսի, ձվի շնորհիվ, մինչդեռ ցորենի, ընդեղենի, շաքարի, ձեթի, թռչնամսի և խոզի մասի պարագայում ինքնաբավության մակարդակը դեռևս ցածր է:

Հայաստանը մեծապես կախված է հացահատիկի ներկրումից՝ 2011թ. դրա ներկրումը կազմել է 437,472 տոննա, որը 2 տոկոսով պակաս է 2007-2010թթ. միջինից: 2012թ. առաջին երեք ամսվա ընթացքում հացահատիկի ներկրումը կազմել է 101,000 տոննա, որը հավասար է 2007-2011թթ. մակարդակին, սակայն հարաբերականորեն ավելի ցածր արժեքով: Գյուղատնտեսության նախարարության 2011թ. ամենամյա զեկույցում նշված է, որ բոլոր հիմնական մշակաբույսերի արտադրությունը գերազանցել է 2010թ. մակարդակը, որը գյուղատնտեսության համար չափազանց անբարենպաստ տարի էր: Այսպիսով, Հայաստանը խոցելի է մնում միջազգային շուկայի դինամիկայի նկատմամբ, իսկ սննդամթերքի համաշխարհային գների նախանշված բարձրացման դեպքում պարենային անվտանգության հարցն ավելի ու ավելի տեղին ու կարևոր է դառնում:

⁶ Armenia Sustainable Development Program, 2008, Para 340

Հիմնական մշակարույսերի արտադրությունը 2006-2011թթ.

Մշակարույս	2006-ից	2010	2011	2011	2011
	2010			աճ	աճ
			'000 տոննա		
			տոկոս		
Հացահատիկ	356	326	441	35	24
Կարտոֆիլ	570	482	557	16	-2
Բանջարեղեն	796	708	787	11	-1
Սեխ	174	133	181	37	4
Մրգեր և հատապտուղներ	265	129	239	86	-10
Խաղող	208	223	230	3	11

Ամենամեծ ու ամենաարժեքավոր արտահանվող ապրանքը դեռևս կոնյակն է՝ 2012թ. հունվար-փետրվար ամիսներին արտադրվել է 2.53մ լիտր, որը 43 տոկոսով ավելին է, քան 2011թ. նույն ժամանակահատվածում արտադրվածը: Արտահանվող այլ ապրանքներից են թարմ և պահածոյացված մրգերն ու բանջարեղենը, այդ թվում՝ հյութեր: Վերջին խմբի ապրանքների արտահանումը 2003-2011թթ. զգալիորեն ավելացել է:

Վերամշակված սննդամթերքներ	Արտահանում 2010	Արտահանում 2003-2010	Աճ
Պահածոյացված սննդամթերքներ	\$7.4 միլիոն	\$61.5 միլիոն	0.2%
Հյութեր	\$3.4 միլիոն	\$15.7 միլիոն	19.9%

Աղբյուրը՝ ՄԱԿ-ի Առևտրի կոմիտե

Ընտանի անասունները

Լանդշաֆտը, կլիման և բնական պայմանները նպաստավոր են անասնաբուծության համար: Անասնաբուծությունը, խոզաբուծությունը, թռչնաբուծությունը և ոչխարաբուծությունը անասնաբուծության ամենազարգացած ճյուղերն են: Անասնաբուծությունը մեծապես տուժել է անցյալի շրջանում: Անասնակերի համար նախատեսված տարածքները կրճատվել են, իսկ խտացված կերի արտադրությունը 1990թ. ի վեր դադարել է: Խորհրդային կենտրոնացված համակարգն իր մեծ տնտեսություններով և անասնակերի արտադրության հնարավորություններով փոխարինվեց փոքր տնտեսություններով, որոնցից յուրաքանչյուրն ունի 1-2 կով, մի քանի ոչխար կամ խոզ: 2012թ. հունվարի դրությամբ անասունների ընդհանուր քանակը կազմում էր 599,243, որոնց 98.7 տոկոսը պահվում է փոքր ընտանեկան տնտեսություններում:

1997թ. 1990թ. հետ համեմատությամբ աճան հավերի, ինչպես նաև խոզերի թիվը նվազել է 4 անգամ, ոչխարինը՝ 3, իսկ խոշոր եղջերավորներիը՝ համարյա 2 անգամ: Այդ նույն ժամանակահատվածում մսի արտադրության ծավալները նվազել են ավելի քան երկու անգամ, թռչնամսինը՝ 10 անգամ, կաթինը՝ մոտ 40 տոկոսով, իսկ ձվինը՝ համարյա 3.4 անգամ: 2003-2007թթ. շրջադարձային կետ են եղել ընտանի

անասունների հատվածի համար, երբ անասունների գլխաքանակն զգալիորեն ավելացել է, և գրանցվել է անասնաբուծության արտադրության ծավալների մեծացում: Այդ ժամանակվանից սկսած այդ ոլորտում դանդաղ, սակայն կայուն աճ կա՝ գլխաքանակն ու արտադրողականությունն ավելանում են, սակայն հիմնական ընտանի անասուններից ստացվող տեղական արտադրանքն ամբողջությամբ չի բավարարում ինքնաբավության պահանջները: Մտորն բերվող աղյուսակում ներկայացված են 2008 և 2010թթ. հիմնական ընտանի անասուններից ստացվող արտադրության աստիճանը և ինքնաբավությունը:

	2008 արտադրություն, 000 տոննա	2008 ինքնաբավության հարաբերակցությ ունը, %	2010արտադրություն, 000 տոննա	2010 ինքնաբավության հարաբերակցությունը, %
Զու	31.7	99.7	38.6	99.2
Կաթ /առանց կարագի/	661.9	97.6	600.9	97.2
Տավարի միս	49.3	72.6	48.0	84.8
Խոզ	7.5	31.4	7.9	39.9
Ոչխար	7.4	100	8.2	100
Ընտանի թռչուններ	6.7	14	5.4	12.3

Կաթ: 2009թ. արտադրվել է մոտավորապես 653,000 տոննա կաթ՝ գումարած 17,459 տոննա պանիր և 2,853 տոննա պաղպաղակ: Հիմնական կաթնամթերքների առումով շուկայում որևէ ընկերություն չի գերիշխում: Վերամշակման համար կա կաթի մեծ պահանջարկ: Կաթի արտադրության սեզոնայնությունը և գների անկայունությունը կաշկանդում են պանրի արտադրության աճը:

Անասնաբուծություն: Ամենազարգացած ոլորտն է՝ 600,000 գլխաքանակով և ընդհանուր արտադրության մեջ ավելի քան 25 տոկոս մասով: Խոշոր եղջերավոր անասունների որակը գենետիկական բարելավման բացակայության պատճառով /արհեստական բեղմնավորում/ անկում է ապրել, որի արդյունքում տարեկան արտադրվում է ընդամենը 2,206կգ կաթ /2003-2011թթ. տվյալներ/: ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջանքերը տեղական ցեղատեսակների գենետիկական բարելավման և բարձր ցեղատեսակի ու արդյունավետության անասունների ներկրման ուղղությամբ, որոնք հարմարեցվել են Հայաստանի պայմաններին, դրական արդյունքներ են տվել, և դա հարկավոր է շարունակել: Արտադրողականության բարձրացման լուրջ խոչընդոտ են անասնակերի տեղական սահմանափակ արտադրությունը, խտացված կերի արտադրության բացակայությունը, արոտավայրերի կառավարման պրոբլեմները, անհամապատասխան անասնաբուժական ծառայությունները, հիվանդությունների կառավարումը և, ընդհանրապես, վատ նյութատեխնիկական ապահովումը:

Ոչխարաբուծությունը ևս մեկ կարևոր ոլորտ է, որի ներուժը կարող է կրկնապատկվել՝ ներկայիս 560,000 գլխաքանակից 2020թ. հասնելով մինչև 1.1 միլիոնի: Վերջերս Իրան արտահանած ապրանքներն ավելի մեծացրեցին ոլորտի շահութաբերությունը և աճը, սակայն ոլորտի զարգացումը պետք է այնպես կատարվի, որպեսզի կարողանան խուսափել արոտավայրերի գերարածացումից և հողի քայքայումից, որոնք վտանգում են արոտավայրերի կայունությունն ու կենսաբազմազանությունը:

Թռչնաբուծությունն ավանդաբար եղել է ամենախնտենսիվ կերպով զարգացող ոլորտներից մեկը: Ներկայումս 6.8 միլիոն գլխաքանակն ապահովում է 100 տոկոս ինքնաբավություն ձվի արտադրության

մեջ, իսկ թոշնամսի միայն 12.3 տոկոսը, որը կաշկանդված է ներկրվող կերի բարձր արժեքի պատճառով: Արտադրության մեջ գերիշխում են մի քանի խոշոր ընկերություններ, որոնք ապահովում են ընդհանուր արտադրանքի 66 տոկոսը, իսկ մնացածն ապահովում են փոքր ընտանեկան տնտեսությունները: Հետագա ընդլայնումը կախված կլինի տեղական կերի առկայությունից:

Կաթնատու այծերի բուծումը, որն անասնաբուծության լուսանցքային ճյուղ էր, վերջին տասը տարվա ընթացքում զարգացել է գենետիկական բարելավման շնորհիվ՝ հիմնականում արհեստական բեղմնավորման և անասնակերի բազայի միջոցով: Կաթնատվությունը կրկնապատկվել է՝ օրական 0.7 լիտրից հասնելով մինչև 1.5 լիտրի: Դա հնարավորություններ է ստեղծել փոքր ու բարձրարժեք պանրի արտադրության հարմարությունների համար՝ արտահանման լավ ներուժով:

Առևտրային ակվակուլտուրան /ձկնաբուծություն/ նոր և ակտիվորեն զարգացող ոլորտ է: Մասնավոր ներդրումների շնորհիվ ստեղծվել են մի շարք մեծ ու շահութաբեր ձկնային տնտեսություններ: Արժեքավոր ձուկն ու խավիարն արտահանվում են Ռուսաստան, Ուկրաինա, Վրաստան, Ղազախստան, ԱՄՆ, Կանադա և ԱՄԷ: Այդ ընկերություններից մի քանիսն անցում են կատարել դեպի ուղղահայաց ինտեգրում և սկսել են կերի արտադրությունն ու ձկնավերամշակման գործարաններ են կառուցում: Այս բիզնեսի զարգացումը կաշկանդվում է բնապահպանական մտահոգություններով, որոնք վերաբերում են Արարատյան դաշտավայրի ջրային պաշարների ոչ ճիշտ օգտագործմանը, որտեղ տեղակայված են շատ ձկնաբուծարաններ: Ձկնաբուծարանների թվի ավելացումը զուգորդվում է Արարատյան դաշտավայրից դեպի նախալեռնային ու անգամ լեռնային շրջաններ դրանց գտնվելու վայրերի ընդլայնման հետ: Ձկնաբուծարանաբերության բնագավառում կոռուպտիվների ստեղծումը նշանակալից գործ է, որոնց միջոցով ձկնաբուծարանները միասին գնում են մանրաձկնիկներ, խտացված կեր կամ ձկան շուկայի ապրանքներ:

Անասնաբուծության ոլորտը կանգնած է լուրջ մարտահրավերների առջև, գործրինակ՝ արոտավայրերի անհուսալի կառավարում, անասունների հիվանդություններ, վերամշակման ու մարքեթինգի հետ կապված դժվարություններ, ցածր արտադրողականություն: Ի լրումն դրա, կաթի մատակարարման գործում առկա են մեծ տատանումներ, քանի որ կաթի մեծ մասն արտադրվում է ամռան ամիսներին, ամառվա խոտի ռեժիմով, իսկ ձմռանը և զարնանը արտադրություն համարյա չկա: Այդ պրոբլեմները սահմանափակում են տեղական աճող պահանջարկից բխող հնարավորությունների շահագործման հզորությունները: Ներկրված միսն այժմ կազմում է երկրում սպառվող մսի մեծ մասը՝ անասնաբուծության ոլորտի ցածր արտադրողականության և մսի ու կաթի անկայուն մատակարարման պատճառով:

Անասունների առողջության և հիվանդությունների վերահսկման հարցերը պրոբլեմներ են, որովհետև անասունները տեղավորված են կամ պահվում են փոքր քանակով, անասնակերի հետ մեկտեղ, որը հանգեցնում է վարակիչ հիվանդությունների: Այդ դժվարություններն արտահայտվում են բազմաթիվ հիվանդությունների, այդ թվում՝ կենդանիներից մարդկանց փոխանցվող հիվանդությունների ձևով, որոնք ակնհայտ են անասնաբուծության զանազան մասերում:

Թարմ մրգեր ու բանջարեղեն

Մա խոշոր ոլորտ է, սակայն մրգերի ու բանջարեղենի մշակման երկու երրորդը կենտրոնացած է Երևանի մոտ գտնվող Արարատյան դաշտավայրում: Արտադրանքն օգտագործվում է թարմ վիճակում տեղական

շուկայում սպառման համար, իսկ պահածոների բազմաթիվ գործարաններում որոշ արտադրանքներ, որոնք վերամշակվում են, հիմնականում մրգեր, արտահանվում է: Ծիրանը, խաղողը, բալը, դեղձը և սալորը հիմնական արտահանվող բանջարեղենների՝ կարտոֆիլի ու լոլիկի հետ մեկտեղ արտահանվող հիմնական մրգերն են: Մրգերի ու բանջարեղենի արտահանման հիմնական շուկան Ռուսաստանն է՝ 90 տոկոս: Մյուս շուկաներն են Վրաստանը, Իրաքը, Ղազախստանը, Ուկրաինան և Բելառուսը:

2011թ. Հայաստանից արտահանված գյուղատնտեսական արտադրանքը կազմել է 230մլն ԱՄՆ դոլար, որն ընդհանուր արտահանման մոտ 18 տոկոսն է: Բանջարեղենների, այդ թվում մրգերի արտահանումը կազմել է 21.6 մլն ԱՄՆ դոլար: Արժեքային արտահայտությամբ ամենամեծ բաժինը կազմում են խաղողը /ավելի քան 50 տոկոս/, ծիրանը, դեղձը և բալը: Ծավալի առումով արտահանման առաջատարներն են ծիրանը, խաղողը և կարտոֆիլը: Հայաստանում կա մրգի ու բանջարեղենի մոտ երկու տասնյակ արտահանող:

Մշակաբույս	Տոննա		
	Արտահանում 2009	Արտահանում 2010	Արտահանում 2011
Ծիրան	12,096	2,500	7,000
Խաղող	3,700	6,200	6,339

Աղբյուրը՝ ՄԱԿ-ի Առևտրի կոմիտե

Ոլորտի կատարողականի վրա ազդող թույլ կողմերից են բաժանված հողակտորները, սահմանափակ արտադրանքը, արտադրության հնացած եղանակները, հետբերքահավաքային տեխնոլոգիան ու միջոցները, ենթակառուցվածքների բացակայությունը և մարքեթինգի անարդյունավետ համակարգը: Ըստ որոշ գնահատականների՝ շուտ փչացող արտադրանքի 30 տոկոսը կորչում է ընդհատվող սառնարանային շղթայի ու հետբերքահավաքային կառավարման պատճառով: Արտադրության ծավալները չափից ավելի են տատանվում և ազդում են շուկաներին սպասարկելու՝ արտահանողների կարողությունների վրա:

Բացի կլիմայական պայմաններից, բազմաթիվ այլ գործոններ, ներառյալ երկարաժամկետ պայմանագրերի բացակայությունը և կարճաժամկետ ֆինանսավորումը նպաստում են լոգիստիկայի և ապրանքի վաճառքի ծառայությունների ենթակառուցվածքում ներդրումներ կատարելու՝ արտահանողների կարողությունների վրա ազդող սցենարի իրականացմանը: Սեզոնայնությունը մեկ այլ կարևոր գործոն է, որը նույնպես ազդում է գների, լոգիստիկայի և ապրանքի վաճառքի ծառայությունների առկայության վրա: Մրցակցությունը մեծացնելու և բացի ռուսական շուկայից այլ շուկաներ ևս մտնելն ապահովելու նպատակով պետք է հաշվի առնվեն համապատասխանությունը միջազգային չափանիշներին և սանիտարական ու բուսասանիտարական վերահսկողական միջոցները:

Գինիներ և ոգելից խմիչքներ

Գինիների և կոնյակի արտադրությունը Հայաստանում երկար պատմություն ունի: Ներկայումս Պեռնո Ռիշար ընկերությանը պատկանող՝ կոնյակ արտադրող առաջին ձեռնարկությունն ստեղծվել է 1887թ.: Խորհրդային ժամանակաշրջանում գինեգործական մի քանի մեծ ձեռնարկություններ արտադրում էին զգալի քանակությամբ գինի, շամպայնի նման փրփրուն գինի և կոնյակ: Այդ ժամանակվանից ի վեր խաղողի շատ այգիներ են ոչնչացվել կամ փոխարինվել ցորենով, որպեսզի լուծվեն պարենային անվտանգության խնդիրները: Վերջին տասը տարվա ընթացքում խաղողի այգիների, գինու և կոնյակի գործարանների թիվը, արտահանման հետ մեկտեղ, սկսել է ավելանալ:

Ալկոհոլը, հիմնականում կոնյակ, հանքարդյունաբերության արտադրանքից հետո Հայաստանից կատարվող արտահանումների ցանկում հետևողականորեն գրավում է երկրորդ տեղը: Ներկայումս կոնյակը կազմում է ապրանքների այդ խմբի ընդհանուր կառուցվածքի 92-93 տոկոսը, իսկ գինին՝ ընդամենը 7-8 տոկոս: 2008թ. ձգնաժամից հետո ալկոհոլային խմիչքների ծավալն զգալիորեն նվազել է, թեպետ 2011-2012թթ. դրանց արտադրությունն ու արտահանումն ընդլայնվել են: Հայկական կոնյակի և գինու հիմնական շուկան ԱՊՀ շուկան է՝ արտահանվող կոնյակի 90 և գինու 60-65 տոկոսը:

	Արտահանում 2010	Արտահանում 2003-2010	Տարեկան աճ 2003-2010
Կոնյակ	\$95.2m	\$685m	7.6%
Գինի	\$2.9m	\$10.7m	34.4%

Աղբյուրը՝ ՄԱԿ-ի Առևտրի կոմիտե

Վերջին քսան տարվա ընթացքում նկատվել է կոնյակի որակի անկում: Համաշխարհային ֆինանսական ճգնաժամի պատճառով արտադրողներից մի քանիսը կորցրել են արտահանման շուկաները, ոչնչացվել են խաղողի այգիներ: Այդուհանդերձ, դեպի Ռուսաստան արտահանումը պահպանվել է հարաբերականորեն ցածր գնի շնորհիվ: Թեպետ հայկական կոնյակի որակը դեռևս լավ համբավ ունի, գինու որակը միշտ չէ, որ համապատասխանում է միջազգային չափանիշներին: Չնայած այն բանին, որ վերջին տասը տարվա ընթացքում զգալի ջանքեր են գործադրվել պրոբլեմը լուծելու ուղղությամբ, այն դեռևս մրցունակ չէ:

Կոնյակի արտադրությունը 2010թ. համեմատությամբ 2011թ. ավելացել է 21.5 տոկոսով՝ հիմնականում ձգնաժամից հետո ռուսական շուկայի վերականգնման, այլ ոչ թե արտադրական գործընթացում մեծ փոփոխությունների շնորհիվ: Որակի բարձրացման հարցը պետք է ուսումնասիրվի վերջերս ստեղծված Հայ կոնյակագործների միության կողմից, որը ծրագրում է 2013թ. ստեղծել իր անդամների արտադրանքի որակի ստուգման լաբորատորիաներ և որակի հավաստագրեր շնորհել:

ՀՀ կառավարությունը ծրագրում է զգալիորեն ավելացնել կոնյակի արտահանման ծավալները՝ մինչև 2015թ. տարեկան մինչև 150-180մլն ԱՄՆ դոլար, իսկ մինչև 2020թ.՝ 250-300մլն ԱՄՆ դոլար: Այդ ծրագրերի առումով կա որոշակի հոռետեսություն, քանի որ ծրագրված աճը չի պաշտպանվում համապատասխան հումքային բազայով: Այդուհանդերձ կառավարությունը որոշակի քայլեր է ձեռնարկում կոնյակի արտահանումը բազմազանեցնելու ուղղությամբ: Ծրագիրը նաև ենթադրում է դեպի Ռուսաստան կատարվող արտահանման բաժնի կրճատում՝ ներկայիս 90-ից 65 տոկոս 2020թ.⁷

Գյուղատնտեսության մեջ արտադրական միջոցների օգտագործումը

Գյուղատնտեսության մեջ արտադրական միջոցների օգտագործումը հողի սեփականաշնորհումից հետո մեծապես նվազել է տնտեսական հիմնախնդիրների և կարիքների պատճառով: Քիմիկատների օգտագործման վերլուծությունը /ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հարցերի հանձնաժողով/ ցույց է տվել, որ 2000թ. օգտագործվել է ընդամենը 40,000-50,000 տոննա հանքային պարարտանյութ՝ խորհրդային ժամանակների մակարդակից 3 անգամ պակաս: Թունաքիմիկատների օգտագործումը նույնպես կտրուկ կերպով նվազել է՝ 1988թ. 6,295 տոննայից մինչև 411 տոննա: Գյուղատնտեսության նախարարությունից ստացված վերջին տվյալների համաձայն թունաքիմիկատների ներկրումն ավելացել է՝ ի պատասխան

⁷ Source: <http://vestnikkavkaza.net/analysis/economy/27302.html>

Հայաստանում դրանց վերաբերող օրենքների կատարման: 2003թ. թունաքիմիկատների ընդհանուր ներկրումը կազմել էր 206 տոննա, իսկ 2008թ.՝ 518 տոննա: 2012թ. հանքային պարարտանյութերի ներկրումը կազմել է 35,000 տոննա, որից 25,000-ը ներկրվել է պետական բյուջեից գնի մասնակի սուբսիդավորման ծրագրով: Գյուղատնտեսական քիմիկատների փաստացի օգտագործման մոնիտորինգ կամ գնահատում չկա, իսկ դա վտանգավոր է չարաշահման կամ վատ պրակտիկայի առումով:

Պարարտանյութերն ու քիմիկատները համարյա 100 տոկոսով ներկրվում են: Դրանց շուկան բնութագրվում է մենաշնորհի մեծ աստիճանով, որտեղ ամենախոշոր ներկրողին, ըստ որոշ գնահատականների, պատկանում է թունաքիմիկատների շուկայի 80-90 տոկոսը: Միաժամանակ ֆերմերները հաճախ են բողոքում ներկրված միջոցների որակից: Պարարտանյութերի տեղական արտադրության վերսկսումն առաջիկա տարիների ընթացքում իրատեսական ծրագիր չէ: Հարկ կա բարելավել պարարտանյութերի և քիմիկատների օգտագործումը դրանց մատչելիության, պատշաճ կառավարման և անվտանգ օգտագործման առումով, քանզի դա անմիջականորեն վերաբերում է նաև սննդամթերքների անվտանգությանը:

Բնապահպանական հարցեր

Բնապահպանական հիմնական խնդիրներն են զանգվածային անտառահատումները, Հարավային Կովկասում խմելու ջրի ամենամեծ ամբարի՝ Սևանա լճի մակարդակը, հողերի քայքայումը և հողի էրոզիան, թափոնների կառավարումը, այդ թվում՝ թունաքիմիկատների, արդյունաբերական և հնացած թափոնների նախկինից մնացած կուտակումները, ինչպես նաև կենսաբազմազանության կորուստը և բնական պաշարների անվերահսկելի օգտագործումն ու գերշահագործումը:

Հայաստանում գյուղատնտեսության վերաբերյալ բնապահպանական մտահոգությունները լուսաբանված են 2000թ. Հայաստանի բնապահպանական կատարողականի վերաբերյալ տեսության մեջ, որը պատրաստվել էր ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հարցերի հանձնաժողովի կողմից և նպատակ ուներ գնահատելու տարբեր ոլորտներ շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցության տեսակետից, ինչպես նաև պարզելու բարելավման ուղիները: Բնապահպանական կազմակերպությունների ճնշման ներքո և մի քանի գլոբալ ու տարածաշրջանային բնապահպանական պայմանագրերով ու կոնվենցիաներով նախատեսված՝ ՀՀ պարտավորությունների շրջանակում սկսել են ավելի շատ ուշադրություն դարձնել տնտեսության մեջ բնապահպանական մտահոգությունների ընդգրկմանը, ինչպիսիք են նախագծերի, քաղաքականության և ռազմավարության համար բնապահպանական ազդեցության գնահատման ընթացակարգերը, բնապահպանական վճարներ մտցնելը, բնական պաշարների օգտագործման համար վճարների սակագները և այլն: Բնապահպանական գործողությունների ծրագրերը՝ Ազգային բնապահպանական գործողությունների 1-ին և 2-րդ ծրագրերը, Սևանա լճի գործողությունների ծրագիրը, Անապատացման դեմ պայքարի ազգային գործողությունների ծրագիրը բնապահպանական հիմնախնդիրների և կայուն զարգացման վերաբերյալ հղումներ են:

Կլիմայի փոփոխությունները

Հաշվարկները ցույց են տալիս, որ Հայաստանում օդի միջին ջերմաստիճանը բարձրանալու է 1.7 աստիճանով, իսկ մինչև 2100թ. տեղումները կնվազեն 10 տոկոսով: Ակնկալվում է անապատացման գործընթացների խորացում: Հայաստանի նման երկրում, որտեղ գյուղատնտեսության հզոր ոլորտը կարևոր ներդրում ունի ՀՆԱ-ում, կլիմայի փոփոխությունները գյուղատնտեսության վրա կարող են լուրջ

ազդեցություն ունենալ ամբողջ տնտեսության վրա: Հայաստանում բույսերի մշակման արդյունավետությունը կարող է նվազել 8-14 տոկոսով, արտավայրերը և անասնաբուծությունը մեծ վնաս կկրեն: Անասունների գլխաքանակը կարող է 30 տոկոսով անկում ապրել, իսկ արտադրությունը կնվազի 28-30 տոկոսով:

Ակնկալվում է, որ կլիմայի փոփոխությունները Հայաստանում մշակաբույսերի վրա կունենան երեք հիմնական ազդեցություն: Առաջինը, յուրաքանչյուր մշակաբույս աճեցնելու համար համապատասխան գոտին, ամենայն հավանականությամբ, կտեղաշարժվի դեպի վեր՝ մինչև 2030թ. 100մ բարձրության վրա, իսկ մինչև 2100թ.՝ 200-400 մ-ի վրա: Երկրորդը, բարձր ջերմաստիճանի համակցումը, ավելի բարձր գոլորշիացման և ավելի քիչ տեղումների մակարդակը կհանգեցնեն շատ մշակաբույսերի արդյունավետության նվազեցման: Երրորդը, փոփոխվող եղանակը կարող է վնաս հասցնել մշակաբույսերին և գյուղատնտեսական նշանակության հողերին:

Կլիմայի փոփոխությունների մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայով նախատեսված հանձնառությունների սահմաններում ՀՀ կառավարությունը մշակել է Ջերմոցային գազերի արտանետումների սահմանափակման ազգային ռազմավարություն: Գյուղատնտեսության մեջ հիմնական անմիջական արտանետումներն առաջանում են գյուղատնտեսական մնացորդներից և անասնաբուծությունից: Արտանետումների 93 տոկոսը / CO₂ / էներգետիկայի արդյունքն է: Դա նկատի ունենալով՝ մշակվել է արտանետումների սահմանափակման ազգային ռազմավարություն, որը հիմնված է մինչև 2010թ. ընկած ժամանակահատվածի համար ՀՀ էներգետիկ մաստեր ծրագրի ակզբունքային դրույթների վրա: Այդ ծրագրի իրականացման գյուղատնտեսական գործունեության ազդեցությունը հիմնված է ռոտզման համակարգերից ջրի կորուստների կանխարգելման և ձգողականության վրա հիմնված ռոտզման կիրառության վրա: Քանի որ քիմիական պարարտանյութերը 100 տոկոսով ներկրվում են, դրանց արտադրության ազդեցությունը կլիմայի վրա, որն զգալի է էներգիայի օգտագործման առումով, չի քննարկվում ՀՀ քաղաքականության մեջ:

Գյուղատնտեսական լավագույն պրակտիկան

Սովորական գյուղատնտեսությունը կարող է բարձր բերքատվություն ապահովել դրսից բերվող միջոցների շնորհիվ, ինչպիսիք են՝ հանածո վառելանյութերը, սինթետիկ պարարտանյութերը, թունաքիմիկատները և ռոտզման ջուրը: Դրանց չարաշահումը կարող է դառնալ օդի աղտոտման, ջրի չափից ավելի օգտագործման, հողերի քայքայման և, ընդհանուր առմամբ, բնական կապիտալի սպառման պատճառ: Սովորաբար այնպիսի վնասներ, ինչպիսիք են հողի էրոզիան, կենսաբազմազանության կորուստը, ջրի աղտոտումը և թունաքիմիկատների անկանոն գործածությունը, չեն մտցվում արտադրության ծախսերի գործոնների մեջ: Վատ պրակտիկայի ազդեցությունն իսկապես շատ մակարդակներում զգալիորեն ավելացնում է ծախսերը:⁸

Հայաստանը դեռևս պետք է մտցնի այնպիսի համակարգ, ինչպիսին է GLOBALG.A.P.-ն՝ անվտանգ, կայուն գյուղատնտեսական արտադրանքի միջազգային չափանիշը, որը համայն աշխարհով մեկ գյուղատնտեսական արտադրանքի հավաստագրման կամավոր չափանիշներ է սահմանում: Այդ

⁸ Օրգանական գյուղատնտեսություն: Մեկ քայլ առաջ դեպի Արևելյան Եվրոպայում, Կովկասում և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում կանաչ տնտեսություն: հայաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի դեպքերի ուսումնասիրություն: ՄԱԿ-ի Բնապահպանական ծրագիր, 2011թ.

չափանիշներին աջակցող ծառայություններ մատուցողներ չկան: Այդ համակարգի ներդրումը պահանջում է պետության և շահագրգիռ կողմերի միասնական ջանքերը: Պետական քաղաքականությունը չի պահանջում կամ խթանում լավ պրակտիկան /դրամական հատկացումների հարցում Եվրամիությունից օգնություն ստանալու համար անհրաժեշտ նորմերի պահպանման մեխանիզմներ/, ոչ էլ կա գնահատման կամ մոնիտորինգի որևէ համակարգ:

Հայաստանում չկան օրգանական գյուղատնտեսության կամ հավաստագրման ծառայություններ: Հայաստանում օրգանական հավաստագրման մարմինը՝ ECOGLOBE-ը, միջազգայնորեն հավաստարմագրված և ընդգրկված է հավաստագրման ԵՄ-ի և շվեյցարական համարժեք մարմինների ցանկում: Ընդհանուր մտադրությունը BIO պիտակով ապրանքների միջոցով արտահանման կարողությունների մեծացումն է: Ի լրումն դրա, ԵՄ-ի և Շվեյցարիայի դոնորների աջակցությամբ ECOGLOBE-ը միացել է Վրաստանի իր գործընկերոջը՝ Caucascert-ին՝ Կանաչ Կովկաս՝ ապրանքանիշի անվան տակ ԵՄ շուկայի համար տարածաշրջանային հավաստագրման ծրագիր ստեղծելու գործում: Բնապահպանական օրենսդրությունը, օր.՝ Հատուկ պահպանվող բնական տարածքների մասին՝ օրենքը սահմանել է օրգանական գյուղատնտեսությունը որպես Հայաստանի այդօրինակ տարածքներում թույլատրված տնտեսական գործունեություն: Ներկայումս հավաստագրված օրգանական արտադրությունն աճի մեծ ներուժ ունեցող մի փոքր ապաստարան է, ինչպես սահմանված է 2010-2020թթ. Գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացման ռազմավարության առաջնահերթություններով:

Քննարկվող գործողություններն ու լավագույն պրակտիկայի հաստատման աջակցությունը կրթության, տարածման, պրոֆեսիոնալիզմի և պետական միջոցների օգտագործման միջոցով դրամական հատկացումները Եվրամիությունից օգնություն ստանալու համար անհրաժեշտ նորմերի պահպանման պահանջներին կապելու հարցում կենտրոնական տեղ են գրավում վատ և անհամապատասխան պրակտիկայի պատճառով տեղի ունեցող կորուստները նվազեցնելու հարցում:

Ջրային պաշարները

Հայաստանի տարեկան ջրային պաշարները կազմում են 9մլրդ խմ, որից օգտագործվում է 2մլրդ խմ: Խորհրդային ժամանակաշրջանում էլեկտրակենտրոնային չափազանց էժան լինելու շնորհիվ լեռնային ջրամբարներ կառուցելու փոխարեն, որոնք հնարավորություն կտային իրականացնել ինքնահոս ջրամատակարարում, տարածված էր էլեկտրակենտրոնայով աշխատող պոմպակայանների կառուցումը:

Գետերն ու լճերը

Հայաստանի Հանրապետությունում կան 9480 փոքր ու միջին գետեր, որոնց երկարությունը կազմում է 23,000քառ. կմ: Դրանց տարեկան միջին հոսքը կազմում է 7.19մլն խմ, այդ թվում՝ անդրսահմանային գետեր Արաքսի և Ախուրյանի վտակներինը: Հայաստանում անդրսահմանային գետեր Արաքսից և Ախուրյանից սպառվող ջրի տարեկան ծավալը կազմում է 940մլն խմ: Չափսերի և ազգային տնտեսական օգտագործման առումով Սևանա և Արփի լճերն ունեն առավել կարևոր ազգային դերակատարություն: Բացի այդ, կան հարյուրից ավելի փոքր լճեր, որոնցից մի քանսը չորային սեզոնի ժամանակ ցամաքում են: 2004թ. ի վեր գետերից ջուր վերցնելու ծավալը մեծ փոփոխություններ չի կրել: Հաշվի առնելով գետերի հիդրո ներուժը՝ անցած տասը տարվա ընթացքում մեծ քանակությամբ ջուր է օգտագործվել

հիդրոէներգիա ստանալու նպատակով՝ տարեկան 3.3մլն խմ կամ երկրի ներսում մակերևութային ջրերի հոսքի մոտ 50 տոկոսը:

Սևանա լիճը

Կովկասում ամենամեծ բարձր լեռնային լճի՝ Սևանի վիճակը Հայաստանի ամենամեծ էկոլոգիական մտահոգություններից մեկն է: Լճի ջրերը և ավազանի բնական պաշարները համարվում են Հայաստանի տնտեսության զարգացման անկյունաքարը: Լճի ջրահավաքման մակերեսը զբաղեցնում է Հայաստանի ամբողջ տարածքի մեկ վեցերորդը և ներառում երկրի հիմնական ջրային պաշարները: Անկանոն օգտագործման պատճառով լճի էկոհամակարգերը և պաշարները տասնամյակներ շարունակ տուժել են: ՀՀ կառավարության վերջերս գործադրած ջանքերի և միջազգային աջակցության շնորհիվ Արփա գետից ջուրը դեպի լիճ մղելու և Սևանից ոռոգման ջրի հոսքը կարգավորելու միջոցով ջրի մակարդակն սկսել է բարձրանալ: Այդ միջոցառումները դադարեցրել են ջրի մակարդակի իջեցումը, ուստի այն բարձրացել է՝ 2001թ. 1,896-ից 2012թ. հասնելով մինչև 1,900մ, իսկ մինչև 2030թ. նախատեսվում է ջրի մակարդակը հասցնել 1,908մ:

Ոռոգման ջուրը

Հայաստանն ընդունել է ջրի որակի նոր չափանիշներ: Հայաստանից դեպի հարևան երկրներ ջրի հոսքի որակը համապատասխանում է ընդունված չափանիշներին: 2000-2006թթ. ընկած ժամանակահատվածում ավելի քան 100մլն ԱՄՆ դոլար է ծախսվել լեռնային ջրամբարների տարողությունն ավելացնելու և դրանք հզորացնելու նպատակով: Այդուհանդերձ ոռոգման համակարգերը դեռևս հսկայական ներդրումներ են պահանջում: Ներկայիս ոռոգման համակարգերը ջուրը փոխադրում են 50 տոկոս կորուստներով /ոռոգման համակարգի լավագույն մասերը Շամիրամի և Արգիշտիի ջրանցքներն են, որոնք 2000-3000 տարվա վաղեմություն ունեն/: Բացի այդ, ջրելու ժամանակ ջրի կեսը կորչում է հին տեխնոլոգիաների և վատ կառավարման համակարգի պատճառով:

Տարածքային նախարարությանն առընթեր Ջրային կառավարման պետական կոմիտեն ոռոգման ջրի համար պատասխանատու հիմնական պետական մարմինն է: Այդ հարցերն ուսումնասիրելիս 2012-2014թթ. միջնաժամկետ ծախսերի շրջանակում պետական առաջնահերթությունները սահմանված են հետևյալ կերպ՝

- մեծացնել ոռոգման համակարգի պահպանման հուսալիությունն ու արդյունավետությունը, նվազեցնել կորուստները, բարելավել ջրի որակը և կոլեկտորային ջրահեռացման ծառայությունները.
- վերականգնել և արդիականացնել ոռոգման համակարգերը և գյուղացիական տնտեսություններում ոռոգման ցանցերը.
- բարելավել ջրային համակարգի կառավարումը և հասարակություն-պետություն գործընկերության զարգացումը:

Ըստ հողային հաշվեկշռի վերջին տվյալների /2012թ. հուլիս/՝ օգտագործվել է 207,800հա ոռոգվող հող, որից գյուղատնտեսական հողերը կազմում են 154,000հա, ներառյալ 120,000հա վարելահողերը, 32,600հա բազմամյա բույսերը և 1,500հա արոտավայրերը: Ոռոգվում են նաև մոտ 53,000հա բանջարանոցներ և 400հա անտառներ:

Ջրային պետական կոմիտեի ծրագրեր

Ծրագրի անվանումը	Կատարման ժամկետը	Գումարը, մլն ԱՄՆ դոլար	Շահառուների ներդրումը	Վարկեր	Պետություն
Ռոռզման համակարգերի վերականգնում	1994-2001	52	-	-	-
Ռոռզման համակարգերի զարգացման ծրագիր	2001-2007	30.82	2.07	24.8	3.89
Ամբարտակի անվտանգություն 1-ին փուլ	2001-2007	30.3	-	26.6	3.7
Ամբարտակի անվտանգություն 2-րդ փուլ	2004-2009	7.5	-	6.75	0.75

Քայքայվող ռոռզման համակարգի վերափոխումը ՀՄԿ-ի 2007-2011թթ. պայմանագրի հիմնական մասն էր, որով ֆինանսավորվեց 17 պոմպակայանների վերականգնումը, բարելավվեցին և արդիականացվեցին դրանց կարողությունները ժամանակակից պոմպերով ու շարժիչներով, ավտոմատացվեց ռոռզման համակարգի մոնիտորինգը: Վերջին փոփոխություններից հետո կատարելագործված ռոռզման ջրանցքները վեգետացիոն շրջանում պահպանել են ջրի մակարդակները՝ ավելի նվազ էներգետիկ ծախսերով, ընդլայնելով ռոռզման համար հատկացված տարածքները ջրի հուսալի առկայությամբ, որով խրախուսվում են արժեքավոր մշակաբույսերի համար արվող ներդրումները, կանխիկ հոսքեր են ապահովվում ջրօգտագործողների վճարների համար, որոնք անհրաժեշտ են ռոռզման համակարգն աշխատեցնելու և պահպանելու համար: ՀՄՀ-ի բարելավման ծրագրով կատարելագործվել են 47,000հա տարածքով համակարգեր:

Ջրօգտագործողների վարձավճարները հավաքվում և կառավարվում են Հայաստանի տարածքում ջրօգտագործողների պաշտոնական միությունների կողմից: Այդ միություններում ջրի կառավարման համակարգչային ծրագրերում համակարգը և նրանից օգտվողներին դիտարկելու համար օգտագործվում է աշխարհագրական տեղեկատվական համակարգի տեխնոլոգիան: Կառավարման համակարգը միություններին նաև հնարավորություն է ընձեռում քարտեզագրել և հետևել ռոռզվող բոլոր հողակտորներին ու վճարման ենթակա ջրօգտագործման վարձերին: Ջրօգտագործողների միությունները դեռևս զարգացման փուլում են, հարկավոր է հզորացնել կառավարումը, հնարավորություն տալ ավելի շատ օգտագործողներ ունենալ:

Խմելու ջուրը և ջրմուղ-կոյուղին

Հայաստանի բոլոր քաղաքներում արդյունաբերական և տնային տնտեսությունների օգտագործած ջրերը՝ 1.8-2.0մլրդ խմ, հավաքվում /հեռացվում/ են կեղտաջրսերի կոլեկտորների և ցանցերի միջոցով: Ջրահեռացման ներկայիս համակարգը ծառայում է քաղաքային տարածքների կեղտաջրերի մոտ 70-80 տոկոսը հավաքելու /հեռացնելու/ նպատակին: Գյուղական վայրերում կան ջրմուղ-կոյուղու համակարգեր: Մոտ 30 տարի առաջ կառուցված կեղտաջրերի վերամշակման 20 գործարաններից ոչ մեկը ներկայումս չի գործում: Երևան քաղաքում գործում է միայն Ալեքսիա՝ ջրամշակման գործարանը:

2008թ. Աղքատության հաղթահարման երկրորդ ռազմավարության մեջ նշված է, որ գյուղական բնակավայրերում անվտանգ ջրի մատակարարման հասանելիությունը՝ պետք է ավելանա և 2001թ. 45 տոկոսի փոխարեն մինչև 2012թ. /և 2015թ./ հասանելի լինի բնակչության 70 տոկոսի համար: 2007թ. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Հայաստանում գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և սանիտարական պայմանների բարելավման ֆինանսավորման ռազմավարության հիմնական մոդելավորումը՝ փաստաթղթում նշված է՝ Աղքատության հաղթահարման ռազմավարությունը չի նշում ջրի մաքրությունը որպես առաջնահերթություն: Թերություններն ամենասուրը զգացվում են գյուղական և մեկուսի համայնքներում, որտեղ ջրի մատակարարումն ու որակն անհամարժեք են: Երկրի ջրաբաշխման ցանցի կեսը երեսուն տարվա վաղեմություն ունի և շարունակաբար կրում է զգալի կորուստներ: Գյուղական շատ ջրային ցանցեր օրական կամ շաբաթական միայն մի քանի ժամ են ջուր ստանում: Համաշխարհային բանկի, KfW-ի, Ասիական զարգացման բանկի և ՎՋԵԲ-ի տրամադրած վարկերի շնորհիվ իշխանություններն զգալիորեն բարելավել են ջրային հինգ ընկերությունների աշխատանքն ու կատարողականը: Այնուամենայնիվ, լեռնային շրջաններում ավելի քան 550 գյուղեր ներկայումս ոչ միայն կապված չեն կենտրոնացված ջրային համակարգի հետ, այլև որևէ օգնություն չեն ստանում գոյություն ունեցող համակարգերը վերանորոգելու կամ նորերը տեղադրելու հարցում:

Այլ նախաձեռնություններ նույնպես աջակցում են ջրային պաշարների արդյունավետ ու կայուն կառավարման համակարգերի զարգացմանը, ինչպես նաև նախանշված գյուղական շրջաններում ջրամատակարարման վերականգնումը փոքրամասշտաբ ենթակառուցվածքային նախագծերի միջոցով: ԱՄՆ-ի ՄԶԳ-ն նույնպես աջակցում է կեղտաջրերի մշակման ծառայության զարգացմանը երկրի առողջարաններից մեկում՝ Դիլիջանում՝ Հայաստանի կառավարության, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի և Կոլա-կոլայի հետ համագործակցությամբ: Ի լրումն դրա, մի նոր գործընկերություն ընտրված մարզերում կօգնի ստեղծելու պինդ թափոնների կառավարման համակարգեր և խթանել պլաստմասսայե տարաների հավաքումն ու վերստին օգտագործումը՝ նվազեցնելու համար օդի աղտոտումը:

Էներգետիկան

Էներգիայի մատակարարման հիմնական տարրերը ներկրվող բնական գազն ու Հայաստանի հնացող ատոմակայանը՝ Մեծամորի ԱԷԿ-ն են, որն ապահովում է երկրի էլեկտրաէներգիայի մոտ 42 տոկոսը: Չկա էներգիայի մատակարարման բազմազանություն: Էներգետիկ անվտանգություն ունենալու հարցում Հայաստանին օգնելու նպատակով որոշ դոնորներ ջանքեր են գործադրում վերականգնվող էներգիա ապահովելու և ազգային ու միջազգային մակարդակներում էներգետիկ արտադրողականության ու կայուն օգտագործման նպատակով ներդրումներ անելու ուղղությամբ: Գյուղական շրջանների զարգացման ծրագրի մի մասը տնային տնտեսություններում օգտագործելու համար գազամատակարարումն է գյուղական համայնքներին: Անցած տասը տարվա ընթացքում գազ ունեցող գյուղական համայնքների թիվը 576-ից հասել է 866-ի:

Ճանապարհները և կապը

Վերջին 5-6 տարվա ընթացքում Հայաստանն զգալի առաջընթաց է արձանագրել իր կենտրոնական ու գյուղական ճանապարհների բարելավման կամ վերականգնման հարցում: Շատ ճանապարհների վերականգնման ֆինանսավորումը կատարվել է միջազգային դոնոր կազմակերպությունների, ՀԲ-ի, ՀԶԲ-ի, ՀՄԿ-ի և մյուսների կողմից: 2009թ. ՀՄԿ-ի շրջանակներում Գյուղական ճանապարհների

վերականգնման ծրագրի /ԳՃՎԾ/ գործունեությունը դադարեցնելու մասին որոշումից հետո ՀՀ կառավարությունն ստանձնեց աշխատանքների առաջին փաթեթն ավարտին հասցնելու նպատակով 16.1 մլն ԱՄՆ դոլար ներդնելու պատասխանատվությունը: Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրով, որը 2009թ. ֆինանսավորվել էր ՀԲ-ի կողմից, վերանորոգվել են 240 գյուղական ճանապարհներ, որոնք 44 գյուղական համայնքներ կապում են մայրուղիներին և քաղաքներին /մինչև 2012թ./: Աշխատանքները դեռևս շարունակվում են: Ծրագրով ընդլայնվել է գյուղական համայնքների մուտքը դեպի գյուղատնտեսական շուկաներ և սոցիալական ենթակառուցվածքներ, ինչպես նաև գյուղացիական տնտեսություններից դուրս եկամուտներ ունենալու հնարավորություններ՝ բարելավելով գյուղական ճանապարհների պայմանները: Մեկ այլ մեծ ծրագիր, որի նպատակն է ճանապարհային հաղորդակցության կատարելագործումը՝ Հյուսիս-հարավ միջանցքն՝ է, որով նախատեսվում է վերականգնել Ագարակ-Կապան-Երևան-Բավրա ճանապարհը: Դա կկապի Վրաստանի հարավային միջանցքի հետ՝ հաղորդակցություն ապահովելով Սև ծովի նավահանգիստներ Փոթիի և Բաթումիի հետ, որոնք դեպի Կենտրոնական Ասիա արտահանման հիմնական կետերն են: 7-ամյա ծրագիրը ֆինանսավորվում է ՀԶԲ-ի կողմից և սկսվել է 2012թ.:

Կապի բնագավառում իրավիճակն ավելի լավ է այն առումով, որ բջջային կապը ներթափանցել է գյուղական վայրեր: Ներկայումս բջջային ծառայության երեք օպերատորների ծածկույթը մոտենում է 100 տոկոսին: Միաժամանակ ինտերնետի հասանելիությունը գյուղական վայրերում շատ ավելի ցածր մակարդակի վրա է՝ համեմատած Երևանի և մնացած խոշոր քաղաքների հետ, թեպետ վերջերս նկատվում է իրավիճակի բարելավում: InternetWorldStats.com-ի 2011թ. զեկույցի համաձայն՝ Հայաստանն ԱՊՀ երկրների շարքում ինտերնետից օգտվողների ցուցիչով զբաղեցնում է առաջին տեղը՝ 47.1 տոկոսով:

Օտարերկրյա ուղղակի ներդրումներ⁹

Հայաստանն անդամակցում է հետևյալ կազմակերպություններին՝ ԱՄՀ, ՀԲ/IDA, IFC, ԱՀԿ, ԵԱՀԿ, Եվրոպայի խորհուրդ, ՄԱԿ/ՄԱԿ-ի առևտրի համաժողով/ՅՈՒՆԵՍԿՕ, MIGA, ԱՄԿ, ԱՀԿ, WIPO, Ինտերպոլ, ՎՁԵԲ, Զարգացման ասիական բանկ, ԱԷՄԿ, Տուրիզմի համաշխարհային կազմակերպություն, Համաշխարհային մաքսային կազմակերպություն, Հեռահաղորդակցությունների միջազգային միություն և Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպություն /ՄՕՏՀ/: Հայաստանը 2003թ. փետրվարին դարձավ ԱՀԿ-ի 145-րդ անդամը:

Հայաստանի Հանրապետության քաղաքականությունը ներդրումների աջակցության հարցում՝ բաց դռների՝ տնտեսական քաղաքականության հիմնական ուղղություններից է: 1994թ. Ներդրումների մասին օրենքով նախատեսված է Հայաստանում օտարերկրյա ներդրումների իրավական հիմքը: Իրավական որևէ տարբերակում չկա տեղական ու օտարերկրյա ընկերությունների միջև, չկան տեղական բիզնեսի սեփականության տոկոսային հարաբերակցության սահմանափակումներ՝ այն բիզնեսի, որ կարող են ձեռք բերել օտարերկրյա ներդրողները:

2009թ. Հայաստանում ՕՈՒՆ-ի հոսքը կազմել է ՀՆԱ-ի 8.9 տոկոսը, որը 330 տոկոսով ավելի է 2005թ. համեմատությամբ, սակայն 17 տոկոսով պակաս է 2008թ. հետ համեմատած, որը ՕՈՒՆ-ի

⁹ http://www.fao.org/fileadmin/user_upload/Europe/documents/Publications/AI_briefs/Armenia_ai_en.pdf

զագաթնակետն էր: Գյուղատնտեսության մեջ այդ ներդրումները կազմում են 1 տոկոս, իսկ սննդամթերքի և խմիչքների ոլորտում՝ մոտ 5 տոկոս: ՕՈՒՆ-ի մեծ մասն ուղղված է դեպի հեռահաղորդակցության, էլեկտրաէներգիայի և զագամատակարարման ոլորտներ ու հանքարդյունաբերություն: Հայաստանում ամենանշանակալից օտարերկրյա ներդրումներն ստացվել են Ռուսաստանից /էներգետիկա և մետաղներ/, Ֆրանսիայից /կապ և ոգելից խմիչքներ/ և Արգենտինայից /օդային տրանսպորտ և գյուղատնտեսություն/:

տարի ներ	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011
ՕՈՒՆ, \$ մլն	217	287	305	582	1000	732	483	631

Աղբյուրը՝ <http://www.mineconomy.am/uploads/20122609155031710.pdf>

Առևտուրը

Ըստ 2004-2008թթ. տվյալների՝ արտաքին առևտրի ապրանքների կառուցվածքում սննդամթերքի և գյուղատնտեսական հումքի տեսակարար կշիռը կազմում է արտահանման 14.4 և ներկրման 17.1 տոկոսը: 2008թ. տվյալների համաձայն՝ ներկրվող ապրանքների արժեքը 4.1 անգամ ավելի է, քան արտահանվող ապրանքներինը, ներկրվող սննդամթերքի և գյուղատնտեսական հումքի արժեքը 3.6 անգամ ավելի է, քան այդ նույն խմբի ապրանքների արտահանման արժեքը: Ավելին, միայն կոնյակը կազմում է ապրանքների այդ խմբի արտահանման 64 տոկոսը՝ ցույց տալով, որ անհրաժեշտ է բազմազանեցնել արտահանվող ապրանքները: Առևտրի հաշվեկշռի և դրա կառուցվածքի բարելավումը ռազմավարական կարևորության հարցեր են:

Աստիճանական միջազգայնացումը կարևոր գործընթաց է եղել: 2003թ. ԱՀԿ-ին, ՊԳԿ-ին, ԳԶՄՀ-ին անդամակցելը կարևոր խթան է զարգացման, ինչպես նաև իրավական ու տեխնոլոգիական կարգավորման համար, ներառյալ գյուղատնտեսությունը, որպեսզի դրանք համահունչ լինեն միջազգային պահանջներին՝ օտարերկրյա ներդրումներ ներգրավելու և արտաքին առևտուրը զարգացնելու հրամայական: Այժմ Հայաստանի առևտրային քաղաքականության և պրակտիկայի մասին ԱՀԿ-ի քարտուղարության զեկույցի համաձայն՝ Հայաստանն ունի ազատական առևտրի և ներդրումների ռեժիմ: 2008-2012թթ. մաքսային վարչարարության ռազմավարությունը լրամշակվեց 2009թ. դեկտեմբերին Գործողությունների ռազմավարական ծրագրի մշակման և ներդրման մրջոցով: ԱՀԿ-ի առջև ստանձնած պարտավորությունների կատարման գործում Հայաստանի հիմնական նպատակներից մեկը իրականացման մեխանիզմների ամրապնդումն է: Ներկայումս Հայաստանը խթան է ապահովում արտահանողների /չկան արտահանման տուրքեր, արտահանվող ապրանքների և ծառայությունների ԱԱՀ/ և օտարերկրյա ներդրողների համար /եկամտահարկից ազատում, անորոշ ժամանակով կորուստների տեղափոխում/: Հայաստանը որևէ քանակական սահմանափակում չի դնում արտահանվող կամ ներկրվող ապրանքների վրա: Երկիրն ստորագրել է նաև ազատ առևտրի երկկողմ համաձայնագրեր ութ երկրի և ԱՊՀ-ի հետ:

Գործարար միջավայրը և մրցունակությունը ¹⁰

2012-2013թթ. Գլոբալ մրցունակության զեկույցի համաձայն Հայաստանը 10 կետով բարելավել է իր դիրքը, որն զգալի առաջընթաց է և ներկայումս 144 երկրների ցանկում զբաղեցնում է 82-րդ տեղը: Բիզնեսով

¹⁰ http://www.fao.org/fileadmin/user_upload/Europe/documents/Publications/AI_briefs/Armenia_ai_en.pdf

զբաղվելու հինգ հիմնական պրոբլեմները շարունակում են մնալ կոռուպցիան, պետական բյուրոկրատիայի անարդյունավետ աշխատանքը, ֆինանսների մատչելիությունը, հարկային կանոնները և աշխատուժի անբավարար կրթությունը:

Արտահանման շուկաներ մուտք գործելու և արտահանողների հետ գործարքներ կատարելու նախապայմանն ապրանքների միջազգային չափանիշներին և հավաստագրման պահանջներին համապատասխանությունն է: Պարենային անվտանգության, կենդանիների և բույսերի առողջության ազգային համակարգի կարգավիճակն ու կատարումը գյուղատնտեսության մեջ և պարենի ոլորտում առևտրի ամենամեծ տեխնիկական խոչընդոտն են: Արտադրողի և վերամշակման մակարդակների վերահսկողության համակարգում որակի կառավարումը և պարենային անվտանգությունը պարենի չափանիշների և հավաստագրման համապատասխանության անկյունաքարերն են, ներառյալ GLOBALG.A.P.-ն, ISO-ն և HACCP-ը:

Թեպետ մենաշնորհը զեկույցում ներառված չէ, այն բացասաբար է ազդում մրցակցության վրա՝ սահմանափակելով ապրանքների մրցունակությունը: Օր.՝ գյուղատնտեսության արտադրական միջոցների՝ պարարտանյութերի և թունաքիմիկատների բնագավառում մենաշնորհի բարձր աստիճանը գյուղատնտեսական հիմնական արտադրանքի արտադրական ծախսերը մեծացնում է, իսկ որակն ընկնում է: Վարկերի հասանելիությունը տարիների ընթացքում բարելավվել է, սակայն հիմնականում Երևանում՝ գյուղացիների և գյուղական ձեռնարկությունների համար այն դեռևս դժվարամատչելի է:

3. Կառավարության քաղաքականությունը գյուղատնտեսության և գյուղական վայրերի զարգացման վերաբերյալ

3.1. Ազգային կարգավորման նկարագրությունն ու գնահատականը

Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակում Գործողությունների ծրագրի իրականացումն զգալիորեն կխթանի Հայաստանի օրենսդրության, նորմերի և չափանիշների մոտարկումը Եվրոպական Միության օրենսդրությանը: Այդ համատեքստում հիմքեր կստեղծվեն հետագա տնտեսական ինտեգրման համար, որը հիմնված կլինի տնտեսական և առևտրային կանոնների ու ենթօրենսդրական ակտերի ընդունման և կատարման վրա՝ նպատակ ունենալով ավելացնել առևտուրը, ներդրումներն ու աճը: Այն նաև կօգնի մշակել ու իրականություն դարձնել քաղաքականություն և միջոցներ՝ տնտեսական աճն ու հասարակության համախմբվածությունը խթանելու, աղքատությունը նվազեցնելու և շրջակա միջավայրը պաշտպանելու նպատակով՝ դրանով իսկ իր ներդրումն ունենալով կայուն զարգացման երկարաժամկետ նպատակի իրականացման գործում: 2009թ. մայիսի 6-ին ՀՀ Նախագահը հաստատեց 2009-2011թթ. Գործողությունների ցանկը, որով կապահովվի ԵՀՊ-ի Հայաստան-ԵՄ գործողությունների ծրագրի իրականացումը /Նախագահի հրամանագիր ՆԿ-68-Մ/:

Միջազգային տնտեսության համաշխարհայնացումը և սպառողների առավել խորացված իրազեկվածությունն ավելացրել են որակի ենթակառուցվածքը՝ որպես կենտրոնական ոլորտ, ներառյալ ստանդարտացումը, չափազորումը, հավատարմագրումը, ստուգումը, տեխնիկական վերահսկողությունը, հավաստագրումը, կարգավորումը և շուկայի ուսումնասիրությունը: Կառավարությունը լուրջ քայլեր է ձեռնարկել որակի ազգային ենթակառուցվածքների ստեղծման ուղղությամբ: ՀՀ կառավարության 2010թ. դեկտեմբերի 16-ի թիվ 1693 որոշմամբ մշակվել, ապա հաստատվել է Հայաստանի Հանրապետության որակի ենթակառուցվածքային ռազմավարության բարեփոխումը:

Որոշման նպատակը որակի ազգային ենթակառուցվածքի զարգացման երկարաժամկետ կողմնորոշման ապահովումն է և գոյություն ունեցող համակարգի բարեփոխումը, որպեսզի բավարարվեն միջազգային ու եվրոպական պահանջները: Այդ բարեփոխումներով նախատեսվում է օրենսդրության, ինստիտուցիոնալ կարողությունների ստեղծում և իրազեկվածության բարձրացում: Ռազմավարությունը, որը ծրագրված է իրականացնել մինչև 2020թ., նախատեսված է եվրոպական պահանջների հետ աստիճանական համապատասխանության համար, որպեսզի որակի հայկական ենթակառուցվածքները լիովին ընդգրկվեն գլոբալ համակարգի մեջ: Ստանդարտացման, Տեխնիկական կանոնակարգման, Չափումների միասնականության ապահովման և Հավատարմագրման մասին նոր օրենքները մշակվել ու ընդունվել են Ազգային ժողովի կողմից 2012թ. փետրվարի 8-ին:

ԵՄ ապրանքների անվտանգությունը կարգավորող դրույթները ներկայացված են Տեխնիկական կանոնակարգման մասին օրենքում, որով սահմանվում են արտադրողների պարտականությունները: Ընդհանուր առմամբ 2011թ. ընդունվել են 43 միջազգային չափանիշներ՝ կանոնակարգող օրենքներ տեխնիկական կանոնակարգման, ստանդարտացման, չափազորման և հավատարմագրման բնագավառներում, որոնցով ազգային կարողությունները ստանդարտացման, չափազորության,

հավատարմագրման, համապատասխանության գնահատման և շուկայի ուսումնասիրությունների ոլորտներում միասնական կլինեն:

2010-2015թթ. Պարենային անվտանգության նոր ռազմավարությունը և 2011թ. ընդունված Գործողությունների ծրագիրը նպատակ ունեն պարենի համակարգը համապատասխանեցնել ԵՄ օրենսդրական և ինստիտուցիոնալ պահանջներին: Ռազմավարության նպատակը Հայաստանի գյուղացիական համայնքի և ագրոբիզնեսի օպերատորների վրա դրվող վարչական բեռը նվազագույնի հասցնելն է՝ նորացնելով կանոններն ու հնացած չափանիշները: Ռազմավարությունն իրականացվում է ԵՄ Twinning ծրագրի և ԵՄ խորհրդատվական խմբի աջակցությամբ: Մանրամթերքի անվտանգության պետական ծառայությունը ներկայումս ԵՀ 853 կանոնի համաձայն¹¹ մշակում է Մանրամթերքի անվտանգության մասին օրենքի փոփոխությունները: Ընդհանուր առմամբ գերատեսչություններին տրվել են 54 նոր գործառնություններ և իրավասություններ: Ազգային ժողովն ընդունել է նոր օրենք՝ «Տեխնիկական կարգավորման մասին», որը փոխարինել է «Համապատասխանության գնահատման մասին» օրենքին: Նախկին օրենքի համաձայն նախարարություններին թույլատրվում էր մշակել տեխնիկական կանոններ և սահմանել իրականացման պայմանները: Նոր օրենքով այդ իրավասությունը տրվում է անմիջապես ՀՀ կառավարությանը:

Գյուղատնտեսության և գյուղական վայրերի զարգացման վերաբերյալ հիմնական օրենսդրական դաշտը ներառում է՝

1. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրքը
2. ՀՀ Հողային օրենսգիրքը, որով նախատեսված է հողի և գյուղատնտեսական արտադրության միջոցների մասնավոր սեփականության իրավունքը: Հետագայում մշակվելիք օրենսդրությունը կհարմարեցվի տնտեսական զարգացման նոր էտապին՝ հողատեսակների արդյունավետ օգտագործմանը: Հատկապես վարելահողերի մասով նախատեսվում է «Հողային օրենսգրքում» առավել խիստ պահանջներ սահմանել հողի ոչ նպատակային օգտագործման համար, համապարփակ աջակցություն տրամադրել հողերի միավորման համար: Հողային օրենսգրքի վերջին տարբերակն ընդունվել է 2000թ.:
3. Անտառային օրենսգիրքը
4. «Ջրային օրենսգրքով ապահովվում է ջրային պաշարների կայուն և միասնական կառավարումը
5. «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին» օրենքը
6. «Օրգանական գյուղատնտեսության մասին» օրենքը
7. «Մերմերի մասին» օրենքը
8. «Մելեկցիոն նվաճումների պահպանության մասին» օրենքը
9. «Մանրամթերքի անվտանգության մասին» օրենքը
10. «Գյուղատնտեսական հողերի մելիորացիայի մասին» օրենքը
11. «Բույսերի կարանտինի և բույսերի պաշտպանության մասին» օրենքը
12. «Գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման մասին» օրենքը
13. «Անասնակերի մասին» օրենքը

¹¹ 2004թ. Եվրախորհրդարանի և Խորհրդի թիվ 853/2004 /ԵՀ/ կանոն, որով ամրագրվում են սննդամթերքների հիգիենայի հատուկ կանոնները

14. “Անասնաբուծության մասին” օրենքը
15. “Պարենային անվտանգության ապահովման մասին” օրենքը
16. “Անասնաբուծության մասին” օրենքը
17. “ԱԱՀ-ի մասին” ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքը
18. “Ջրօգտագործողների միությունների մասին” օրենքն ընդունվել է ցածր բարձրության վրա գտնվող ռոտզման համակարգերի շահագործումն ու պահպանումը դյուրացնելու նպատակով
19. “Տեղական ինքնակառավարման մասին” օրենքը
20. Հողերի վերականգնման և քայքայված հողերի դասակարգման տեխնիկական կարգավորումը
21. “Փոքր ու միջին ձեռներեցության պետական աջակցության մասին” օրենքը:

Գյուղատնտեսության բնագավառում լավ կազմակերպված քաղաքականություն իրականացնելու նպատակով 2010թ. նոյեմբերին կառավարությունը հաստատեց “ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարությունը”: Ռազմավարությամբ սահմանված է նպատակների 17 խումբ, որոնք, մասնավորապես, ներառում են հակաճգնաժամային մեխանիզմներ, գյուղատնտեսական արտադրության հզորացում, գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացում, պարենային անվտանգության ապահովում, հողօգտագործման արդյունավետության բարելավում, օրգանական գյուղատնտեսության զարգացում և ճյուղի այլ առաջնահերթ ուղղություններ:

Ներկայումս այդ ռազմավարությունն արտացոլված է օրենքում, ուստի պետական բյուջեում միջոցների մասին դրույթը պարտադիր չէ: Հետևաբար կան անհամարժեք դրույթներ կամ էլ ընդհանրապես չկան: Ռազմավարությունն իրականացնելու նպատակով հարկավոր է ներկայացնել “Գյուղատնտեսության մասին” օրենք, որով կկարգավորվի գյուղմթերք արտադրողների իրավական կարգավիճակը, այնտեղ կներառվեն պետական գյուղատնտեսական քաղաքականության հիմնական տարրերը, զարգացման ծրագրերի կատարման և մոնիտորինգի մասին դրույթները /հաշվետվողականություն/, գյուղատնտեսության կառավարման մարմինների իրավասությունը և այլ համապատասխան հարցեր:

Չնայած այն բանին, որ կոոպերատիվների զարգացումը կառավարության առաջնահերթ խնդիրներից է, չկա գյուղական կոոպերատիվների մասին որևէ օրենք, որով կկարգավորվեն գյուղացիական կոոպերատիվների/արտադրող կազմակերպությունների կազմավորումն ու գործունեությունը: Ներկայումս կոոպերատիվների իրավական կարգավիճակը նույնն է, ինչ արտադրական կամ սպառողական կոոպերատիվներին: Այդպիսի կոոպերատիվները գործում են Քաղաքացիական օրենսգրքի հիման վրա, որում գյուղացիական կոոպերատիվների համար կոնկրետ դրույթներ չկան: ՀՀ օրենսդրության մեջ կոոպերատիվները համարվում են շահույթ չհետապնդող կազմակերպություններ, որը նրանց հնարավորություն չի տալիս վարկեր ստանալ, մասնակցել մրցույթների և մրցակցել առևտրային այլ ընկերությունների հետ: Կոոպերատիվների գործունեության համար մեկ այլ խոչընդոտ է այն հանգամանքը, որ 58035 մլն դրամ /մոտավորապես 110,000 եվրո/ կազմող ԱԱՀ-ի շեմ է սահմանված գյուղացիական ձեռնարկության համար, որը կգերազանցվի մեկ իրավաբանական անձ կազմող համատեղ արտադրական կոոպերատիվի դեպքում:

Արտադրական կոոպերատիվներին/կազմակերպություններին ԱԱՀ-ից ազատելու և դրա շեմի հարցը այդպիսի կոոպերատիվների կազմավորման և այդ կազմավորումը խթանելու համար մեծ խոչընդոտ է: Գյուղատնտեսության նախարարությունը ներկայացրել է “Կոոպերատիվների մասին” օրենքի նախագիծ, սակայն կարևոր շատ դրույթներ, զորօրինակ անդամների նվազագույն թիվը, ներդրումների

մեխանիզմները, հաշվապահական հաշվառումը և հաշվապահությունը, կոոպերատիվների դաշինքները և երկրորդային կոոպերատիվները, կոոպերատիվների վերափոխման մեխանիզմները, կառավարման մարմինները, կոոպերատիվների աուդիտը, տուգանքների մասին դրույթները և այլ հարցեր ոչ բավարար կերպով են հաշվի առնվել:

Կոոպերատիվների զարգացման նկատմամբ տնտեսական քաղաքականությունը պետք է փոխընթացի այնպիսի գործիքներով, ինչպիսիք են՝ պետական գնումներ կատարելիս կոոպերատիվներին տրվող արտոնությունները, կոոպերատիվների զարգացման խրախուսանքները, տեխնիկայի գնման համար զեղչեր, կոնկրետ մշակաբույսերի արտադրությունը, օժանդակություն ապրանքների վաճառքի և մարքեթինգի հարցում, միջոցներ այդպիսի կոոպերատիվների և պետության միջև մասնավոր-պետություն գործընկերություն հաստատելու համար:

3.2. Գյուղատնտեսության և գյուղական տարածքների զարգացման կառավարության ներկա և գալիք քաղաքականության, պետական միջամտության ծրագրերի կամ ռազմավարության նկարագրությունն ու գնահատումը

Զարգացման ազգային ծրագիրը

Գյուղատնտեսության, գյուղական վայրերի և ագրոարդյունաբերության զարգացման կառավարության քաղաքականությունը սահմանող հիմնական փաստաթղթերն են՝

1. 2009-2021թթ. կայուն զարգացման ծրագիրը /Աղքատության հաղթահարման երկրորդ ռազմավարությունը/
2. “ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարությունը”:
3. 2007-2015թթ. անասնաբուծության մասին ծրագիրը
4. Պարենային անվտանգության մասին հայեցակարգը /2011թ./ և 2010-2015թթ. Պարենային անվտանգության ռազմավարությունը
5. Հողերի միավորման հայեցակարգը /2011թ/ և այլ ռազմավարական փաստաթղթեր, որոնք ուղղակի և անուղղակի կերպով վերաբերում են վերոնշյալին:

Կայուն զարգացման ծրագրում /ԿԶԾ/, որը կառավարության կողմից հաստատվել է 2008թ. հոկտեմբերին, նշված է, որ կայուն տնտեսական աճն աղքատության նվազեցման հարցում կարևոր գործոն է: 2009-2021թթ. համար այնտեղ նշված է երեք հիմնական նպատակ՝ նվազեցնել աղքատությունը, այդ թվում՝ ծայրահեղ աղքատությունը, ապահովել մարդկային զարգացում, խորացնել տնտեսական աճը և արագացնել հետ մնացող շրջանների զարգացումը:

ԿԶԾ-ում ասվում է, որ գյուղատնտեսության ցածր արտադրողականությունը մեծ մարտահրավեր է գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացմանը: ՀՀ կառավարությունը նախատեսում է, որ պետական աջակցությունը պետք է շարունակվի 2008-2021թթ. և լինի արտադրողականության ավելացման, ենթակառուցվածքներին աջակցելու, սուբսիդիաների, ֆինանսավորման, վերամշակման արտադրության խրախուսման և առաջավոր տեխնոլոգիաների ու ծառայությունների մատուցման ուղղությամբ: ԿԶԾ-ի համաձայն գյուղատնտեսության բնագավառում կառավարության քաղաքականության հիմնական առաջնահերթություններից մեկը լինելու է գյուղատնտեսական ապրանքների արտահանման առաջընթաց աճը և դրանց ավելացումն ընդհանուր արտահանման մեջ: Դեռևս առաջնահերթ է ինքնաբավության ավելացումը ներկրման փոխարինման միջոցով և ներքին արտադրության ավելացումը, ինչպես հետագայում հաստատվեց Պարենային անվտանգության հայեցակարգով: Գյուղատնտեսության զարգացման վերաբերյալ կանխատեսումները հիմնված են հետևյալ քաղաքականության վրա՝

- անցում դեպի գյուղատնտեսության առավել ինտենսիվ զարգացում.
- փոքր գյուղական տնտեսությունները մնում են արտադրության հիմքը, սակայն խրախուսվում է ավելի մեծ և առևտրային ընկերության հիմնումը, իսկ ներկայումս 2.8 տոկոս կազմող համախառն գյուղատնտեսական արտադրանքը նախատեսվում է մինչև 2021թ. հասցնել մինչև 18 տոկոսի.

- աջակցել ծառայություններ մատուցողներին, առաջնային վերամշակման, մատակարարման և մարքեթինգային կոռպերատիվների զարգացմանը.
- ՀՀ կառավարությունը կշարունակի ներդրումներ կատարել ոռոգման համակարգերում, ճանապարհների, նաև այլ ուղղություններով՝ սերմերի և անասնաբուծության մեջ, գյուղատնտեսական գիտելիքների տարածման ծառայություններ, ռիսկերի մեղմացմանը միտված միջոցառումներ, ներառյալ հակակարկտային կայանները և ռիսկերից ապահովագրման համակարգերը.
- շրջանների միջև եղած անհամամասնությունների մեղմացմանն ուղղված սուբսիդիաներ, գյուղատնտեսական ապրանքների արտադրության համար հավասար հնարավորությունների ստեղծում և արժեքավոր գյուղատնտեսական ապրանքների արտադրության խթանում.
- զբաղվածությունը գյուղատնտեսության մեջ չի ավելանա՝ դրա փոխարեն կխրախուսվի ոչ գյուղատնտեսական վայրերում ՓՄՁ-ների զարգացումը: ՓՄՁ-ների զարգացման միջոցով գյուղացիական տնտեսություններից դուրս զբաղվածության բազմազանեցում.
- գյուղատնտեսության համար ֆինանսական միջոցների ավելացում:

Նախատեսվում է, որ թեպետ գյուղատնտեսությանը պետական աջակցության բաժինը բյուջեում աճում է բացարձակ արտահայտությամբ, *ներկայիս 1 տոկոսից 2021թ. կնվազի և կդառնա 0.6-0.7 տոկոս*: ԿԶԾ-ի դրույթներն ու փիլիսոփայությունը դրել են 2010-2020թթ. Գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացման ռազմավարության հիմքը:

Պարենային անվտանգության հայեցակարգով, որը կառավարության որոշմամբ հաստատվել է 2011թ. մայիսի 18-ին, սահմանված են 2011-2020թթ. ժամանակահատվածի համար հիմնական ապրանքների ինքնաբավությունը 10-15 տոկոսով ավելացնելու նպատակները և իրականացվելիք ծրագրերը: Այդ նպատակով Գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացման ռազմավարությանը համապատասխան հայեցակարգով սահմանվում է յուրաքանչյուր ապրանքի /ցորեն, կարտոֆիլ, միս, կաթ և այլ հիմնական ապրանքներ/ համար պարենային նպատակային հավասարակշռությունը: Պարենային անվտանգության հայեցակարգի որոշ դրույթներ իրականացվում են սերմերի և անասնաբուծության պետական ծրագրերի միջոցով: Այդ բնագավառում քաղաքականության գործողությունները հաստատվում են պարենային անվտանգության ծրագրերի հետ, ինչպիսիք են օրենսդրական փոփոխությունները, լաբորատորիաների, հարմարությունների և ենթակառուցվածքների արդիականացումը, վտանգավոր սննդամթերքները պարզելու համար վաղ կանխարգելման և արձագանքելու համակարգերի ստեղծումը, ISO-ի չափանիշներ մտցնելը, ԳԶԾ-ներ պարունակող սննդամթերքների ռիսկերի պետական գնահատումը, սննդամթերքների արտադրության և տեղափոխման բոլոր փուլերում պետական վերահսկողությունը:

Հողամասերի միավորման հայեցակարգն ընդունվել է 2011թ.՝ մեծապես տրոհված հողակտորների և գյուղատնտեսության ցածր արտադրողականության հիմնախնդիրները լուծելու նպատակով: Հայեցակարգով հողերի միավորման ուղղությունները սահմանված են հետևյալ կերպ՝

1. աջակցություն գյուղատնտեսությունից դուրս աշխատանք գտնելուն և գյուղական ՓՄՁ-ների զարգացմանը
2. կոռպերատիվների զարգացում հողակտորների միավորման միջոցով
3. հիմնական գյուղատնտեսության և վերամշակման սերտաճում /ուղղահայաց սերտաճում/

4. օրենսդրական փոփոխություններ, որոնք միտված են կանխարգելելու հողերի լքումը կամ դրանց անհամապատասխան օգտագործումը, օր.՝ վարելահողերի օգտագործումը որպես արոտավայրեր
5. խոշոր ներդրողների գրավելու համար ներդրումային միջավայրի բարելավում
6. ռիսկերի մեղմացում՝ դեպի դուրս միգրացիայի, սոցիալական և քաղաքական ռիսկեր:

Հողերի միավորման գործընթացը պետք է լինի հավասարակշռված և գյուղական բնակչության համար այլընտրանքային զբաղվածության ապահովմամբ: Այդ ուղղությունները համահունչ են գյուղական շրջանների զարգացման՝ ԵՄ-ի քաղաքականությանը և շրջանների համաչափ զարգացմանը: Իրականացվելիք գործողությունները նախատեսված են ԿԶԾ-ի իրականացման ծրագրերում: Սակայն այդ գործընթացը շատ դանդաղ է տեղի ունենում, իսկ ֆինանսավորումը չափազանց սահմանափակ է: Միջնաժամկետ ծախսերի շրջանակով նոր, իննովացիոն ծրագրերի, ներառյալ հողերի միավորման պիլոտային ծրագրի համար նախատեսված է ընդամենը 0.68 տոկոս: Հայեցակարգում նշված են այդ ուղղությունները կատարելու ժամկետներն ու պահանջվող ֆինանսավորումը, ուստի հարկավոր է գործընթացը խթանել, իսկ հողերի միավորումը պետք է նշվի որպես առաջնահերթ հարց:

Անցած տասնամյակում *գյուղատնտեսական քաղաքականությունն* իրականացվել է կառավարության կողմից աջակցություն ստացած մի շարք ծրագրերի միջոցով: Այդ ծրագրերն ուղղված են եղել սերմնաբուծության և անասնաբուծության զարգացմանը, բույսերի ամենավտանգավոր հիվանդությունների դեմ պայքարին, անասունների առողջության պահպանմանը, սննդամթերքների անվտանգության ապահովմանը, հողերի մելիորացիոն պայմանների բարելավմանը, ոռոգման համակարգերի պահպանմանն ու զարգացմանը, վարկերի մատչելիության ապահովմանը, ենթակառուցվածքների զարգացմանը, ամենաանբարենպաստ գոտիներում գյուղացիների սուբսիդավորմանը, գյուղատնտեսական ոլորտի խորհրդատվությանը և առաջավոր տեխնոլոգիաների ներդրմանը: Գործիքների թվին են պատկանում 2007-2012թթ. կառավարության ընդունած որոշումները՝ հանքային պարարտանյութերի և դիզելային վառելիքի գնման համար մասնակի սուբսիդիաների տրամադրումը, վարկերի տոկոսադրույքները, երիտասարդների ներկրումը և այլ որոշումներ, որոնք անմիջականորեն կարգավորվում են և աջակցում գյուղատնտեսությանն ու գյուղական վայրերի զարգացմանը: Այնուամենայնիվ գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացման ռազմավարության իրականացման մասշտաբները դեռևս հեռու են նպատակներից և կարիքներից: Գյուղատնտեսության նախարարությունը խոշոր եղջերավոր անասունների բուծումը կառուցել է երկու հիմնական առանցքների վրա՝ կովկասյան ցեղատեսակների գենետիկական հատկանիշների բարելավում և Հայաստանի պայմաններին հարմարեցված մաքուր ցեղատեսակների և բարձր արտադրողականության անասունների ներկրում: “2007-2015թթ. Հայաստանի Հանրապետությունում խոշոր եղջերավոր անասունների բուծման ծրագրի” նպատակը մինչև 2015թ. ավելի քան 1000 զիմենթայան, հոլշթեյն և շվեյցարական ցեղատեսակների երիտասարդների ներկրումն է: Արդեն իսկ դրական արդյունքներ կան արտադրողականության զգալի ավելացման վերաբերյալ զեկույցների առումով: Հայաստանում կաթի գծով ինքնաբավության աստիճանը կազմում է 98 տոկոս /չհաշված կարագը/:

2010-2011թթ. սերմնաբուծության բնագավառում իրականացվել են մի շարք ծրագրեր՝ “Ցորենի սերմացուի աճեցումը և սերմերի արտադրության զարգացումը 2010-2014թթ.”, “Գարու արտադրության զարգացումը”, “Գարու սերմացուի արտադրության զարգացումը” և “Եզիպտացորենի

սերմացուի արտադրության զարգացումը”։ Այս ծրագրերը ներառում էին 2011թ. Ռուսաստանից էլիտար սերմացուի, 2008թ. Վրաստանից և Հունգարիայից վերարտադրության նպատակով եգիպտացորենի ներկրումը։ Մերմ արտադրողների համար առկա են ցորենի և գարու սուբսիդիաներ, որպեսզի արտադրողների համար պահպանվեն սերմերի գները։

Գյուղատնտեսության նախարարությունը պատասխանատու է գյուղատնտեսության և անտառտնտեսության քաղաքականության զարգացման և իրականացման համար։ *Բնապահպանության* համար օրենսդրական դաշտն անկատար է, չկան օրենքի հարկադիր կատարման մեխանիզմներ։ Վերահսկողությունը, կարգավորումը և նախարարության գործառնությունները բավարար չեն և տրոհված են։ Գյուղատնտեսության ոլորտի քաղաքականության հիմնական մասը մնում են արտադրությունն ու պարենային անվտանգությունը։ Նշելու արժանի մյուս ռազմավարական փաստաթղթերն են բնապահպանական քաղաքականությունն ու ծրագրերը, ինչպիսիք են 2002թ. Անապատացման դեմ պայքարի ազգային ծրագիրը և միջազգային բնապահպանական պայմանագրերի շրջանակում Հայաստանի պարտավորությունների լույսի ներքո այլ փաստաթղթեր։

2007-2011թթ. Հայանտառը՝ գյուղատնտեսության նախարարության մասնաճյուղ, իրականացրել է 14.5 հազար հա անտառտնտեսության և անտառների վերականգնման ծրագրեր, սակայն անօրինական փայտամթերումների, անտառների անբավարար կառավարման և անտառտնտեսության ոլորտի շարունակական թերֆինանսավորման հիմնախնդիրները լուրջ մտահոգությունների տեղիք են տալիս։ 1995թ. մշակվեց անտառտնտեսության ազգային քաղաքականությունը, որը հիմնված էր անտառային պաշարների պահպանման, անտառների վերականգնման և անսպառ բազմակի օգտագործման վրա։ 2005թ. հոկտեմբերին Հայաստանն ընդունեց Անտառային նոր օրենսգիրքը, որի կոնկրետ նպատակները ներառում էին անտառտարածության ծառայությունը, մասնավոր անտառատնկարանների խթանումը և անսպառ անտառտնտեսության պրակտիկայի վերաբերյալ հանրության իրազեկվածությունը։ Պաշարների սահմանափակումները խանգարում են արդյունավետ անտառային քաղաքականության լիարժեք իրականացմանը։ Չեն գործադրվել այն օրենքները, որոնցով արգելվում են անօրինական փայտամթերումները, հիմնականում որպես վառելիք։ Ի լրումն կառավարության գործադրած ջանքերի, հասարակական կազմակերպությունները նույնպես ակտիվացել են անտառների վերականգնման և անապատացման դեմ պայքարի հարցում։

Օրգանական գյուղատնտեսությունը Հայաստանի *կայուն զարգացման* մի մասն է և ագրոպարենային քաղաքականության առաջնահերթ ոլորտներից է։ Օրգանական գյուղատնտեսությունը բիզնես հնարավորություն է այն գյուղացիների և ներդրողների համար, ովքեր ներգրավված են գյուղատնտեսության և սննդամթերքի արտադրության մեջ։ Այդ միջամտությունները հիմնականում կատարվում են դոնորների տրամադրած գումարների միջոցով, պետական բյուջեից որևէ աջակցություն չկա։

Տարածքային կառավարումը և տեղական ինքնակառավարումը

Հայաստանում համաչափ տարածքային զարգացման հայեցակարգը մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել է 2011թ. հունիսի 30-ին։ Հայեցակարգում նախատեսվում է առանձին համայնքների, տարածքների և մարզերի գնահատումը՝ օգտվելով ընդհանուր ցուցիչներից և

նկարագրելով կյանքի որակը և տնտեսական զարգացման մակարդակը: Արդյունքում հնարավոր կլինի յուրաքանչյուր նախագիծ չափել ըստ նշված ցուցիչների վրա դրա ազդեցության և ապահովել համաչափ տարածքային զարգացում: Մարզային աշխատանքը կատարվել է մարզերի զարգացման ծրագրերի մշակմանն աջակցելու միջոցով:

Ամենաաղքատ համայնքները կենտրոնացված են սահմանների երկայնքով, լեռնային շրջաններում և երկրաշարժի գոտում: Հայաստանի հոյսիս-արևմուտքում Շիրակը, հյուսիսում Լոռին և երկրի կենտրոնական մասում գտնվող Գեղարքունիքն ամենաաղքատ մարզերից են: Մարզերի անհավասարակշիռ զարգացումը վատթարացնում է գյուղական բնակչության սոցիալական պայմանները, արդյունքում կայուն կերպով ավելանում է միգրացիան: Սա հատկապես ճիշտ է սահմանային և լեռնային գյուղերի պարագայում, որտեղ աղքատության աստիճանը և գործազրկության մակարդակն ամենամեծն են: Ներդրումների համար հրապուրիչ չլինելով՝ այդ տարածքները ձեռնարկատիրության համար ունեն ամենացածր ներուժը, քիչ հնարավորություններ կան բնակչության եկամուտներն ավելացնելու համար: ՀՀ կառավարությունն ընդունել է մի քանի իրավական ակտեր, որոնք կիթանեն անբարենպաստ տարածքների զարգացումը:

- Հողային օրենսգրքով նախատեսված է, որ պետական և համայնքային սեփականության հողերն այն շրջաններում, որոնք մոտ են գտնվում սահմաններին, լեռնային, ալպիական, աղետի գոտուն և լքված բնակավայրերին, ընտանիքներին նվիրաբերվեն գյուղատնտեսական գործունեության համար և/կամ տներ կառուցելու նպատակով: Այդ ընտանիքները նախկինում չպետք է մասնակցած լինեն հողի սեփականաշնորհմանը կամ հող ձեռք բերած լինեն տուն կառուցելու համար:
- “Կրթության մասին” օրենքում նախատեսված են արտոնություններ ուսուցիչների համար պետական միջնակարգ դպրոցներում սահմանի երկայնքով, լեռնային և բարձր լեռնային շրջաններում:
- Հայեցակարգային ծրագիրը և Գործողությունների ծրագիրը ՀՀ սահմանային և ալպիական գոտում գտնվող համայնքների առաջնահերթ խնդիրները լուծելու համար հաստատվել են ՀՀ կառավարության կողմից 1999թ. ապրիլի 21-ին, որոշում թիվ 246:
- Լեռնային համայնքների զարգացման միջոցառումները և դրանց կատարման ուղենիշային սկզբունքները ՀՀ կառավարության կողմից հաստատվել են 2001թ. մարտի 22-ի թիվ 222 որոշմամբ: Դրանք են՝ նոսր բնակեցված համայնքների հզորացումը, տրանսպորտի ընդլայնումը, ենթակառուցվածքային ցանցերի կառուցումը և այլն:
- Սահմանամերձ գոտու տարածքների ամրացման նպատակով հատկապես կարևոր է 2002թ. մայիսի 20-ի ՀՕ-356-Ն որոշմամբ ընդունված “ՀՀ սահմանամերձ տարածքների համապարփակ զարգացման մասին” օրենքը:
- Ամեն տարի “Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին” օրենքի հիման վրա ընդունվող ՓՄՁ-ների զարգացման պետական ծրագրերում նախապատվությունը տրվում է գյուղական, հատկապես սահմանամերձ և լեռնային համայնքներին:
- 2009-2010թթ. պետական հողակտորները, որոնք դուրս են համայնքների վարչական սահմաններից, փոխանցվել են համայնքներին:

- 2005թ. ի վեր պետական սոցիալական նպաստների գումարը հիմնված է ընտանիքի խոցելիության միավորի, բնակության վայրի /սահմանամերձ կամ բարձր լեռնային գոտի/, ընտանիքի երեխաների թվի վրա /4 կամ ավելի երեխաներ/:

Գյուղատնտեսության և գյուղական վայրերի զարգացման համար հատկացված պետական բյուջեի միջոցները

Գյուղատնտեսությունից ստացվող բյուջեի եկամուտների հիմնական աղբյուրներն են հողի հարկը, ոռոգման ջրերի համար գանձվող վճարները, խոշոր ագրոձեռնարկություններից և գյուղացիական տնտեսություններից ստացվող ԱԱՀ-ն, պետական սոցիալական ապահովագրության հիմնադրամին արվող վճարումները: Գյուղատնտեսական ապրանքներ արտադրողները և հողատերերը ենթակա են այլ հարկերի, այդ թվում՝ անշարժ գույքի հարկը և մաքսավճարները: Հողատերերը Հայաստանում հողի հարկ են վճարում հողի տեսակի /բերքատվություն/ հիման վրա: ԱԱՀ-ի շեմը 58.35մլն դրամ է /մոտավորապես 110,000 եվրո/:

2012թ. պետական բյուջեով նախատեսված են 18,42 մլրդ դրամ սուբսիդիաներ /բյուջեի ծախսերի 1.7 տոկոսը/ և 7.0 մլրդ դրամ դրամաշնորհներ: Գյուղատնտեսության համար նախատեսված է 11.485մլրդ դրամ /բյուջեի ծախսերի 1.07 տոկոսը/, ոռոգման համակարգերի համար՝ 12.95մլրդ դրամ /բյուջեի ծախսերի 1.2 տոկոսը/, իսկ անտառտնտեսության համար՝ 0.76մլրդ դրամ:

Բյուջեի ծախսերը 2008-2013թթ. համար, միլիոն դրամ

Տարի	Բյուջե	Ընդամենը	Ներառյալ		
			Գյուղատնտեսություն	Անտառտնտեսություն	Ոռոգում
2008	Պլանավորված	33,051.0	11,545.7	1,918.1	19,586.9
	Փաստացի	24,482.5	10,951.9	1,789.1	11,741.5
2009	Պլանավորված	35,934.0	11,698.2	1,831.5	22,404.3
	Փաստացի	36,112.2	13,671.2	1,488.2	20,952.8
2010	Պլանավորված	n/a	7,809.3	916.0	n/a
	Փաստացի	40,036.6	7,171.7	853.3	32,011.6
2011	Պլանավորված	36,289.9	6,438.3	789.8	29,061.8
	Փաստացի	42,382.1	5,808.4	822.8	35,750.9
2012	Պլանավորված	25,200.2	11,485.6	762.7	12,951.9
2013	Պլանավորված	21,936.0	10,060.1	771.6	11,104.2

Աղբյուրը՝ Ֆինանսների նախարարության տվյալների հիման վրա, www.minfin.am

2008-2011թթ. գյուղատնտեսության ոլորտի հատկացումներն զգալիորեն ավելի քիչ են, քան ոռոգման համար տրված հատկացումները: Միաժամանակ գյուղատնտեսության ֆինանսավորումը 2010-2011թթ. համարյա կիսով չափ նվազել է, սակայն անգամ այդ գումարներն ամբողջովին չեն ֆինանսավորվել, ինչպիսին է անտառտնտեսության դեպքը: 2013թ. բյուջեով նախատեսվում է 2011թ. համեմատությամբ 56 տոկոսով ավելացնել գյուղատնտեսության ֆինանսավորումը: Անտառտնտեսության ֆինանսավորումն այս անգամ նույնպես բացասական միտումներ ունի:

Պետական բյուջեի հատկացումները ներառում են սուբսիդավորված վարկեր գյուղատնտեսության ոլորտի համար: Հատուկ պայմաններ են առաջարկվել 225 ամենախոցելի համայնքների համար: 2012թ. սուբսիդիաները երկարացնելու մասին կառավարության թիվ 317-Ն կարգադրությունը հաստատվել է 2012թ. մարտի 7-ին: Գյուղատնտեսության զարգացմանն աջակցելու նպատակով 2011թ. ընդունվել են մի շարք օրենսդրական որոշումներ՝ վեց օրենք ընդունվել է կառավարության կողմից, չորսը՝ վարչապետի: Դրանք վերաբերում են գյուղատնտեսության գանազան ենթաձյուղերին՝ սննդամթերքի անվտանգություն, անասունների առողջություն, գյուղատնտեսական մեքենաների կիրառություն և մշակաբույսերի նոր տարատեսակների պաշտպանություն:

ԳԳՎԶ-ի 2010-2020թթ. ռազմավարության մեջ նշված առաջնահերթությունները ֆինանսավորելու նպատակով բյուջեով նախատեսված գումարները բավարար չեն, ուստի դոնորների և պետություն-մասնավոր գործընկերության կողմից հարկավոր են լրացուցիչ միջոցներ:

Առաջնահերթ գյուղատնտեսական ծրագրերի պետական ֆինանսավորում, միլիոն դրամ

	Ծրագրեր	Տարի			
		2008	2009.	2010.	2011.
1	Բույսերի պաշտպանություն	300.0	300.0	150.0	101.0
2	Անասունների պատվաստում	1353.8	1531.4	1000.0	1000.0
3	Փորձի տարածման ծառայություններ /ԳԱԿ/	141.5	183.1	293.1	293.1
4	Անասունների հիվանդությունների ախտորոշում և լաբորատոր քննություն	184.3	217.4	185.0	190.9
5	Գյուղատնտեսական նշանակության հողերի պահպանություն և բարելավում, ինժեներական ենթակառուցվածքների վերականգնում	369.1	844.7	547.1	710.4
6	Պետական սուբսիդիաներ հողօգտագործողներին	1645.0	1602.4	558.0	1498.1
7	Անասնաբուծության զարգացման ծրագիր	500.0	500.0	0.0	301.2
8	Անասնաբուծության զարգացման ծրագիր /Ճապոնիայի կառավարության “Դրամաշնորհային աջակցության ծրագիր աղքատ գյուղացիներին” ծրագրի շրջանակում/	0.0	0.0	345.0	0
9	Ցորենի և գարու սերմերի արտադրության պետական ծրագիր	105.1	188.2	76.6	0
10	Անտառների պահպանություն, պաշտպանություն և անտառների տնկում	1465.5	1465.5	765.5	708.0
11	Անտառների տնկում գործընկերության հիմնադրամների միջոցով, որոնք ստեղծվել են Ճապոնիայի կառավարության կողմից “Պարենի արտադրության աճ” ծրագրի շրջանակում	400.0	300.0	0.0	0

Աղբյուրը՝ գյուղատնտեսության նախարարության տվյալներ

Միջնաժամկետ բյուջետային շրջանակ /ՄԲԾ, 2011-2013թթ./¹²

Բյուջետային գործընթացն ամրապնդելու նպատակով գյուղատնտեսության ոլորտի համար 2011-2013թթ. միջնաժամկետ բյուջետային շրջանակում հաշվի են առնվում գյուղատնտեսության հետևյալ խնդիրները՝

- օրենսդրական փոփոխություններ գյուղատնտեսության ոլորտում և գյուղատնտեսության կառավարման բարելավում.
- հողի բերքատվության պահպանում և բարելավում.
- բարձրորակ գյուղատնտեսական արտադրանքի բերքահավաք և կորուստների նվազեցում.
- բնակչության ապահովումը բուսական և կենդանական ծագման անվտանգ սննդամթերքներով /ներկրվող և տեղական արտադրության/.
- մարդու և կենդանիների վարակիչ հիվանդություններից բնակչության պաշտպանություն.
- գյուղատնտեսության արտադրողականության բարձրացում.
- ֆերմերային տնտեսություններին բարձրորակ սերմերի մատակարարում.
- անտառների պահպանություն, վերականգնում, պաշտպանություն և կայուն կառավարում.
- լավագույն փորձի խթանում, նոր տեխնոլոգիաների ընդունում և խորհրդատվության մատուցում.
- գյուղատնտեսական նշանակության հողօգտագործողներին ծառայությունների մատուցում և խորացում:

2011-2013թթ. քաղաքականությունը նպատակ ունի մեծացնել ոլորտի արդյունավետությունը և ավելացնել ծառայությունների մարզային գործունեությունը: Արդյունքում հնարավորություններ կստեղծվեն գյուղատնտեսության հետագա զարգացման, գյուղական վայրերում բնակչության թվաքանակի ավելացման, ֆերմերային տնտեսությունների իրական եկամուտների ավելացման, երկրում սննդամթերքի մատակարարման և անվտանգության աստիճանը բարձրացնելու և աղքատությունը նվազեցնելու համար: Մանրամասն դրույթներ են ամրագրված յուրաքանչյուր բյուջետային հատկացման գործողությունների համար: Միաժամանակ երկրում պարենային անվտանգության մակարդակի բարելավումը մնում է 2011-2013թթ. գյուղատնտեսության զարգացման քաղաքականության հիմնական մարտահրավերը: “Գյուղատնտեսության ոլորտի համար վարկերի տոկոսադրույքների համար սուբսիդիաներ” ծրագիրը պետական բյուջեով նախատեսված ծրագրերի մի մասն է, որոնք իրականացվում են “Գյուղական վայրերի տնտեսական զարգացում ԾԻԳ” պետական կազմակերպության կողմից:

¹² <http://www.minfin.am/up/mtef/2012-2014MTEF%20final%20version.pdf>

ՄԲՇ-ում և բյուջեում ներառված ծրագրեր /հազար դրամ/

	2011	2012	2013
Համաշխարհային բանկ			
Համայնքային ռեսուրսների կառավարման և գյուղատնտեսական մրցունակության ծրագիր	1,484,255	1,933,543	2,085,980
Ոռոգման համակարգերի շտապ վերականգնման ծրագիր	4,252,466.8	0	0
Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ /ԳԶՄՀ/			
Գյուղական վայրերի հզորությունների ստեղծման ծրագիր	1,349,870	1,152,504	1,152,504
Ֆերմերների համար դրամաշնորհային ծրագրի մարքեթինգի հնարավորություններ	20,860	0	0
ՆԱԵՆ-ի միջազգային զարգացման հիմնադրամ			
Գյուղական վայրերի հզորությունների ստեղծման ծրագիր	1,920,305	2,190,279	2,190,279
Դանիա			
Աջակցություն «Ֆերմերների համար մարքեթինգի հնարավորություններ» դրամաշնորհային ծրագրին	259,544	0	0

Բավարար պետական միջոցներ չկան գյուղատնտեսության և գյուղական վայրերի զարգացումը կաշկանդող պրոբլեմները լուծելու համար: Այդուհանդերձ կան շատ նախաձեռնություններ, որոնք շարժման մեջ են դրվում միջազգային կազմակերպությունների և հ/կ-ների կողմից՝ հզորություններ ստեղծելու հարցում գյուղական համայնքներին աջակցություն ցուցաբերելու համար և գյուղացիական տնտեսությունների բզամազանեցման ուղղությամբ: Որպես օրինակ արտադրության այնպիսի արժեքավոր մեթոդներ, ինչպիսիք են օրգանական գյուղատնտեսությունը, ագրո և էկոտուրիզմը և համապատասխան տեղական ձեռնարկությունները, գյուղական համայնքներում ինտերնետի մատչելիությունը, ՓՄՁ-ների զարգացումը առևտրի, զբոսաշրջության, հյուրընկալության տարրերով և ձեռքի աշխատանքներով:

3.3 Ինչպես են կառավարության համապատասխան ծրագրերը տեղավորվում ԳԳՇԶԵՀԾ-ի մեթոդների մեջ

ՀՀ կառավարության քաղաքականությունն ու ծրագրերը միասին բարձրացնում են ԳԳՇԶ-ի հիմնասյուները՝

1. բարելավել գյուղական վայրերում գոյության միջոցները ներառական տնտեսական աճի դյուրացման և գյուղական վայրերի կայուն զարգացման միջոցով
2. նպաստել պարենային անվտանգությանը մատչելի գներով սննդամթերքի ավելի կայուն մատակարարմամբ՝ միաժամանակ նպաստելով պարենային անվտանգության ամրապնդմանը և բարձրացնելով որակի չափանիշները, որպեսզի առավել օգուտ ստանան արտահանման շուկաներից
3. բարելավել գյուղատնտեսության և գյուղական վայրերի վարչարարությունը՝ զարգացնելով ինստիտուցիոնալ և շահագրգիռ կողմերի կարողությունները, ներառյալ գյուղատնտեսության ոլորտի ռազմավարության մշակումն ու կառավարումը:

Այնուամենայնիվ առաջնահերթությունների ընտրովի իրականացման համար առկա բյուջետային միջոցները սահմանափակ են: Այդ կարևոր գործողություններին աջակցելու համար մեթոդաբանության կամ գործողությունների քննարկում կամ բյուջետային դաշտ չկա:

Գյուղատնտեսության նախարարության գործունեության ուղղությունների առաջնահերթությունները և ծրագրերն ընդհանուր առմամբ համապատասխանում են 1-ին առանցքին՝ Գյուղատնտեսության արտադրողականության բարելավում, շուկայի արդյունավետություն և պարենային անվտանգություն և որակի չափանիշներ: Տարածքային կառավարման և էկոնոմիկայի նախարարությունների կողմից մշակված տարածքային զարգացման և ՓՄՁ-ների աջակցության ծրագրերից շատերը համահունչ են ԳԳՇԶԵՀԾ-ի 2-րդ առանցքին՝ Գյուղական շրջանների տնտեսության զարգացում /բազմազանություն և ենթակառուցվածքներ/: ԳԳՇԶԵՀԾ-ի ծրագրին առավել համապարփակ համապատասխանությունը պահանջում է համապատասխան նախարարությունների, քաղաքացիական հասարակության, ֆերմերների, վերամշակողների, հետազոտողների և այլ շահագրգիռ կողմերի առավել լայն մասնակցություն: 2012թ. նոյեմբերի 19-ին Բյույսելում տեղի ունեցած տարածաշրջանային տեխնիկական սեմինարում հայ պատվիրակների եզրակացությունները լուսաբանել են երեք ամենակարևոր առաջնահերթությունները հետևյալ ձևով /մանրամասն նշված են ստորև բերվող 8.2 բաժնում/՝

1. տրոհված հողային հողինգներ և արտադրողների համագործակցություն և սերտաճում
2. ռազմավարական նշանակության հացահատիկային և կենդանական ծագման արտադրանքում պարենային անվտանգության բացակայություն
3. սննդամթերքների թերզարգացած անվտանգության համակարգ՝ սանիտարա-անասնաբուժական

4. Ինստիտուցիոնալ կարողությունների գնահատումը

4.1. ԳԳՇԵՇՕ-ի մոտեցումները կառավարելու, իրականացնելու և դիտարկելու՝ պետական մարմինների գնահատականը

Պետական մարմինները

1. Գյուղատնտեսության նախարարության առաքելությունը ագրոպարենային ոլորտը զարգացնելու պետական քաղաքականության մշակումն ու խթանելն է մրցունակության և արտադրողականության բարձրացման, գյուղական վայրերի զարգացման, ինչպես նաև սննդամթերքների /Սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն՝ ՄԱՊՕ/ և երկրի անվտանգության ապահովման միջոցով՝ միջոցներ հատկացնելով սոցիալական բարեկեցության աճի համար: Գյուղնախարարությունը նաև պատասխանատու է անտառտնտեսության համար: Գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացման համար լինելով առանցքային պատասխանատու մարմինը՝ գյուղնախարարությունը տարածքային կառավարման նախարարության հետ մեկտեղ կլինի բնական իրավասու մարմին:

Գյուղնախարարության կարողություններն առանձին վերցրած բավարար չեն ԳԳՇԵՇՕ-ի մոտեցումը կառավարելու, իրականացնելու և դիտարկելու համար: Գյուղնախարարության կազմում կպահանջվի ունենալ մասնագիտացված վարչություն՝ իրականացման գործընթացը համակարգելու և խորհրդատվական խորհրդի ու շահագրգիռ այլ կողմերի հետ կապ ունենալու համար: ԳԳՇԵՇՕ-ի մոտեցման պատշաճ կառավարումը և իրականացումն ապահովելու համար հարկավոր է կարողությունների զարգացում: Սա վերաբերում է աշխատակազմի ուսուցմանը, ինչպես նաև նախարարության վերլուծական կարողությունների հզորացմանը, որը խոչընդոտվում է գյուղատնտեսական տվյալների պատշաճ վիճակագրության և գրանցամատյանների բացակայության պատճառով: Պետք է սահմանվեն գյուղական շրջանների զարգացման ծրագրերին վերաբերող գործառնություններն ու իրավասությունները:

2. Սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը, որը ենթակա է գյուղատնտեսության նախարարությանը, առանցքային դերակատարություն ունի ԵՄ և միջազգային առևտրի ինտեգրման գործընթացներում, հատկապես /ԵՄ խորհրդատվական խմբի ցուցաբերած աջակցությամբ և վարչապետի անմիջական վերահսկողության ներքո/ սանիտարական և բուսասանիտարական միջոցների /ՄԲ/ մատով՝ ԽՀԱԱԳ-ի բանակցություններին նախապատրաստվելիս: Հատուկ շեշտադրվում է ԵՀՔ-ի Գործողությունների ծրագիրը ՄԲ-ի և պարենային անվտանգության ռազմավարության ոլորտում՝ օրենսդրության արդյունավետ կատարում, սննդամթերքների և անասնակերի անվտանգության վերահսկողության համակարգի գործնական կատարում, կենդանիների և բույսերի առողջություն, լաբորատոր հզորություններ և աջակցություն իրավասու մարմնի համար ուսումնական ծրագրերի նախապատրաստման և իրականացման գործում:

Սննդի անվտանգության տեսչությունը, որը գործում է Սննդամթերքի անվտանգության ծառայության ենթակայությամբ, բավականաչափ գործիքներ և լիազորություն չունի, որպեսզի մոնիտորինգի ենթարկի սննդամթերքի անվտանգությունը՝ լաբորատորիաները պատշաճ կերպով սարքավորված չեն և չեն համապատասխանում միջազգային կանոններին: ՄԱՊՕ-ի հզորությունները պետք է

լրջորեն ամրապնդվեն, իսկ ռիսկերի կանխարգելման և դրանց տեսչության գործառնությունները տարանջատվեն:

Փորձի տարածման ծառայություն

Գյուղատնտեսական փորձի տարածման ծառայությունը կարևոր դերակատարություն ունի գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացման ոլորտում խորհրդատվության, ուսուցման և գյուղատնտեսական լավագույն փորձի միջոցով: Գյուղատնտեսական փորձի տարածման ծառայությունները տրամադրվում են այսպես կոչված գյուղատնտեսական աջակցության կենտրոնների /ԳԱՄԿ/ կողմից Հայաստանի տասը մարզերից յուրաքանչյուրում: 1999թ. դրանց հիմնադրումից ի վեր կենտրոնների փորձագետների համար աջակցություն տրամադրելու նախաձեռնությունների ընթացքում կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ, սակայն այդ կենտրոնների անարդյունավետ կառուցվածքի և ֆինանսների բացակայության արդյունքում ներուժը սահմանափակ է: Չնայած գյուղացիների կողմից փորձի տարածման որակյալ ծառայություններ մատուցելու հստակ անհրաժեշտությանը՝ դրանց աճը սահմանափակվում է ծառայությունների դիմաց իրական վճարներ կատարելու՝ ֆերմերների սահմանափակ հնարավորություններով և հետազոտություններ կատարողների հետ թույլ կապերով: Այս բացը մասնակիորեն ծածկվում է դոնորների նախաձեռնությունների շնորհիվ և զանազան հ/կ-ների կողմից: Քանի որ այդ կենտրոնները գյուղացիներին ամենամոտ գտնվող ու մատչելի ռեսուրսներ են, նրանց մասնակցությունը ԳԳԵՇԾ-ի նախապատրաստությանն ու իրականացմանը առանցքային կլինի, սակայն հարկ կա հզորացնել նրանց ներուժը և մեծացնել արդյունավետությունը:

3. Տարածքային կառավարման նախարարության առաքելությունը մարզերում և համայնքներում տեղական ինքնակառավարման և մարզային կառավարման բնագավառում պետական քաղաքականության մշակումը, խթանումն ու իրականացման մոնիտորինգն է: Ներկայումս ՏԿՆ-ն մշակում, համակարգում և իրականացնում է մարզերի զարգացման քաղաքականությունը և համակարգում է համապատասխան մարզային իշխանությունների ու գյուղական համայնքների գործունեությունը: Ի լրումն դրա, նախարարությունը վերահսկում է Ռոզման պետական կոմիտե, Պետական միգրացիոն ծառայություն և Պետական ազգային արխիվ ոչ առևտրային կազմակերպությունների գործունեությունը: Այս նախարարության պարտականություններից է գյուղական շրջանների զարգացումը, սակայն իրավասությունները հստակ կերպով սահմանված չեն: ՏԿՆ-ն համակարգում է մարզային կառավարումն ու ենթակառուցվածքների /օր.՝ էլեկտրաէներգիայի և գազի/ զարգացման գործառնությունները:
4. Էկոնոմիկայի նախարարության առաքելությունը համաշխարհային տնտեսությանը երկրի ինտեգրման ընդլայնումն ու խորացումն է՝ միջազգային ու հիմնական որակի և մակարդակի ձեռքբերում արտաքին տնտեսական գործունեության համար, աշխատող առևտրական կառույցների և ենթակառուցվածքների ապահովում, առևտուր անելու դյուրացում, որպես լրացուցիչ միջոց՝ առևտրի խթանման և զարգացման՝ միջազգայնորեն ապացուցված գործիքների և ծրագրերի ընդունում: ԷՆ-ն նշանակվել է ԵՄ-ի հետ ԽՀԱԱԳ-ի /ապահովում է մի շարք ոլորտներում լուրջ և տևական ինստիտուցիոնալ բարեփոխումների շրջանակ և վերը նշված գործողությունների արդյունավետ իրականացման իրական երաշխիք/ համար բանակցող մարմին: Այդ

գործողություններն են՝ ՓՄՁ-ի զարգացումը, սպառողների իրավունքների պաշտպանությունը, արտահանման ընդլայնումն ու խթանումը: ԷՆ-ի լիազորությունների մեջ է մտնում նաև որակի ենթակառուցվածքների բարելավման ծրագիրը:

5. Հայաստանի փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն /ՀՓՄՁԶԱԿ/: 2000թ. ՀՀ կառավարությունը փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացումը ճանաչեց որպես տնտեսական զարգացման առաջնահերթություն, ինչպես նշված է նույն տարում ընդունված “ՀՀ-ում ՓՄՁ-ի զարգացման քաղաքականության և ռազմավարության հայեցակարգում”: “Փոքր ու միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին” համապատասխան օրենքի ընդունումից հետո 2002թ. ստեղծվեց ՀՓՄՁԶԱԿ-ն: ՓՄՁ-ի զարգացման քաղաքականության /ռազմավարության/ իրավասությունը, ինչպես նաև ՓՄՁ-ի զարգացման և պետական աջակցության ամենամյա ծրագրերը ԷՆ-ն են վերապահված, իսկ ՀՓՄՁԶԱԿ-ն կատարող հիմնական կազմակերպությունն է: Կենտրոնը միկրո, փոքր և միջին ձեռնարկություններին տրամադրում է տեխնիկական, տեղեկատվական և ֆինանսական աջակցություն: Ֆինանսական աջակցությունն ստացվում է վարկային երաշխիքների, իսկ որոշ դեպքերում՝ արժեթղթերի տեսքով:

2012թ. ՀՓՄՁԶԱԿ-ն ներկայացրեց ռազմավարական նոր ուղղություն՝ “Տեղական տնտեսական զարգացումը”: Նպատակը համայնքների տնտեսական ներուժի պարզումն է և տեղական մրցունակությունն ամրապնդելու համար տնտեսական զարգացման նախաձեռնությունների ձեռնարկումը: Արդյունքում մշակվել են գերմանական ՄԱՄԳ մեթոդը /մրցունակ առավելությունների մասնակցային գնահատում/ և ճապոնական ՄԳՄԱ /մեկ գյուղ, մեկ ապրանք/ հայեցակարգը: Այդ հայեցակարգերը ենթադրում են տեղական մասնագիտությունների արժեքավոր ապրանքների ստեղծում, որոնք մրցունակ են ներքին և արտաքին շուկաներում, որոնցով կարելի է տեղական համայնքային տնտեսության մասնակցային վերլուծության միջոցով հաստատել հավելյալ արժեքի շղթաներ:

Տարիների ընթացքում ՀՓՄՁԶԱԿ-ն բոլոր տասը մարզերում գտնվող իր մասնաճյուղերի միջոցով ՓՄՁ-երին աջակցելու զգալի փորձ է կուտակել: Գյուղական շրջանների զարգացման՝ ՀՀ կառավարության առաջնահերթություններին համահունչ այդ կենտրոնների գործունեությունը պետք է ուղղվի դեպի գյուղական և սահմանամերձ գոտիներ: Դրանց ուշադրության կենտրոնում ավելի շուտ միկրո ձեռնարկություններն են, քան ՓՄՁ-երը: 2009թ. ֆինանսական ճգնաժամից հետո պետական աջակցությունը կտրուկ կերպով նվազել է՝ 2009թ. 600մլն դրամից դարձել է մոտ 150մլն դրամ /2011թ./: Ուշագրավ է այն, որ այդ գումարից ընդամենը 50մլն դրամն է հատկացված ծրագրի իրականացման համար, իսկ մնացածը՝ 100մլն դրամ, նախատեսված է կենտրոնի գործունեության համար: Դրանով կենտրոնից պահանջվում էր հիմնական ուշադրությունը կենտրոնացնել նոր ձեռնարկությունների սեփականատերերի համար բիզնես ուսուցում կազմակերպելու վրա: Կենտրոնն ակտիվորեն համագործակցում է տարբեր դոնորների հետ: Կենտրոնը Ձեռնարկությունների ցանց Եվրոպա /ՁՑԵ/ կազմակերպության անդամ է: Ցանցը Եվրոպայով մեկ ձեռնարկություններին առաջարկում է աջակցություն և խորհրդատվություն և օգնում է նրանց լավագույնս օգտվել Եվրամիության տրամադրած հնարավորություններից: 2012թ. կենտրոնը ջանքեր է գործադրել նոր ձեռնարկությունների ղեկավարներին ցուցաբերվող ֆինանսական

աջակցությունը մեծացնելու ուղղությամբ՝ 2011թ. նրանց թիվը եղել է 25, 2012թ.՝ 100, ծրագրվում է 2013թ. նրանց թիվը հասցնել 200-ի¹³:

6. Ջարգացման հայկական գործակալությունը /ՁՀԳ/ պետական գործակալություն է, որն ստեղծվել է ՀՀ կառավարության կողմից՝ օտարերկրյա ներդրողներին գրավելու և աջակցելու, արտերկրում հայկական ապրանքները խթանելու, գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն աջակցելու նպատակով: 2011թ. գործակալության տարեկան բյուջեն կազմել է 503մլն դրամ, որից 148մլն դրամ հատկացրել է պետությունը, իսկ մնացածը տրամադրել են դոնոր կազմակերպությունները: Այս դեպքում նույնպես, ինչպես ՀՓՄՁԶԱԿ-ի դեպքում, պետական աջակցության 148մլն դրամի 125մլն-ը հատուկ նախատեսված էր ընթացիկ ծախսերի համար: 2011-2012թթ. գործակալությունն առաջատար դերակատարություն ստանձնեց Ռուսաստանում, Դուբայում, Գերմանիայում և այլ երկրներում սննդամթերք և խմիչքներ արտադրող հայկական ընկերությունների մասնակցությունը տոնավաճառներին կազմակերպելու գործում: Գործակալության գործառույթները կապ ունեն ավելի շուտ վերամշակող ոլորտի, քան գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացման հետ:
7. Տեղական և շրջանային իշխանություններ: Մարզային մակարդակում գործում են գյուղատնտեսության և բնապահպանության վարչություններ, որոնց գործառույթներն են մարզերի մակարդակով շրջանային և բնապահպանական ծրագրերի աջակցությունը, սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի նախապատրաստմանը մասնակցությունը, գյուղատնտեսական հիմնախնդիրների ուսումնասիրությունն ու դրանց ներկայացումը կառավարությանը: Բնական աղետների դեպքում՝ կարկուտ, ջրհեղեղ, նրանք գնահատում են հասցված վնասը և առաջարկություններ ներկայացնում: Նրանց մասնակցությունը կարևոր է ԳԳՇԶ-ի ցանկացած ծրագրին, սակայն ներուժի հետ կապված կարիքները հարկավոր է ամրապնդել տեխնիկական նորացում և ուսուցում տրամադրելու միջոցով:

ԳԳՇԶԵՀԾ-ի մոտեցումները կառավարելու և իրականացնելու գործում կառավարական ինստիտուտների արդյունավետ մասնակցությունն ապահովելու նպատակով նախապատրաստական աշխատանքը ներառում է հետևյալը՝

- իրավասությունների և գործառույթների բաշխում ինստիտուտների միջև և աշխատակազմի ուսուցում /ԳՆ, ԷՆ և ՏԿՆ/.
- խորհրդատվություն և առարկայական ու մանրակրկիտ ծրագրի մշակում, որն արտացոլի ՀՀ առաջնահերթությունները և ԵՄ-ի փորձն ու պրակտիկան.
- նախապատրաստական ծրագրեր՝ գործի դնել ԵՄ նոր անդամների քաղած դասերը հաջողված միջոցների և իրականացնող կառույցների մասին, որոնց միջոցով պիլոտային ծրագրեր կիրականացվեն:

¹³ <http://www.finport.am/view-lang-rus-newsarticle-17973.html>

4.2. ԳԳՇԶԵՇԾ-ի մոտեցումների կառավարման, իրականացման և մոնիտորինգի հարցում գյուղատնտեսության և գյուղական շրջանների տնտեսության շահագրգիռ կողմերի գնահատականը Քաղաքացիական հասարակությունը և հասարակական կազմակերպությունները

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները և հ/կ-ները ֆերմերների միությունների և մասնավոր հատվածի հետ մեկտեղ գյուղատնտեսական և գյուղական շրջանների բարեփոխումների շահագրգիռ կողմեր են: Այդ ոլորտում ակտիվորեն գործում են մի շարք կազմակերպություններ՝ Գյուղատնտեսական և գյուղական շրջանների զարգացման կենտրոնը, Կանաչ արահետ, Շեն, Օրգանական գյուղատնտեսության հայկական հիմնադրամ /ՕԳՀՀ/, OXFAM, Heifer International, Save the Children, World Vision և ուրիշներ:

Այս կազմակերպությունները Հայաստանում գյուղատնտեսության և համայնքային զարգացման համար տրամադրում են աջակցություն, հզորությունների ստեղծում, փորձի տարածման ծառայություններ, խորհրդատվություն գյուղական շրջանների եկամտի գոյացման միջոցով և շուկայի վերաբերյալ ծրագրերի հասանելիություն: Դրանցից շատերն արտաբյուջետային կազմակերպություններ են, որոնք աշխատում և ֆինանսավորվում են դոնորների կողմից: Այդ կազմակերպություններից շատերը Հայաստանում գործում են արդեն 10-15 տարի և աշխատում են շատ մարզերում: Քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը գյուղատնտեսության կառավարմանը դեռևս համարժեք չէ, քանի որ ամենաշատը, որ նրանք անում են, ռազմավարական փաստաթղթերի քննարկմանը մասնակցելն է: Այդուհանդերձ նրանց մասնակցությունը իրականացմանը և մոնիտորինգին չափազանց սահմանափակ է, որովհետև կառավարման մարմինները միշտ չէ, որ նրանց մասնակցությունը խրախուսում են: ԳԳՇԶԵՇԾ-ի շրջանակում ծրագրերի պլանավորման, իրականացման և մոնիտորինգի ենթարկելու նրանց փորձն ու կարողությունը բավականին մեծ են, և դրանք կարելի է օգտագործել:

Հարկավոր է ստեղծել համակարգող խումբ, որտեղ կարող է երկխոսություն տեղի ունենալ պետության և քաղաքացիական հասարակության միջև: Դա նույնպես կնպաստի նրանց ներուժի ստեղծմանը: Այս ոլորտում մոդելային նախաձեռնություններից մեկը վերջերս ձևավորված Գյուղատնտեսական դաշինքն է, որը միավորում է դոնոր ծրագրեր, տեղական ու միջազգային հ/կ-ների և հետազոտական ինստիտուտների, ում գործունեությունը միտված կլինի դոնորների հետ համագործակցությանը և համակարգմանը, համատեղ քարոզչությանը և լոբբինգին, փորձի փոխանակմանը և ծրագրի իրականացման վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը, պետական մարմինների հետ երկխոսությանը:

Ֆերմերային կազմակերպությունները և կոոպերատիվները

Կան մի քանի ֆերմերային կազմակերպություններ՝ Գյուղատնտեսական միությունների դաշնությունը, Ֆերմերների ազգային միությունը, Միս արտադրողների միությունը, կաթ արտադրողների միությունը, Ագրարային գյուղացիական միությունը, ֆերմերային շարժումը, Գյուղատնտեսական կոոպերատիվների միությունը, Օրգանական գյուղատնտեսության հայկական հիմնադրամը, Ջերմոցային տնտեսությունների միությունը և այլն: Չնայած կան բազմաթիվ միություններ, կազմակերպվածության և համագործակցության մակարդակը դեռևս հեռու է անթերի լինելուց: Նրանցից շատերը դրամաշնորհային կողմնորոշվածություն ունեն, չունեն գործարարին բնորոշ մտածելակերպ, որը հարկավոր է բարեհաջող

կերպով ապրանք արտադրելու և շուկայում իրացնելու համար: Այնուամենայնիվ նրանց մասնակցությունը չի կարելի թերագնահատել, իսկ կարողությունները հարկավոր է հզորացնել:

Ինչ վերաբերում է ֆերմերային կոոպերատիվներին, վերջին տարիների ընթացքում ջանքեր են գործադրվել նրանց ստեղծումն ու աճը խթանելու համար: Կան մոտ 109 գյուղական կոոպերատիվներ, որոնք ներգրավված են կաթնամթերքի, մրգերի և բանջարեղենի արտադրության մեջ, ինչպես նաև այլ ոլորտներում: Նրանց թույլ կողմերից են հստակ տեսլականի բացակայությունը, վատ կառավարումը և ֆինանսական կայունությունը: Հարկավոր է ուշադրությունը կենտրոնացնել նրանց ներուժի զարգացման վրա:

Ծառայություններ մատուցողները և մասնագիտական միությունները

Ագրոբիզնեսի և գյուղական շրջանների զարգացման հիմնադրամի կենտրոնը /ԱԳՇՁԿ/ Հայաստանում մեկ պատուհանի սկզբունքով աշխատող տնտեսական զարգացման կազմակերպություն է՝ գյուղական շրջաններում աղքատությունը նվազեցնելու, կայուն գյուղատնտեսությունը և ագրոբիզնեսը խթանելու, Կովկասում կենսամակարդակը բարձրացնելու համար: Նրանց հիմնական ուղղություններն են ագրոբիզնեսը և մարքեթինգը, գյուղական շրջանների զարգացումը, պարենային անվտանգությունը, որը հիմնականում ֆինանսավորվում է ԱՄՆ-ի գյուղատնտեսության դեպարտամենտի կողմից: ԱԳՇՁԿ-ն արդյունքների վրա հիմնված կազմակերպություն է՝ զարգացման գծով հայ և միջազգային բարձրորակ մասնագետներից կազմված խմբով, ովքեր հսկայական փորձ ունեն գյուղատնտեսության զարգացման բնագավառում՝ շուկայից մինչև արտահանում: Կազմակերպությունն առաջարկում է Հայաստանում գյուղատնտեսության ոլորտի համար ագրոբիզնեսի համալիր ծառայություններ: Այս հանգամանքն ընդունում են համարյա բոլոր շահագրգիռ կողմերը: Անկասկած, ԳԳՇՁԵՀԾ-ի մոտեցումների նման որևէ մոտեցման պլանավորմանն ու իրականացմանն աջակցելու նրանց կարողությունը չափազանց բարձր է: Ի լրումն այդ ամենի, կազմակերպությունն առևտրային ծառայություններ է մատուցում՝ բերում է աշխարհահռչակ, բարձրորակ գյուղատնտեսական միջոցներ և մեքենաներ ու տեխնիկա, ֆինանսներ:

Կան նաև այլ կազմակերպություններ, որոնք այս ոլորտում մատուցում են գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացման ծառայություններ: Դրանցից են՝

1. որակի ապահովման ծառայությունները՝ գյուղատնտեսական արտադրանքի և սննդամթերքի որակի և մնացորդների մոնիտորինգ և վերահսկողություն: Տեխնիկական աջակցություն տարածաշրջանին և երկրին ցուցաբերվող օժանդակության նախաձեռնություններին, օր.՝ գերմանական BMZ նախագիծը՝ Կովկասում սննդամթերքի ստուգման լաբորատորիաների հզորացում /ընտրվել են մի քանի լաբորատորիաներ միջազգային ISO 17025 հավատարմագրում ստանալու հարցում աջակցություն ստանալու համար/
2. օրգանական գյուղատնտեսության ոլորտում ECOGLOBE տեղական բիզնես ընկերությունը մատուցում է օրգանական հավաստագրման ծառայություններ, միջազգային առևտրի և ներուժ ստեղծելու նախաձեռնություններ, որոնք տարածվում են մինչև տարածաշրջանային մակարդակ:

Այս ծառայությունների ֆինանսական կայունությունը հիմնականում կախված է գյուղատնտեսության եւ արտադրության մակարդակում պահանջարկի խթանումից, ինչպես նաեւ դոնորների շարունակական նախաձեռնություններից:

Մասնավոր հատված

Մասնավոր հատվածը եւս կարելու շահագրգիռ կողմ է հանդիսանում: Ավելի խոշոր ներկայացուցիչները ներկրողները, վերամշակող ընկերությունները, մեծածախ առևտրով զբաղվողները, գործ են ունենում փոքր տնտեսություն ունեցող բազմաթիվ մատակարար ֆերմերների հետ, հետեւաբար, նրանց զարգացումն ի վերջո ազդեցություն է թողնում փոքր գյուղական տնտեսությունների բարեկեցության եւ առաջընթացի վրա: Խոշոր արտադրողները, վերամշակող ընկերությունները, ներկրողները եւ այլ մասնավոր գործարարները կարող են լավ գործընկեր լինել մասնավոր եւ հանրային հատվածների միջեւ համագործակցության հաստատման եւ ֆերմերների զարգացմանն աջակցելու համար:

4.3. Եվրոպական հարեւանության Գյուղատնտեսության եւ գյուղական զարգացման ծրագրի (ENPARD) մոտեցումների կիրառման նպատակով գյուղատնտեսության եւ գյուղական տնտեսության բնագավառի, այդ թվում նաեւ՝ մասնավոր հատվածի շահագրգիռ կողմերի ուսուցման կարիքների գնահատում

2010թ. գյուղատնտեսության ոլորտին հատկացվող պետական ֆինանսավորումը կիսով չափ կրճատվեց տնտեսական ճգնաժամի պատճառով: Դոնոր կազմակերպությունների եւ ՄՖՀ-ի կողմից տրամադրվող միջոցներից զատ, գյուղական համայնքների զարգացումը, բնապատկերի եւ շրջակա միջավայրի պաշտպանությունն ընդհանուր առմամբ քիչ են ֆինանսավորվում:

Գյուղատնտեսության նախարարության միջոցներն ու առկա աշխատակազմը սահմանափակ են՝ լրացուցիչ իրավասություններ հանձն առնելու համար: ENPARD մոտեցումը կիրառելու համար վերապատրաստման, տարածման եւ նախապատրաստման կարիքն առկա է նաեւ պետական այլ կառույցներում, այդ թվում նաեւ Տարածքային կառավարման նախարարությունում, մարզային իշխանություններում (գյուղատնտեսության բաժնում), իսկ առավել ցայտուն է դրսևորվում համայնքային մակարդակում:

Պետք է զարգացնել ազգային եւ տեղական կարողությունները, բարձրացնել ըմբռնման եւ ներգրավվածության մակարդակը, որպեսզի համայնքները կարելու դերակատարություն ունենան տեղական նախաձեռնությունների հատկորոշման եւ ստանձման հարցում: Քանի որ ֆերմերների միջեւ համագործակցությունը կարելու է, իսկ ֆերմերային միավորումների եւ կոոպերատիվների կարողությունները՝ սահմանափակ, կարողությունների զարգացումը եւ դրան նպաստող գործիքների ապահովումն առանցքային նշանակություն ունի:

5. Առկա ընթացիկ ծրագրերի վերանայում

5.1. Ընթացիկ ծրագրերի վերանայում

ԵՄ ֆինանսական եւ տեխնիկական համագործակցության ծրագիրն աջակցում է Հայաստանում իրականացվող բարեփոխումներին: Ներկայում Հայաստանի մարզերում ու քաղաքներում զգալի թվով ծրագրեր են իրականացվում տարբեր ոլորտներում: ԵՄ օժանդակությունը, մասնավորապես, ուղղվում է ժողովրդավարության զարգացմանը եւ կառավարման բարելավմանը, կանոնակարգային բարեփոխումներին եւ վարչարարական կարողությունների զարգացմանը, միջուկային անվտանգության, քաղաքացիական հասարակության, ինչպես նաեւ մասնագիտական կրթության ու ուսուցման բնագավառներին: ԵՄ կողմից Հայաստանում իրականացվող ծրագրերի ֆինանսավորումն իրականացվում է դրամաշնորհների, պայմանագրերի եւ հետզհետե ավելացող բյուջետային աջակցության տեսքով: 2009թ. ապրիլին Հայաստանում ստեղծված ԵՄ խորհրդակցական խումբը նույնպես ակտիվորեն աջակցում է Հայաստանի իշխանություններին բարեփոխումների իրականացման գործում:

Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական Միության հարաբերությունները, այդ թվում՝ առեւտրական եւ տնտեսական համագործակցությունը, կարգավորվում են Գործընկերության եւ համագործակցության համաձայնագրով (ԳՀՀ), որը ստորագրվել է 1996թ. ապրիլի 22-ին և ուժի մեջ մտել 1999թ. հուլիսի 1-ին: ԵՄ եւ Հայաստանի միջև Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունները պաշտոնապես մեկնարկել են 2010թ. հուլիսի 19-ին Երեւանում: Այս համաձայնագիրը կփոխարինի գործող Գործընկերության եւ համագործակցության համաձայնագրին: Հայաստանի եւ ԵՄ միջև Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու (ԽՀԱԱԳ) ստեղծման վերաբերյալ դրույթները Ասոցացման համաձայնագրի անբաժանելի մասն են կազմելու:

Գյուղական զարգացման, տարածքային պլանավորման, գյուղատնտեսության եւ պարենային անվտանգության ոլորտներին վերաբերող ԵՄ ծրագրերը

- 2007թ. Հայաստանի *Պարենային* անվտանգության ծրագրի Բյուջետային օժանդակության բաղադրիչ. տեխնիկական արդյունավետություն կենդանիների առողջության եւ բուսասանիտարիայի քաղաքականության ոլորտում
- Վայոց Ձորի մարզի գյուղական բնակավայրերի աղքատության հաղթահարում՝ կաթի վերամշակման ոլորտում գյուղատնտեսական միավորման դինամիկ եւ շարունակական զարգացման խթանման, ինչպես նաեւ կաթ արտադրող եւ վերամշակող ընկերությունների համար գյուղատնտեսական պաշարների եւ ծառայությունների մատչելիության մեծացման շնորհիվ
- «Եկամտաբեր ծրագրեր գյուղական համայնքներում». *Արարատի մարզ*
- Կարողությունների զարգացման միջոցով Հայաստանի գյուղական համայնքների գյուղատնտեսական ներուժի հզորացում՝ Հայաստանում ֆերմերային միավորումների եւ գյուղատնտեսական կոոպերատիվների հաջող մոդելների ներդրման նպատակով
- Հայաստանում կենդանական ծագման սննդամթերքի եւ կերերի անվտանգության վերահսկողության ուժեղացում
- Ջուջեւանի համայնքում գյուղատնտեսության վերականգնում՝ գյուղատնտեսության ոլորտում նոր մեթոդաբանության եւ բնապահպանական կայունության ձեռքբերման շնորհիվ

Երկկողմանի աջակցություն ԵՄ երկրների կողմից

Գերմանական տեխնիկական համագործակցության ծրագրերի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվում ՓՄՁ, մեղվապահության եւ օրգանական գյուղատնտեսության, բնապահպանության եւ կենսաբազմազանության ոլորտներին, վայրի բույսերի եւ օրգանական գյուղատնտեսության վրա հիմնված արժեքային շղթայի զարգացմանը: Այս բնագավառները հիմնականում ընդգրկված են մարզային զարգացման ծրագրերում, կարողությունների զարգացման եւ հանրային-մասնավոր գործընկերության հայեցակարգերում:

Հոլանդիան, Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամը (IFAD) եւ Համաշխարհային Բանկը ներգրավված են գյուղատնտեսական եւ ագրոբիզնեսի զանազան ծրագրերում: Շվեյցարական ծրագրի շրջանակներում Հայաստանին օժանդակություն է տրամադրվում տնտեսական զարգացման եւ զբաղվածության, աղետների ռիսկի կրճատման, վերանորոգման եւ վերակառուցման ոլորտներում: Գյուղական շուկաների եւ արժեքային շղթաների զարգացման ծրագրում կիրառվում է այսպես կոչված «շուկաներն աղքատների շահերին աշխատեցնելու» մոտեցումը:

Գյուղատնտեսական տեխնիկական ֆերմերներին է տրամադրվում Հայաստան-Ճապոնիա (2KR) եւ Հայաստան-Չինաստան երկկողմ համագործակցության շրջանակներում: Պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպությունը (ՊԳԿ) եւ ՄԱԶԾ-ն օրգանական ոլորտի կարգավորմանը եւ շահագրգիռ կողմերի վերլուծությանը վերաբերող ծրագիր են իրականացրել, իսկ Հոլանդիայի Արտաքին գործերի նախարարությունը «Ավալոն» հիմնադրամի միջոցով աջակցել է օրգանական եւ գյուղատնտեսական ու բնապահպանական նախաձեռնություններին: Մի շարք նախագծեր աջակցություն են ստացել ՀԿ-ների մակարդակով, օժանդակություն են ցուցաբերել նաեւ ԵՄ-ը եւ Գերմանիայի, Հոլանդիայի, Նորվեգիայի, Շվեյցարիայի եւ այլ երկրների կառավարությունները:

Գերմանական տեխնիկական համագործակցության ծրագիրը Հայաստանում (ԳՄՀԸ)

Համագործակցության գերակա ոլորտը կայուն տնտեսական զարգացումն է, ընդ որում՝ հատուկ շեշտ է դրվում կայուն զարգացման համար համապատասխան պայմանների ստեղծման վրա: Գերմանիայի Տնտեսական համագործակցության եւ զարգացման դաշնային նախարարության (BMZ) անունից հանդես եկող ԳՄՀԸ-ն հիմնականում կենտրոնանում է համայնքային եւ տնտեսական զարգացման եւ դատախիրավական բարեփոխումների ու խորհրդատվության ոլորտների վրա:

Գերմանական զարգացման բանկի (KfW) գործունեությունը Հայաստանում

Գերմանիայի ֆինանսական համագործակցությունը Հայաստանի հետ սկիզբ է առել 1995թ.: Այն ընդգրկում է ՓՄՁ-ների համար ֆինանսական ոլորտի զարգացումը, վերականգնվող էներգիայի, ինչպես նաեւ Արմավիրում, Գյումրիում, Վանաձորում եւ հարակից գյուղերում ջրամատակարարման համակարգերի վերականգնման ոլորտում կատարվող ներդրումները, հետագայում նախատեսվում է անդրադառնալ նաեւ աղբի կառավարման բնագավառին:

Գերմանիայի Չափագիտության Ազգային Ինստիտուտն (PTB) իր ծրագրերի շրջանակներում աջակցում է Հայաստանի որակի ենթակառուցվածքների զարգացմանը եւ համատեղելիությանը՝ սննդի փորձաքննության եւ էներգետիկ ոլորտի լաբորատորիաների կարողությունների զարգացման բնագավառում (2010-2016թթ.):

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (EBRD) Հայաստանում խոշորագույն ներդրողն է. տնտեսության բոլոր հիմնական ոլորտներում բանկի կատարած ներդրումներն ավելի քան 200 միլիոն եվրո են կազմում: Հայաստանում EBRD-ի ռազմավարության «հիմնական թիրախը տեղի մասնավոր հատվածի՝ փոքր և միջին ձեռնարկությունների և բանկային ոլորտի զարգացումն է»:

ՊԳԿ¹⁴-ը օժանդակում է ՀՀ կառավարությանը Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող գյուղական ձեռնարկությունների և գյուղատնտեսական փոքր առևտրային ընկերությունների զարգացման ծրագրի իրականացման հարցում:

- **EMPRES Կենդանիների առողջությանը վերաբերող բաղադրիչ. կենդանիների և բույսերի տրանսսահմանային հիվանդություններից բխող արտակարգ իրավիճակների կանխարգելման համակարգը** (EMPRES) կենտրոնանում է Հայաստանում անասունների մի շարք հիվանդությունների վրա: Հայաստանում նաև բրուցելյոզի վերահսկողության ծրագիր է իրականացվում:
- **Ազգային Տեխնիկական համագործակցության ծրագրեր**
 - TCP/ARM/3302 – Ծիրանի գենետիկ ռեսուրսների պահպանում և օգտագործում
 - TCP/ARM/3203 - Անտառապատում և անտառվերականգնում
 - Ազգային համագործակցության ծրագրերը ՊԳԿ-ի և Հայաստանի կառավարության միջև
 - GCP/ARM/003/GRE - Հայաստանում թունաքիմիկատների որակի վերահսկողության և դրանց մնացորդային քանակների նկատմամբ մոնիտորինգի աջակցության ծրագիր
- **GCP/ARM/004/GRE** - Հայաստանում սպանդանոցների զարգացման աջակցության ծրագիր
- **Տարածաշրջանային ծրագրեր**
 - ԵԽ/ՊԳԿ Տեղեկատվական համակարգի ստեղծման միջոցով պարենային անվտանգության ոլորտում որոշումների կայացման բարելավման ծրագիր
 - Փոքր ֆերմերային տնտեսությունների կարողությունների զարգացում՝ սերմերի արտադրության, ռոտզման տեխնոլոգիաների և կենդանիների գրանցման համակարգերի ներմուծման միջոցով
 - Անդրկովկասյան երկրներում (Վրաստան, Հայաստան և Ադրբեջան) դաբաղի կանխարգելում և արտակարգ իրավիճակներում արձագանքման կարողությունների հզորացում

ԱՄՆ ՄԶԳ ծրագրերն ուղղված են ա) բարեփոխումների հաջորդ փուլի ամփոփմանը, բ) կառավարական և կանոնակարգման մարմինների ինստիտուցիոնալ զարգացմանը և գ) անվտանգ, հուսալի, մատչելի ու հասանելի հանրային ծառայությունների մատուցմանը: Գյուղական ենթակառուցվածքների զարգացումն իրականացվել է «ՀՄՀ-Հայաստան» ծրագրի աջակցությամբ և ավարտվել 2010թ.: Ծրագրի շնորհիվ բազմաթիվ շրջաններում բարելավվել են գյուղական ենթակառուցվածքները, այդ թվում նաև ճանապարհները և ռոտզման համակարգը՝ «Ջրից դեպի շուկա» բաղադրիչի շրջանակներում:

- **Օժանդակություն էներգետիկ ոլորտին՝ էներգետիկ անվտանգության և տարածաշրջանային ինտեգրմանն աջակցելու նպատակով (ESRI)**
- **«Գետի վերականգնում».** Դիլիջանի քաղաքապետարանը, «Կոկա-Կոլա» ընկերությունը և ՀՀ կառավարությունը (EBRD-ի ֆինանսավորման և Դիլիջանի քաղաքապետարանի աջակցությամբ) ջրամաքրման կայան կտեղադրեն Աղստե գետի մոտ:
- **«Պլաստիկ թափոնների հավաքում և վերամշակում»** հանրային-մասնավոր գործընկերության ծրագիրը միտված է իսկելու ջրի աղբյուրների բարելավմանը՝ պլաստիկ տարաների հավաքման և մեխանիկական վերամշակման միջոցով:
- **«Մաքուր էներգիա և ջուր» ծրագիրը** խթանում է էներգիայի և ջրի համատեղ պլանավորումը և

¹⁴ Վերջին թարմացումը՝ 2011թ. հունիսի 29-ին <http://www.fao.org/countries/55528/en/arm/>

խորհրդատվություն տրամադրում ՀՀ կառավարությանը:

- **«Ձեռնարկությունների զարգացում եւ շուկայի մրցունակություն» (EDMC) ծրագիրը** նպաստում է եկամուտների եւ զբաղվածության մեծացմանը՝ խթանելով արտահանման ներուժ ունեցող ընտրված արժեքային շղթաների աճը:

Համաշխարհային Բանկ

- Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման ու մրցունակության ծրագիր
- Ոռոգման համակարգերի հրատապ վերանորոգման ծրագիր
- «Սոցիալական ներդրումների հիմնադրամ III» ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորում
- Ճանապարհների բարեկարգման ծրագիր

2011թ. ՀԲ-ը նախաձեռնեց Հայաստանում կայուն գյուղատնտեսության հայեցակարգի նախապատրաստման աշխատանքները, որը հետագայում ընդգրկվեց Գյուղատնտեսության եւ գյուղական զարգացման վերաբերյալ ՀԲ ծավալուն հաշվետվության մեջ: Այս ակնարկում բնութագրվում են ՀԲ հայեցակարգում արժարժված ուղղությունները: **Հայաստանում կայուն գյուղատնտեսության վերաբերյալ ՀԲ ուսումնասիրության** արդյունքում մշակվեց 10 կետից բաղկացած քաղաքականության օրակարգ, որը գերակայություններ եւ գործողություններ է առաջարկում Հայաստանում ավելի կայուն ֆերմերային համակարգերի խթանման նպատակով համապատասխան պայմանների զարգացման համար:

Միջազգային ֆինանսական կորպորացիայի «Հայաստանի ներդրումային միջավայրի բարեփոխման ծրագիրը» (2011թ.-առ այսօր) բարելավում է Հայաստանի ներդրումային միջավայրը՝ մեծացնելով առանցքային չորս ոլորտների, այդ թվում՝ պարենային անվտանգության կանոնակարգման արդյունավետությունը:

Միջազգային ֆինանսական կորպորացիայի «Հայաստանի պարենային անվտանգության բարելավման» ծրագիրը (2012թ.-առ այսօր) մեծացնում է Հայաստանի սննդամթերք արտադրող ընկերությունների մրցունակությունը՝ բարելավելով նրանց գործելառճը սննդամթերքի բնագավառում:

Հայաստանում Գյուղատնտեսության զարգացման *միջազգային հիմնադրամը (IFAD)*¹⁵ պարենային անվտանգությունից բացի այժմ ընդգրկում է նաեւ շուկայամետ գյուղատնտեսական արտադրանքը: Հայաստանում IFAD-ի նոր ներդրումները նպաստում են արդյունավետ արձագանքմանը գործարար, ֆինանսական եւ գյուղատնտեսական ոլորտներում արագ կատարվող փոփոխություններին, իսկ երկրի տնտեսությունն այդ ընթացքում շարունակում է վերականգնվել:

Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալություն եւ Զարգացման համագործակցություն Կովկասում. 2008-2012թթ. Համագործակցության ռազմավարության շրջանակներում *Տնտեսական զարգացման եւ զբաղվածության* ոլորտում մասնակցությունն ու վերլուծությունն իրականացվում է այսպես կոչված “շուկաներն աղքատների շահերին աշխատեցնելու” (M4P) մոտեցման եւ “աղքատներին ուղղված աճի” սկզբունքի համաձայն: Ծրագրերը կենտրոնանում են գյուղական շուկաների զարգացման վրա՝ նպատակաուղղվելով գյուղատնտեսական արժեքային շղթաների՝ կաթնամթերքի, մսի, բանջարեղենի, նաեւ *խառը գյուղատնտեսության* օժանդակությանն ու հզորացմանը, ինչպես նաեւ ընտրված աշխարհագրական վայրերում գյուղական բնակչության կենսամակարդակի եւ տնտեսական ապահովության մեծացմանը:

¹⁵ <http://operations.ifad.org/web/ifad/operations/country/home/tags/armenia>, www.ebrd.com/pages/country/armenia/strategy.shtml

5.2. Գյուղատնտեսության և գյուղական զարգացման քաղաքականությունների շրջանակում իրականացվող համեմատական վերլուծություն

ԵՄ և նրա Արևելյան Եվրոպայի գործընկերների՝ Հայաստանի Հանրապետության, Ադրբեջանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության և Ուկրաինայի միջև համագործակցությունը Եվրամիության արտաքին հարաբերությունների կարևոր մաս է կազմում: Տարածաշրջանային քաղաքականության ոլորտում առկա է երկխոսությունը Ուկրաինայի հետ, համաձայնեցված են աշխատանքային ծրագրերը Վրաստանի և Մոլդովայի Հանրապետության հետ: Տարածաշրջանային զարգացմանը վերաբերող լայնածավալ ծրագրեր են իրականացվում Ուկրաինայում և Վրաստանում, իսկ Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունների հետ բանակցություններ են ընթանում վերջիններիս կողմից համապատասխան տարածաշրջանային զարգացման ռազմավարություններ նախապատրաստելու ուղղությամբ:

Գյուղատնտեսության և գյուղական զարգացման բնագավառում համապատասխան ոլորտային երկխոսություններ են անցկացվում: Գործընկեր երկրների հետ գյուղատնտեսության ոլորտում համագործակցությունը մեծացնելու նպատակով Հանձնաժողովը սկսել է ընդհանուր մոտեցում մշակել ENPARD-ի միջոցով այս ոլորտին օժանդակություն ցուցաբերելու համար: Ակնկալվում է, որ ENPARD-ը կաջակցի գործընկեր երկրներին ավելի արդյունավետ գործել արտաքին շուկաներում, լիովին օգտվել ապագա ԽՀԱԱԳ-ների առավելություններից, խթանել տեղի ֆերմերային տնտեսությունները և առաջ տանել գյուղատնտեսության և գյուղական զարգացման ոլորտի երկարաժամկետ ռազմավարությունները¹⁶:

Չնայած գյուղատնտեսության բազմաֆունկցիոնալ դերի և գյուղական զարգացման նշանակության գիտակցմանը՝ գյուղական համայնքներում տիրող իրավիճակն իրականում հեռու է կատարյալ լինելուց: ENPARD-ի՝ գյուղական համայնքների կարողությունների մեծացմանն ու կենսամակարդակի աճին միտված մոտեցումն իրականացնելու համար գյուղական համայնքները պետք է լիակատար մասնակցություն ունենան այս գործընթացին, նաև հնարավորություն ստանան դիտարկել և սահմանել գերակայություններն ու ներգրավված լինել զարգացման գործընթացներում, այդ թվում՝ համաֆինանսավորման առումով: Այստեղ պետք է ընդգրկվեն գյուղական տնտեսությունները, գյուղական համայնքների առաջնորդները, քաղաքացիական խմբերը, այդ թվում՝ հանրային-մասնավոր գործընկերությունները, անհրաժեշտ է նաև գործարարների ակտիվ մասնակցությունը: Պետք է սահմանվեն բյուջետային շրջանակները և ֆինանսավորման աղբյուրները:

Գործընթացի արդյունավետության վերլուծությունը վերաբերում է հետևյալին.

- Ընդլայնել գյուղական համայնքների հնարավորությունները՝ հզորացնելով տեղական կառավարման կարողությունները և խթանելով տեղական համայնքների մասնակցությունը գյուղական զարգացման գործունեությանը:
- Հասկոբրոշել և իրագործել պահանջարկի վրա հիմնված գյուղատնտեսական ապրանքների արտադրությունը և բերքահավաքին հաջորդող ծրագրերը, նաև ավելի բազմազան դարձնել

¹⁶ ԱԳ: 2013թ. աշխանր կայանալիք գագաթնաժողովի ճանապարհային քարտեզ
http://ec.europa.eu/world/enp/docs/2012_enp_pack/e_pship_roadmap_en.pdf

գյուղական համայնքների գործունեությունը, զբաղվածության հնարավորությունները եւ շուկաների մատչելիությունը:

- Ավելի հասկանալի դարձնել կլիմայական փոփոխություններին արձագանքելու եւ բնական պաշարների կառավարման հնարավորությունները՝ համապատասխան եւ հաջող փորձի վրա հիմնված հատուկ տարածաշրջանային եւ համայնքային ծրագրերի մշակման միջոցով:

Զարգացման գործընթացում պետք է հաշվի առնվեն ե՛ւ քանակական, ե՛ւ որակական արդյունքները: Կարևորագույն դեր ունի հաջող գործելակերպը, ինչի ապացույցն է դառնում առանձնացված վարելահողերի թիվը: Համեմատական վերլուծությունը պետք է ներառի որակական կողմերը՝ խրախուսելով ավելի կայուն եւ հարմարվող ֆերմերային համակարգերը, Հայաստանի գյուղատնտեսության ոլորտում հաջող գործելակերպի կանոնները, օժանդակության եւ սուբսիդավորման համակարգերում ընգրկված չափորոշիչները եւ կանոնակարգերը:

6. Սահմանափակումներ եւ SWOT վերլուծություն

6.1. SWOT վերլուծություն ըստ ոլորտների

Գյուղատնտեսական արտադրանքի ոլորտը խոցելի է եւ ենթակա մի շարք բնական եւ մարդածին ռիսկերի, որոնք զգալի բացասական ազդեցություն են թողնում գյուղատնտեսության վրա: Պարենային ինքնաբավությունը եւ պարենային անվտանգությունը 2010-2020թթ. Հայաստանի գյուղատնտեսական ռազմավարության գերակայություններն են հանդիսանում: Սույն ռազմավարության մշակման ընթացքում SWOT վերլուծություն է կիրառվել:

Գյուղատնտեսության եւ գյուղական զարգացման SWOT վերլուծություն

Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
<p>Գյուղական զարգացում</p> <ul style="list-style-type: none"> • ՀՀ կառավարությունը գիտակցում է գյուղական զարգացման եւ տեղական մասնակցության նշանակությունը • ՀՀ կառավարությունը պետական աջակցություն է ապահովում ՓՄՁ զարգացմանը՝ ՓՄՁ ԶԱԿ գործունեության միջոցով • Գյուղական ձեռնարկությունները (օրինակ՝ վերամշակող ընկերությունները) մոտ են գտնվում հումքին եւ ռեսուրսներին • Գյուղական ձեռնարկությունները արժեքի ավելացման լավ ներուժ ունեն • Սկսնակ գործարարների համար խոչընդոտները քիչ են • Հմուտ կադրերի առկայություն • Գյուղական վայրերում գազաֆիկացման բարձր մակարդակ • Ազատական շուկայական համակարգ • Հեռահաղորդակցման եւ համացանցի առկայության պայմաններ • Շարունակական համագործակցություն ԵՄ-ի հետ պարենային անվտանգության, կենդանիների առողջության պաշտպանության եւ վերականգնվող էներգիայի ոլորտներում <p>Գյուղատնտեսություն</p> <ul style="list-style-type: none"> • Երկրի տնտեսության ամենակարեւոր եւ գերակա ոլորտներից մեկն է հանդիսանում • Հողը եւ գյուղատնտեսական միջոցները մասնավորեցված են • Բարենպաստ կլիմայական պայմաններ եւ բազմազան կլիմայական գոտիներ • Հողային պաշարները կարելի է զարգացնել • Մենաշնորհների ցածր մակարդակ • Գյուղատնտեսության համար բարենպաստ հարկային միջավայր • ԱՊՀ շուկաներում հայկական արտադրանքի 	<p>Գյուղական զարգացում</p> <ul style="list-style-type: none"> • Համապատասխան քաղաքական շրջանակի եւ գործիքների բացակայություն • Ենթակառուցվածքների եւ ինստիտուցիոնալ կառույցների թերզարգացվածություն, մասնավորապես, հեռավոր շրջաններում • Ցածր արտադրողականություն եւ հնացած տեխնոլոգիաներ • Գործարար կառավարման հմտությունների եւ փորձի բացակայություն • Տեղական շուկաների սահմանափակություն • Շուկաների մատչելիության, գործարար ծառայությունների, տեղեկատվության պակաս • Տեղական գործարար միջավայրի անարդյունավետություն • Տեղական ինքնակառավարման մարմինները ֆինանսապես մոտիվացված չեն զարգացնելու իրենց համայնքներում առկա բիզնեսը, քանի որ այն չի նպաստում բյուջետային մուտքերի ավելացմանը • Թռչակային համակարգի սահմանափակ հասանելիություն՝ հողատերերի անորոշ իրավական կարգավիճակի պատճառով <p>Գյուղատնտեսություն</p> <ul style="list-style-type: none"> • Մասնատված հողակտորներ, հազիվ գոյատևող ֆերմերային տնտեսություններ • Հնացած ֆերմերային եւ արտադրական համակարգեր, արդյունքում՝ ցածր արտադրողականություն • Ժամանակակից տեխնիկայի եւ ենթակառուցվածքների բացակայություն • Գյուղատնտեսության ոլորտում ներդրվող ջանքերի ու ծառայությունների, այդ թվում՝ աշխատուժի բարձր արժեք • Հողային պաշարների ոչ արդյունավետ

<p>լավ համբավ</p> <ul style="list-style-type: none"> • Որոշակի ոլորտների դինամիկ աճ • Արտահանման ծավալների մեծացման լավ ներուժ 	<p>օգտագործում</p> <ul style="list-style-type: none"> • Գյուղատնտեսության ոլորտում սխալ գործունեությունը բնապահպանական խնդիրների է հանգեցնում • Ներդրումների եւ վարկերի պահանջարկ, որը չի բավարարվում • Արտադրողների միջեւ համագործակցության ցածր մակարդակ, կոոպերատիվների անհամապատասխան զարգացում • Որակին վերաբերող խնդիրներ, արժեքային շղթայի անարդյունավետություն, թերզարգացած շուկայագիտական կապեր • տարածման եւ խորհրդատվական ծառայությունների ցածր մակարդակ
<p>Հնարավորություններ</p>	<p>Սպառնալիքներ</p>
<p>Գյուղական զարգացում</p> <ul style="list-style-type: none"> • Յուրաքանչյուր մարզին/գյուղին հարմարեցված տեղական տնտեսական զարգացման ռազմավարությունների մասնակցային գնահատում եւ մշակում • Համագործակցության զարգացում (օրինակ՝ «Մեկ գյուղ, մեկ արտադրանք» նախաձեռնությունը) • Ոռոգման համակարգի եւ գյուղական ենթակառուցվածքների բարելավում՝ ճանապարհների եւ սոցիալական կառույցների բարելավման միջոցով, գյուղական զարգացմանն ու եկամուտների ավելացմանը նպաստելու նպատակով • Մարզային եւ տեղական կառավարման բարելավում • Արդյունավետ համագործակցություն տեղական գործարարների, իշխանությունների եւ այլ շահագրգիռ կողմերի միջեւ՝ հիմնված ՏՏԶ ռազմավարությունների եւ գերակայությունների վրա: • Գյուղական համայնքների կարողությունների հզորացում՝ բիզնեսի զարգացմանն օժանդակելու նպատակով • Բիզնեսի ապակենտրոնացում • Գյուղական բնակչության սոցիալական պաշտպանության մեծացում <p>Գյուղատնտեսություն</p> <ul style="list-style-type: none"> • Գյուղատնտեսական արտադրանքի ավելացում՝ հողերի վերաբաշխման եւ ռեսուրսների ավելի ինտենսիվ օգտագործման շնորհիվ • Ֆերմերային նոր համակարգերի, գյուղատնտեսության ոլորտում հաջող գործելակերպի ներմուծում 	<p>Գյուղական զարգացում</p> <ul style="list-style-type: none"> • Տնտեսական ճգնաժամը կարող է կանխել այս ոլորտի բարեփոխումները եւ ընդհանուր տնտեսական զարգացումը • Տեղական ինքնակառավարման մարմինների (համայնքապետարանների) «գոյատևման» ռեսուրսները խիստ սահմանափակ են գյուղական գործարարության զարգացմանն աջակցելու համար • Բնապահպանական ռիսկեր (ռեսուրսների չարաշահում, անտառահատումներ, հողերի դեգրադացիա եւ այլն) • Արտագաղթ գյուղական բնակավայրերից • Փակ սահմանները եւ տրանսպորտային մեծ ծախսերը խոչընդոտ են հանդիսանում արտահանման զարգացման համար • Գյուղական շրջանների անհամաչափ զարգացում • Անբարենպաստ ժողովրդագրական դինամիկա <p>Գյուղատնտեսություն</p> <ul style="list-style-type: none"> • Բնական պաշարների չարաշահումը, կայուն գյուղատնտեսության սկզբունքների անտեսումը կարող են հանգեցնել բնապահպանական խնդիրների միջնաժամկետ եւ երկարաժամկետ հեռանկարում • Բարեփոխումներ եւ ռազմավարություններ

<ul style="list-style-type: none"> • Ենթակառուցվածքների, տեխնիկայի եւ վերամշակող սարքավորումների արդիականացում • Ֆինանսական ռեսուրսների մատչելիության բարելավում • Կողմնորոշում դեպի արտահանման շուկաներ, արտահանման շուկաների եւ ապրանքների բազմազանեցում • Մենդամթերքի որակի եւ անվտանգության բարելավում՝ եվրոպական չափորոշիչներին համապատասխան • Ներդրումային եւ գործարար միջավայրի բարելավում՝ ներդրողներին գրավելու նպատակով • Հետազոտություն-տարածում-գյուղատնտեսություն կապերի ամրապնդում՝ կայուն գյուղատնտեսության հասնելու նպատակով • Որակյալ ենթակառուցվածքների եւ կառավարման արդիականացում՝ նոր շուկաներ մուտք գործելու նպատակով • Կայուն գյուղատնտեսությանը միտված գործելակերպի խթանում եւ բնապահպանական ռիսկերի նվազեցում 	<p>կենսագործելու հարցում քաղաքական կամքի բացակայություն</p> <ul style="list-style-type: none"> • Կառավարության ռազմավարությունների եւ դրանց իրականացման գործընթացի որակը եւ հետեւողականությունը • Բնական աղետների, այդ թվում՝ երաշտի, գարնանային ցրտահարությունների եւ կարկտի հաճախականություն: Պատրաստվածության ցածր մակարդակ: • Տարածաշրջանային քաղաքական անկայունություն, աշխարհագրական մեկուսացում: • Համաշխարհային մակարդակով մրցունակության աճ • Գյուղատնտեսության խոցելիություն՝ կապված գլոբալ կլիմայական փոփոխությունների հետ • Տարածաշրջանում կենդանիների հիվանդությունների փոխանցման ռիսկեր
--	---

6.2. Առավել կարեւոր գերակա ոլորտների ցանկը

Անհրաժեշտ է գյուղական զարգացման, այդ թվում նաև՝ գյուղատնտեսական համակարգի ավելի կայուն մոդել, որն ավելի լավ կապեր է հաստատում շուկաների հետ եւ ընտանիքներին ու ֆերմերներին ավելի բարեկեցիկ կենսակերպ ու եկամուտ է առաջարկում: Այսպիսով, առավել կարեւոր գերակա ոլորտները հետեւյալն են. ավելացնել գյուղատնտեսական արտադրանքը եւ զարգացնել շուկայագիտական համակարգերը, բարելավել հողօգտագործումը, մեծացնել հողագործության եւ արտադրական համակարգերի արդյունավետությունը՝ գյուղատնտեսական հաջող գործելակերպի համաձայն, բարձրացնել ապրանքների մրցունակությունը:

Գերակայությունները կարող են հետեւյալ կերպ կառուցվել.

Առանցք 1: **Բարելավել գյուղատնտեսության ոլորտի արտադրողականությունը, շուկայի արդյունավետությունը, նաև պարենային անվտանգության եւ որակի չափորոշիչները**

- Գյուղատնտեսական արտադրանքի ռեսուրսների (հատկապես հողային ռեսուրսների) արդյունավետ օգտագործում՝ համագործակցության տարբեր տեսակների, առաջնային արտադրող եւ վերամշակող կողմերի միավորման, նոր տեխնոլոգիաների ներդրման եւ այլնի միջոցով
- Կայուն գյուղատնտեսություն եւ գյուղական զարգացում՝ գյուղատնտեսական հաջող գործելակերպի եւ համապատասխանության մեխանիզմների ներդրման միջոցով
- Արտադրության եւ վերամշակման տեխնիկայի, սարքավորումների եւ տեխնոլոգիաների արդիականացում
- Պարենային անվտանգության ապահովում եւ հիմնական սննդամթերքի ինքնաբավության
- Պարենային անվտանգության, արտադրանքի որակի եւ սանիտարիայի ու բուսասանիտարիայի միջոցների բարելավում, դրանց համապատասխանեցում եվրոպական չափորոշիչներին
- Տեղական եւ միջազգային մակարդակով շուկայի արդյունավետության բարելավում, համագործակցության բարելավում արժեքային շղթաների ուղղությամբ:

Առանցք 2: **Գյուղական տնտեսության զարգացում** (բազմազանեցում, ենթակառուցվածքներ)

- Քաղաքական շրջանակ գյուղական զարգացման համար
- Համայնքների կողմից ուղղորդվող տեղական տնտեսական զարգացման ռազմավարություններ/ծրագրեր
- Աջակցություն ոչ ֆերմերային զբաղվածությանը՝ ՓՄՁ զարգացման միջոցով
- Գյուղական ենթակառուցվածքների արդիականացում
- Օժանդակություն տեղական մակարդակով մասնավոր-հանրային գործընկերությունների հաստատմանը

Հորիզոնական կարողությունների հզորացմանը ցուցաբերվող աջակցությունն, այլոց թվում, հիմնվում էր մասնակից երկրների փորձի վրա՝ գյուղական զարգացման ռազմավարությունների շահագրգիռ կողմերի կարողությունների զարգացում (ֆերմերներ, քաղաքացիական հասարակություն, ջրօգտագործողներ), ազգային եւ տեղական կառավարման մարմինների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում:

7. Առաջարկություններ երկկողմ համատեքստում իրականացվելիք գործողությունների վերաբերյալ¹⁷

Միացյալ Նահանգների գյուղատնտեսության դեպարտամենտ

Տարի	Արտադրված ցորենը		Ներմուծված ցորենը	
	Տոննայով	Հարավային Կոնտինենտի արտադրության նկատմամբ	Տոննայով	Հարավային Կոնտինենտի արտադրության նկատմամբ
2002	285,000	18.26 %	300,000	158.62 %
2003	216,000	-24.21 %	300,000	0.00 %
2004	291,000	34.72 %	200,000	-33.33 %
2005	258,000	-11.34 %	250,000	25.00 %
2006	146,000	-43.41 %	170,000	-32.00 %
2007	254,000	73.97 %	217,000	27.65 %
2008	226,000	-11.02 %	359,000	65.44 %
2009	198,000	-12.39 %	350,000	-2.51 %
2010	225,000	13.64 %	257,000	-26.57 %
2011	225,000	0.00 %	387,000	50.58 %
2012	240,000	6.67%	325,000	-16.02%

Ցորենը Հարավային Կոնտինենտում պարենային ապահովության և առաջնային գյուղատնտեսական աջակցության գործողությունների փաստացի ցուցանիշն է: Հայաստանը, ինչպես և իր հարևանները, ամեն տարի ապավինում է ցորենի ներմուծմանը: Հայաստանն ստիպված է ներմուծել իր կարիքների համար տարեկան անհրաժեշտ ցորենի՝ հիմնական առաջնային հացահատիկի կեսից ավելին: Շատ առումներով ցորենը «փոխարինում» է ողջ գյուղատնտեսությանը և ազգային աջակցության ծրագրերի հիմքն է հանդիսանում: Արտադրության բնակլիմայական խոչընդոտների

հաճախացման համատեքստում ամենայն հավանականությամբ այս իրավիճակը կպահպանվի: Միևնույն ժամանակ ավանդական աղբյուրների մատակարարման անխափանության վրա չի կարելի հույս դնել՝ հաշվի առնելով ավելի լայն տարածաշրջանում հաճախացող և ահագնացող երաշտները: Երաշտի տարում ներմուծման թվերը պատկերավոր կերպով ցույց են տալիս ցորենի մատակարարման պետական շղթաների խոցելիությունը: Սրան զուգահեռ՝ չափով և ըստ տարածաշրջանների առանց այն էլ խիստ սահմանափակ ոռոգվող հողատարածքները սխալ գործելակերպի և սահմանային հակամարտությունների արդյունքում դուրս են գալիս գործածությունից:

Նույն իրավիճակն է տիրում գյուղի զարգացման առումով: Մի կողմից՝ բազմաթիվ փաստաթղթերի և առաջնահերթությունների առկայությունը, մյուս կողմից՝ գյուղական վայրերում կյանքի բարելավմանը միտված գործունեության ծավալման և իրականացման համար միջոցների անբավարարությունը մարդկանց դրդում են լքել գյուղերը, ինչի արդյունքում գյուղական վայրերում աճում է աշխատուժի արժեքը, քանի որ տնտեսապես ավելի ակտիվները հեռանում են՝ կյանքի ավելի բարենպաստ պայմաններ գտնելու:

¹⁷ԵՄ / Գործողությունների պլան, Հայաստան http://ec.europa.eu/world/enp/pdf/action_plans/armeniaenp_ap_final_en.pdf

7.1 Հետագա գործունեության շրջանակներում՝ գյուղատնտեսական և գյուղական հատվածի զարգացման առումով բացահայտված բացերը

Ռեզիդնում առկա բացերը և առաջնահերթությունները տարբերակված են ըստ երեք հիմնական ուղղության.

1. Գյուղի զարգացման քաղաքականության բացակայությունը

Գնահատված է որպես տարածաշրջանում ԳԳԶԵՀԾ մշակման մեջ կարևոր բացթողում: Այս բացթողումը շտկելն առաջնահերթ կարևորություն ունի հետևյալ տեսանկյուններից.

- Գյուղի զարգացման ընդհանուր քաղաքականությունը և համապատասխան մեխանիզմների առկայությունը,
- Գործողության տեղական խմբերը՝ նրանց դերն ու կազմավորումը,
- Գյուղատնտեսական արդյունավետ գործելակերպերի փաթեթի մշակումը՝ իրականացման և մոնիթորինգի համապատասխան ընթացակարգերով:

2. Արտադրող կազմակերպությունները

Հրատապ խնդիրը և հիմնական խոչընդոտը վերաբերում է հողի մասնատվածությանը և այն գործիքներին, որոնց օգնությամբ հնարավոր կլինի՝ համագործակցության ճանապարհով նպաստել հողաբաժինների մեծացմանը: Կոոպերատիվների/արտադրող կազմակերպությունների կազմավորման առումով անհրաժեշտ է տարածաշրջանային դիրքորոշում, աջակցություն ստանալու համար՝ արտադրանքի և ծառայությունների, ինչպես նաև պահանջների հստակեցում: Դրանք պետք է լինեն կամավոր, ծառայեն մեկ ընդհանուր նպատակի և ապահովեն իրենց անդամներին առաջարկվող ծառայությունների ծավալը և արդյունավետությունը:

3. Ենթակառուցվածքների կատարելագործումը

Գոյություն ունեն այս հատվածի համար կարևոր մի շարք արժեքային շղթաներ: Գնահատման ընթացքում բացահայտված հիմնական խոչընդոտներն են.

- Գյուղական վայրերում մասնագիտական որակների և վերապատրաստումների անբավարար մակարդակը
- Օրենքների, կանոնակարգերի և ստանդարտների, ինչպես նաև համեմատական տեղեկատվության թերի լինելը
- Պարենային անվտանգության, անասնաբուժական – սանիտարական համակարգերի թերի զարգացածությունը

4. Կաթ և կաթնամթերք

Արևելյան գործընկերության երկրներում ընդհանուր առմամբ ապրանքային ամենից արժեքավոր խմբեր են հանդիսանում կաթն ու միսը, ինչպես ներքին մատակարարման, այնպես էլ միջազգային առևտրի առումով: Տարածաշրջանի երկրների մեծ մասում կաթնամթերքը ներկայումս արտադրվում է տնային տնտեսություններում, որոնք օգտվում են անվճար արոտավայրերից: Ազգային և տարածաշրջանային մակարդակով՝ կաթի և կաթնամթերքի մատակարարման շղթան կատարելագործման, ձեռնարկությունների զարգացման, բարեփոխումների և իրավական դաշտի բարելավման կարիք ունեցող հիմնական հավակնորդներից է: Այդ առնչությամբ խնդիրները ներառում են.

- Տարածաշրջանում կաթի և կաթնամթերքի վերաբերյալ ստանդարտների ընդհանրացում և ներդաշնակեցում,

- Տարածաշրջանում կաթի և կաթնամթերքի արտադրության առևտրայնացմանն ուղղված միջոցառումներ,
- Տարածաշրջանի համայնքների և ձեռնարկությունների համար ագարակների լիազորագրվածության (բրուցեյոզից զերծ) կարգավիճակի ձեռքբերում՝ կենդանիների հիվանդությունների, մասնավորապես՝ բրուցեյոզի և տուբերկուլյոզի (որոնք հեշտությամբ տարածվում են կենդանիների և նրանց կաթն ու կաթնամթերքն օգտագործող մարդկանց մեջ) կանխարգելիչ և վերահսկիչ ծրագրերի իրականացմամբ.
- Միջոցառումներ, որոնք ուղղված են կաթի և կաթնամթերքի որակի և արժեքի բարձրացմանը (օրինակ՝ վրացական գինիների գլիկեմիկ ցուցիչի դրական արդյունքի վրա հիմնվելով՝ կարելի է գովազդել կաթնամթերքի աշխարհագրական ցուցանիշները):

3.2 Բարձր արժեքային գյուղատնտեսություն (ԲԱԳ)

Հող մշակող մասնավոր տնտեսությունների համար գյուղատնտեսական կուլտուրաների վրա հիմնված առավել կարևոր արժեքային շղթան ԲԱԳ-ն է, մասնավորապես թարմ մրգի ու բանջարեղենի արտադրությունը: Այս մթերքներն ընտանիքի եկամտի և հողօգտագործման, ինչպես նաև երկրի մատակարարման և միջազգային առևտրի կարևոր տարրն են հանդիսանում: ԲԱԳ արտադրության համար հողօգտագործումը ներառում է տնամերձ հողերը (բանջարանոցները և բակերը) և ոռոգվող տարածքների հողամասերը:

7.2 Վերը նշված բացթողումների ուղղությամբ Հայաստանում և Հարավային Կովկասում առաջարկվող գործողություններ

Տրամաբանական է ելնել վերը թվարկված հստակ խնդիրներից, բայց առաջին հերթին որպես հիմք ընդունելով հետևյալը.

1. **Բալանսավորված բյուջետավորման քաղաքականություն. Առաջնահերթությունների** հստակեցումը՝ նպատակների և միջոցների համադրությամբ:
2. **Գյուղատնտեսության մասին օրենսդրության** վրա հիմնվելով՝ գործարկել միջոցներ, որոնք կապ կապահովեն աջակցության և **արդյունավետ գործելակերպերի** պահանջի միջև, այնպես, որ աջակցությունը պայմանավորի նման գործելակերպերին հետևելը և դրանք իրականացնելը:
3. **Տարածաշրջանային զարգացման ծրագրերի** համատեքստում մշակել **գյուղի զարգացման քաղաքականություն**, որը նպատակաուղղված է գյուղատնտեսությանն առնչվող միջոցառումներին և համապատասխան բնապահպանական խնդիրներին: Այս առումով ցանկը միանգամայն հստակ է, և դրանում կարևորված են արոտավայրերին, ջրին և գյուղատնտեսության զարգացման համար ընդհանուր ենթակառուցվածքին առնչվող խնդիրները:

ԵՄ աջակցության համակարգումը

ԳԳԶԵՀԾ-ն քաղաքականության նախաձեռնություն է Եվրոպական գործընկերության երկրների համար, ուր գյուղատնտեսության և գյուղի զարգացումը կարևոր նշանակություն ունի և երկրի ռազմավարական ծրագրի համատեքստում, ԵՀՔ գործընկերության և աջակցության ծրագրերի հաջորդ՝ 2014-2020 թթ. փուլի ծրագրման շրջանակներում հայտարարված է որպես առաջնահերթություն: Հայաստանն ակնկալում է, որ ԳԳԶԵՀԾ երկխոսությունը հետագա ընթացք կունենա և կվերածվի գործողությունների, որոնք կնպաստեն գյուղատնտեսական արտադրանքի մրցունակության աճին և գյուղական վայրերում կյանքի պայմանների բարելավմանը: Այս տեսակետն են արտահայտել նաև 2012 թ. հոկտեմբերի 12-ին Երևանում կայացած՝ ԳԳԶԵՀԾ սեմինարին մասնակցած պաշտոնատար անձինք:

1. **Քաղաքականությանն առնչվող հարցեր.** Հարմարունակ գյուղատնտեսություն և գյուղական վայրերի զարգացում, նախապատրաստություն ծրագրման հաջորդ՝ 2014-2020 թթ. փուլին:
2. Հայաստանի իշխանությունների համար **վերապատրաստումներ և տեղեկատվություն**
3. **Միջանկյալ նախապատրաստական փորձնական ծրագրեր՝**
 - Կենսունակ գյուղատնտեսություն ապահովող մոտեցումներ
 - Գյուղական վայրերի զարգացման մոդել

8. Տարածաշրջանային բացերի և առաջնահերթությունների բացահայտում , և հետագա գործողությունների վերաբերյալ առաջարկություններ

Եվրոպական Միության և իր արևելյան գործընկերների՝ Հայաստանի Հանրապետության, Ադրբեջանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության և Ուկրաինայի հետ համագործակցությունը Միության արտաքին հարաբերությունների կարևորագույն բաղադրիչ է: Եվրոպական գործընկերության երկրները երկու առանձին բլոկներ են կազմում. Հարավային Կովկասի երկրները՝ Վրաստանը, Հայաստանը և Ադրբեջանը և Կենտրոնական Եվրոպայի երկրները՝ Մոլդովան, Ուկրաինան և Բելառուսը:

Արևելյան Եվրոպա (ԱԵ) – Բելառուս, Մոլդովա և Ուկրաինա

Եվրասիական տափաստանային հողերը, Մոլդովայի և Ուկրաինայի սևահողերը, Բելառուսի ճահճուտները, անտառները և բերրի հողերը:



Հարավային Կովկաս (ՀԿ) – Հայաստան, Ադրբեջան և Վրաստան

Անդրկովկասը, Արևելյան Եվրոպայի և Հարավ-Արևմտյան Ասիայի սահմանային հողերը՝ սահմանազատված Կուր-Արաքս գետերի ավազանով, Սև և Կասպից ծովերի միջակայքում:



Քաղաքական ծրագրերը Արևելյան գործընկերության (ԱԳ) բազմակողմ գործունեության հիմնական գործիքներն են: Դրանք արտացոլում են Արևելյան գործընկեր երկրների և Եվրոպական Միության միջև համագործակցության չորս հիմնական ոլորտները: Դրանք են.

- Ժողովրդավարություն, արդյունավետ կառավարում և կայունություն (ծրագիր 1).
- ✓ **Տնտեսական ինտեգրում և միացում ԵՄ քաղաքականություններին (ծրագիր 2)**
- Էներգետիկ անվտանգություն (ծրագիր 3) և
- Շփումներ մարդկանց միջև (ծրագիր 4):

Արևելյան գործընկերության բազմակողմ ծրագրերի՝ Ընթացակարգերի ընդհանուր ուղենիշներին և կանոնակարգերին համապատասխան (5 հունիսի, 2009) ստեղծվել է **«Գյուղատնտեսության և գյուղի զարգացման՝ Արևելյան գործընկերության փորձագիտական խումբ»:** Գյուղատնտեսության և գյուղի զարգացման գլխավոր տնօրինությունը հանդես է գալիս որպես Գյուղատնտեսության և գյուղական վայրերի զարգացման փորձագիտական խմբի նախագահող, իսկ Զարգացման և համագործակցության գլխավոր տնօրինությունը ապահովում է Փորձագիտական խմբի առաջարկների համապատասխանությունը ԵՄ զարգացման քաղաքականություններին և ուղենիշներին:

Փորձագիտական խմբի նպատակները սահմանվել են Բրյուսելում 2012 թ. նոյեմբերի 19-ին կայացած՝ «Արևելյան գործընկերության երկրներում գյուղատնտեսության և գյուղի զարգացման» վերաբերյալ տարածաշրջանային տեխնիկական սեմինարին և կայանում են հետևյալում.

- Նպաստել ԵՄ-ում և Գործընկեր երկրներում գյուղատնտեսության և գյուղի կայուն զարգացման վերաբերյալ դրական փորձի փոխանակմանը, այդ թվում՝ ոլորտների առանձնահատուկ ռազմավարությունների, քաղաքականությունների և ինստիտուցիոնալ կարողությունների առնչությամբ:
- Գործել ի նպաստ և աջակցել Գյուղատնտեսության և գյուղական վայրերի զարգացման եվրոպական հարևանության ծրագրերի (ԳԳԶԵՇՕ) հետագա զարգացմանը և իրականացմանը՝ բացահայտելով Գործընկեր երկրների ընդհանուր ոլորտային մարտահրավերները և աջակցելով Գործընկերներին՝ ազգային և տարածաշրջանային մակարդակով կիրառելի ընդհանուր լուծումներ գտնելու խնդրում:
- Բարելավել ազգային և տարածաշրջանային մակարդակով Գործընկեր երկրների ձեռնարկած միջոցների համապատասխանությունը և խուսափել դրանց կրկնօրինակումներից:

Փորձագիտական խմբի գործունեությունը կներառի հետևյալը.

- Մասնակիցների միջև տեղեկությունների և արդյունավետ փորձի տարածումը (ներկայացումների և տեսակետների փոխանակման միջոցով), այդ թվում՝ ռազմավարական մոտեցումների, ընթացակարգային պահանջների (ներառյալ շահագրգիռ կողմերի ներգրավումը), վարչական և կազմակերպչական պահանջների վերաբերյալ և այլն:
- Միջամտության ոլորտների բացահայտումը, որոնք կարող են քննարկվել ԵՄ-ի և/կամ միջազգային ֆինանսական կառույցների (ՄՖԿ-ների) կողմից համատեղ ֆինանսավորվող ծրագրերը սահմանելիս:

8.1. Գյուղատնտեսական արտադրանքի և գյուղի զարգացման, ներառյալ անասնապահության, տարածաշրջանային տարբերությունների և անհամապատասխանությունների գնահատումը

Ընդհանուր առմամբ որոշակի հստակ տարբերություններ կան Եվրոպական գործընկերությունը ներկայացնող՝ Հարավ-Կովկասյան և Արևելյան Եվրոպայի երկրների միջև: Հարավային Կովկասի երկրներում «ինքնազբաղ» փոքր տնտեսությունները կազմում են ընդհանուրի 97,33%-ը և փաստորեն հաշվետու են մշակովի կուլտուրաների և կենդանական ծագման գրեթե ողջ արտադրանքի համար: «Ինքնազբաղ» տնտեսությունները, ինչպես և Արևելյան Եվրոպայի իրենց գործընկերները, չունեն հարկային կամ վիճակագրական ինքնություն և տեղական մակարդակով տուրքերից և հողի հարկից բացի հարկեր չեն վճարում: Վիճակագրությունը խիստ ընդհանրացված է՝ զավեշտի հասնող և տեղեկություններ չի տրամադրում շուկայական մասնակցության, տնտեսական չափի և իրական աշխատող միավորների մասին:

Հողի սեփականաշնորհման արդյունքում (Բելառուսից բացի) գյուղական բնակչությանը պատկանող փոքր հողատարածքները բաժանված են ըստ տեսակի առանձին հողակտորների, այդ թվում բանջարանոցների: Սրան ավելացրած համագործակցության և միավորման չնչին չափերը, արդյունքում ստացվել է գյուղացու վրա հիմնված գյուղատնտեսություն: Փաթեթավորման, պահեստավորման, վերամշակման, բաշխման ենթակառուցվածքի և շուկայական ցանցերի բացակայությունը խոչընդոտում է

որակի և երկարաժամկետ օգտագործման հնարավորության ապահովմամբ արժեքի ավելացմանը և մեծացնում է կորուստները:

Ա. Հողօգտագործումը. ԱԳ6-ը (ՀԿ3 & ԱԵ3) ԵՄ27¹⁸-ի համեմատությամբ				
	ՀԿ3	ԱԵ3	ԵՄ27	Ընդհանուր
Ողջ հողատարածքները	18.63Մ Հա	84.51Մ Հա	400.42մ հա	503.56Մ Հա
Գյուղատնտեսական տարածքները(հա)	9.91Մ Հա	53.92Մ Հա	170մ հա	233.8Մ Հա
Գյուղատնտեսական տարածքները(%)	53.2%	63.8%	42.5%	46%
Ոռոգելի 61%	3.25 Մ Հա	42.62 Մ Հա	97.3 մ Հա	143.2 Մ Հա
Մշտական 5%	0.57 Մ Հա	1.33 Մ Հա	10.9 մ Հա	12.8 Մ Հա
Այլ 34%	5.60 Մ Հա	9.97 Մ Հա	61.8 մ Հա	77.37 Մ Հա
Բ. Հողի վարձակալություն. ԱԳ6-ը (ՀԿ3 & ԱԵ3) ԵՄ27-ի համեմատությամբ				
Ողջ բնակչությունը	16.7մ	58.82մ	502.5մ	578.02մ
Գյուղական %	45%	31.55%	23%	24.5%
Գյուղական ընդհանուր	7.51մ	18.56մ	115.57մ	141.64մ
Գյուղատնտեսության մեջ %	44.3%	9.2%	5.2%	6.7%
Գյուղատնտեսության մեջ	7.4մ	5.35մ	26մ	38.75մ
Հողաբաժինների թիվը	2.7մ	7.8մ	14մ	24.5մ
SS միջին չափը	1.48Հա	1.4Հա	14Հա	
Մասնավոր / SS	97.33%	45.9%	47% ¹⁹⁾	63.41%
Գուղատնտեսական ձեռնարկատիրությունները	2.67%	54.1%	53%	

Հատկապես 2007 թ. երաշտից և ցորենի ավանդական մատակարարներից ներմուծման արգելքից հետո Հարավային Կովկասի երկրների համար ընդհանուր է սննդամթերքի, մասնավորապես ցորենի հուսալի մատակարարում ձևավորելու ձգտումը: Այս նախաձեռնությունը աջակցություն է ստանում բյուջետային միջոցներից սուբսիդավորմամբ և ոլորտային ներդրումներով:

Հացահատիկի արտադրության ավելացման այս նախաձեռնությունն ինքնին հարկադրում է հողատարածքների միավորման / արդյունավետության մեծացման նախաձեռնությունների պաշտոնական և արտադրողների և գյուղատնտեսական կոոպերատիվների համար մշակված օրենքների միջոցով, ինչպես նաև արգելքները, այդ թվում շրջանառության և ավելացված արժեքի հարկերի շեմը թեթևացնող հարկային քաղաքականությամբ: Այս երկրները նաև ոռոգման և դրանից բխող հողի աղակալման հետ կապված լուրջ խնդիրներ ունեն, ինչը գյուղատնտեսության համար հողատարածքների

¹⁸ԵՄ վիճակագրությունը վերցված է EUROSTAT-ից, ԱԳ6-ը հասանելի է, սակայն ոչ նույն բազայից

¹⁹Սահմանված՝ պակաս, քան 1 ESU = € 1200

կորստի պատճառ է դառնում: Հողատարածքների մի զգալի մասն էլ՝ հարյուր հազարավոր հեկտարներ պարզապես անմշակ են թողնվում հողատերերի կողմից:

Մրա հակառակ պատկերը Արևելյան Եվրոպայի, մասնավորապես Բելառուսի և Ուկրաինայի ձեռնարկատիրություններն են: Թեև Ուկրաինայում և Մոլդովայում կան նաև մեծ թվով փոքր մշակելի հողատարածքների, այդ թվում բանջարանոցների սեփականատերեր, որոնք նույնպիսի խնդիրներ և զարգացմանը խանգարող խոչընդոտներ ունեն, ինչպիսիք առկա են Հարավային Կովկասի երկրներում: Պարզապես այստեղ հողն ավելի լավն է, իսկ կլիմայական պայմաններն ավելի բարենպաստ:

Հարավային Կովկասի երկրներում մեծ տարածք են զբաղեցնում պետական և համայնքային արոտավայրերը, որոնք օգտագործվում են որպես մասնավոր անհատների սեփականությունը հանդիսացող կենդանիների արածելու միակ աղբյուր: Կենդանիներին արածեցնելու համար այս արոտավայրերի, նաև ամռանը լեռնային սահմանամերձ արոտավայրերի լայնորեն օգտագործումն առաջ է բերում երկրի ներսում և նրա սահմաններից դուրս մարգագետինների և կենդանիների հիվանդությունների վերահսկման հետ կապված խնդիրներ: Կենդանիներից մարդուն փոխանցվող էնդեմիկ հիվանդությունների ցանկն այս տարածաշրջանում բավական մեծ է: Ուկրաինայում և Մոլդովայում անասնապահությամբ հիմնականում զբաղվում են մանր սեփականատերերը, և անասուններին արածեցնում են մոտակա համայնքային արոտավայրերում, ինչը սահմանափակում է արտադրությունը և շահագործում (չվերահսկվող) արոտավայրերը, ինչպես նաև գրունտային ջրերը, քանի որ անասուններին խնամում են տնային տնտեսությունների բակերում:

Առևտրի և ձեռնարկատիրության զարգացումը բաղադրյալ խնդիր է բոլոր երկրների համար, որը ներառում է բանակցություններ քվոտաների և տարիֆների շուրջ, ինչպես առևտրային բյուրոների ԵՄ-ի, Մաքսային միության ներսում, այնպես և ավելի լայն՝ Համաշխարհային առևտրային կազմակերպության շրջանակներում:

Ազգային մակարդակում խնդիրներն ավելի գործնական են, օրինակ ընդհանուր կանոնների և չափորոշիչների ներմուծումը, տեղեկատվությունն արտադրողականության և գնագոյացման մասին և տեխնիկական արգելքները, ամենից կարևորը՝ սանիտարական միջոցառումները:

8.2. Առաջարկներ գործողությունների վերաբերյալ, որոնք կարող են / պետք է իրականացվեն տարածաշրջանային համատեքստում

Բազմակողմ համագործակցության շրջանակները

Ակնկալվում է, որ ԳԳԶԵՀԾ-ն գործընկեր երկրներին կօգնի առավել արդյունավետ մասնակցել արտասահմանյան շուկաներում, առավելագույնս շահել սպագայի ԽՀԱԱԳ-ներից, խթանել իրենց երկրների գյուղատնտեսությունը և որդեգրել գյուղատնտեսության և գյուղի զարգացման երկարաժամկետ ռազմավարություններ:

Տարածաշրջանային հիմնական նմանությունները, որ մեծ կամ փոքր չափով առկա են Արևելյան գործընկերության երկրներից յուրաքանչյուրի ԳԳԶ ոլորտում, կարելի է հստակորեն խմբավորել ըստ երկու խմբի, որոնք են՝ (ա) գյուղատնտեսական մթերքների մատակարարման շղթաների թերությունները և անարդյունավետությունը և (բ) կառուցվածքային և քաղաքականությանն առնչվող թերությունները և անարդյունավետությունը:

Ա. Գյուղմթերքների մատակարարման շղթայի թերություններն ու անարդյունավետությունը

Ա.1 Մասնատված հողատիրություն և արտադրողների միջև համագործակցության և միավորվածության բացակայություն

Ա.2 Գյուղական համայնքներում մասնագիտական կարողությունների և վերապատրաստումների ցածր մակարդակ

Ա.3 Չափորոշիչների, օրենքների և կանոնակարգման, ինչպես նաև համեմատական տեղեկատվության անկատարություն

Ա.4 Բուսական և կենդանական ծագման ռազմավարական սննդամթերքի անվտանգության անբավարար մակարդակ

Հացահատիկային և կենդանական ծագման ռազմավարական սննդամթերքի անվտանգության անբավարար մակարդակ

Ա.5 Գյուղական վայրերում հնացած տեխնոլոգիաներ և համապատասխան ենթակառուցվածքների բացակայություն

Ա.6 Գյուղատնտեսական արդյունավետ գործունեության համար խրախուսական միջոցների և կանոնակարգերի բացակայություն

Բ. Կառուցվածքային և ռազմավարության առնչվող թերություններն ու անարդյունավետությունը

Բ.1 Պարենային ապահովության, սանիտարա-անասնաբուժական թերզարգացած համակարգ

Բ.2 Գյուղի զարգացման քաղաքականության, լիազորությունների և բյուջետային միջոցների բացակայություն

Բ.3 Կենտրոնացում արտադրության սուբսիդավորման վրա՝ առանց փոխհատուցման մեխանիզմի

Բ.4 Բազմաթիվ առաջնահերթությունների սահմանում և ներառում բյուջեում

Վերը թվարկած բոլոր դժվարությունները երկրից երկիր տարբերվում են ըստ չափերի, ըստ ոլորտի աջակցության մոտեցումների, քաղաքականության առաջնահերթությունների և խնդիրների, ինչպես նաև առևտրում ներգրավվածության աստիճանով, բայց այս դժվարությունների ընդհանրությունն ու դրանց հաղթահարման որոշ ուղիներ տարածաշրջանի բոլոր երկրների համար աջակցություն և օգուտ ապահովող գործողությունների շուրջ նկատառումների հիմք են ստեղծում: Աջակցության ոլորտները / կարիքները կարելի է դասակարգել ըստ երեք ընդարձակ թեմատիկ ոլորտի.

1. Գյուղատնտեսության և գյուղի զարգացման քաղաքականություն, կառուցվածքային և կանոնակարգային ծրագրերի մշակում.

ԱԳ բոլոր երկրներում գյուղական բնակչությունն անուշադրության է մատնված եղել և դուրս է մնացել քաղաքականության ծրագրման գործընթացներից: Քաղաքականության այս բացի հետևանքներից մեկը եղել է գյուղական վայրերից բնակչության աստիճանական դատարկումը, երբ տնտեսապես առավել ակտիվները տեղափոխվել են քաղաքներ կամ արտերկիր: Այս բացասական ժողովրդագրական միտումը և գյուղարդյունաբերության զարգացման համար ակտիվ աշխատող բնակչության կարիքը՝ ի պատասխան ավելի զորեղ քաղաքականություն մշակելու և ինստիտուցիոնալ պարտավորություններ ստանձնելու անհրաժեշտություն է ստեղծում:

1.1 Գյուղի զարգացման քաղաքականությունը, իրավազորությունը և բյուջետային միջոցները

1.1.1 Գյուղի զարգացման հստակ քաղաքականությունը, իրավասությունների և ռազմավարական առաջնահերթությունների սահմանումը և բյուջետային շրջանակների սահմանումը

1.1.2 Չավարեղենի և կենդանական ծագման ռազմավարական սննդամթերքի անվտանգության ապահովման համար քաղաքականությունների և ծրագրերի մշակումը և արտադրական

սուբսիդիաների և որպես օժանդակություն վճարումների վերաուղղորդումը՝ փոխհատուցումն ապահովելու և գյուղատնտեսական գործունեության և չափանիշների բարելավման համար

1.2 Չափանիշները և կանոնակարգումը

1.2.1 Գյուղմթերքների չափանիշների, կանոնակարգերի, իրավական դաշտի, ինչպես նաև արտադրության վերաբերյալ համեմատական (եկամուտների և ապրանքի արժեքի) տեղեկատվության առնչությամբ բացթողումների վերացումը

1.2.2 Պարենային անվտանգության և կենդանիների առողջության չափանիշների ապահովման համար համակարգերի մշակումը

2. Գյուղատնտեսության և անասնապահության ոլորտի մրցունակության և կայուն արտադրողականության խթանում

2.1 Հողի տնօրինումը և շրջակա միջավայրի բարելավումը

2.1.1 Հողի մասնատված սեփականատիրության և արտադրողների միջև համագործակցության բացակայության խնդիրների լուծմանը նպատակաուղղված ծրագրերի մշակումը

2.1.2 Գյուղատնտեսությամբ զբաղվող և չզբաղվող գյուղական շահագրգիռ բնակչության համար մասնագիտական որակավորման բարձրացմանը և մասնագիտական վերապատրաստմանը նպատակաուղղված ծրագրերի մշակումը

2.1.3 Գյուղական վայրերում համապատասխան ենթակառուցվածքների և համապատասխան տեխնոլոգիաների օգտագործման և հասանելիության բարելավումը

2.1.4 Գյուղատնտեսական արդյունավետ գործունեության համար ճկուն և խելամիտ օրենքների մշակումը

3. Համայնքահեն զարգացումը

3.1 Կյանքի որակի բարելավումը և տնտեսական գործունեության բազմազանացման խթանումը

3.1.1 Գյուղական շրջաններում պայմանների բարելավման նպատակով՝ գյուղի համայնքահեն զարգացման խթանումը

3.1.2 Գյուղի տնտեսական, հասարակական և մշակութային գործունեության (կենսունակ) բազմազանեցումը խթանելու նպատակով աջակցության համակարգերի և միջոցների բարելավումը

9. Եզրահանգումները և քաղաքական դասերը

Մույն՝ «Հայաստանում գյուղատնտեսության և գյուղի զարգացման ոլորտների գնահատումը» հետազոտությունը քննել է Հայաստանում գյուղատնտեսության և գյուղի զարգացման կարևորությունը և մատնանշել է ազգային տնտեսության համար դրա դերն ու նշանակությունը և արդիականացման վճարող անհրաժեշտությունը:

Հետազոտությունը հաշվի է առել գյուղատնտեսության և գյուղի զարգացման բոլոր ոլորտների շահագրգիռ կողմերը, ներառյալ կառավարական մարմինները, միջազգային կազմակերպությունները, ֆինանսավորող և հասարակական կազմակերպությունները: Հետազոտության ներկայացրած տեղեկատվությունը վերաբերում է.

- Հայաստանի գյուղատնտեսության և գյուղի զարգացման ոլորտների հիմնական և հանգուցային դերակատարներին,
- Գյուղատնտեսության և գյուղի զարգացման կառավարական քաղաքականությունների կարգավիճակին,
- Հայաստանում գյուղատնտեսության առնչությամբ քաղաքականության մշակմանը վերաբերող ռազմավարական առաջնահերթություններին և հանգուցային միջոցառումներին,
- ԵՄ-Հայաստան փոխհարաբերությունների և գյուղատնտեսության և գյուղի զարգացման սկզբունքների վերաբերյալ տեղեկատվությանը,
- Գյուղատնտեսության և գյուղի զարգացման համար խնդիրների և լուծումների հստակեցման կարևորությունը,
- Համապատասխան կառավարական ծրագրերի և ԳԳԶԵՀԾ մոտեցումների ներդաշնակությանը, ինչպես նաև ԳԳԶԵՀԾ ծրագրի միջոցով ԵՄ հիմնադրամներից շահելու հնարավորությունը:

9.1. Եզրակացություններ

Հայաստանի գյուղատնտեսությունը ամբողջապես չի օգտագործում իր ներուժը՝ ներկայումս դրսևորելով ցածր արտադրողականություն և ոչ բավարար մրցունակություն: Ազգային հարստության (հողի, ջրի, անտառների և այլն) անկումը, հիմնական բերքերի և անասունների արտադրության անկումը, կենսաբազմազանությանը հասցված վնասները, էկոլոգիական հավասարակշռության անկայունությունը այն խնդիրներից են, որոնք խորհրդանշում են Հայաստանում գյուղատնտեսության զարգացումը: Գյուղերի չքավորությունը, աշխատանքային հնարավորությունների բացակայությունը և գյուղերում ապրուստի ցածր մակարդակը խոցելի են դարձնում Հայաստանի գյուղական շրջանները:

2012 թ. հոկտեմբերին կազմակերպվել էր հիմնական շահագրգիռ կողմերի մասնակցությամբ սեմինար (Հավելված 1), որի նպատակն էր հստակեցնել և սահմանել գյուղատնտեսության և գյուղի զարգացման ոլորտների առաջնահերթությունները և պետական նախաձեռնությունները: Հիմնական բացահայտումները և առաջարկությունները մատնանշում էին, որ գյուղի զարգացումը ճանաչվել է որպես երկրի առաջնահերթ կարևորություն, և հաշվի առնելով գյուղատնտեսության և գյուղի դերն ու նշանակությունը ազգաբնակչության ընդգրկվածության, զբաղվածության և ՀՆԱ-ի առումով, ամենայն հավանականությամբ կշարունակի առաջնահերթություն մնալ: Ներկայումս հիմնական ռազմավարական ծրագիրը վերանայման փուլում է գտնվում, միևնույն ժամանակ մշակվում են մի շարք օրենսդրական ծրագրեր:

Թեև կառույցներն ընդհանուր առմամբ տեղյակ են այս խնդիրներին, և աջակցության մեխանիզմները մշակվում են, երկար տարիների անբավարար ֆինանսավորումը հանգեցրել է գյուղատնտեսությանը և գյուղի զարգացմանն ուղղված անբավարար աջակցության: Հետևապես առաջարկվում է, որ ԳԳԶԵՀԾ աջակցությունը նպատակաուղղվի Առանցքներ 1 և 2 տիպի գործողություններին: Հաշվի

առնելով բյուջեի սահմանափակությունը, քիչ հավանական է, որ Կառավարությունն ի վիճակի լինի ԳԳԶԵՀՕ-ի կողմից աջակցվող գործողությունների համար նույնքան ֆինանսավորում տրամադրել:

Ի մի բերելով՝ ասենք, որ այս գնահատման հիման վրա արված եզրակացություններն ու առաջարկները հետևյալն են.

- Գյուղատնտեսության և գյուղի զարգացումը Հայաստանի համար առաջնահերթություն են հանդիսանում և առաջիկայում կշարունակեն այդպիսին մնալ:
- Գյուղատնտեսության ոլորտի զարգացման օրենսդրական շրջանակները հիմնականում առկա են կամ գտնվում են վերանայման փուլում: Կիրարկման մեխանիզմները և գործողություններն անբավարար են:
- Ընդհանուր առմամբ գյուղատնտեսության և գյուղի զարգացման հայաստանյան առաջնահերթությունները համապատասխանում են ԳԳԶԵՀՕ Առանցքներ 1 և 2 մոտեցումներին, բայց ԳԳԶԵՀՕ ծրագրի մշակման համար առաջնահերթությունների ցանկը պետք է համալրվի:
- «Գյուղատնտեսության և գյուղի զարգացման 2010-2012 թթ. ռազմավարությունը» և քաղաքականությանը վերաբերող այլ փաստաթղթերում հիմնական շեշտադրումը գյուղատնտեսության զարգացման վրա է, որը հիմնականում առնչվում է ԳԳԶԵՀՕ Առանցք 1-ին: «Գյուղի զարգացում» բառերը հիշատակված են վերնագրում, սակայն մասնրամասնած չեն:
- Գյուղի զարգացման առաջնահերթությունները ամրագրված են քաղաքականության վերաբերյալ զանազան փաստաթղթերում, բայց տրամաբանորեն համակարգված չեն և պահանջում են լրացուցիչ մշակում և համակարգում՝ Առանցք 2-ի ուղղվածությանը համապատասխանելու համար:
- Կարողությունների ձևավորման բաղադրիչը բացակայում է առաջնահերթությունների և ռազմավարությունների մեջ, թեև դրա կարիքը խիստ զգացվում է պետական կառույցների բոլոր մակարդակներում և ոչ պետական մասնատերերի համար:
- Առաջարկություններ.
- Անհրաժեշտ է ավելի համակարգված մոտեցում: Առաջարկվում է ձևավորել ԳԳԶԵՀՕ աշխատանքային խումբ (վարչապետի կամ համապատասխան նախարարության ենթակայությամբ) և մշակել մեխանիզմներ՝ գործընթացում ընդգրկված պետական մարմինների և այլ շահագրգիռ կողմերի միջև համակարգումը և թափանցիկությունն ապահովելու նպատակով:
- Նախքան ԳԳԶԵՀՕ ծրագրումն սկսելը անհրաժեշտ է բարձրացնել բոլոր ներգրավված կողմերի տեղեկացվածությունը ԳԳԶԵՀՕ փիլիսոփայության և մոտեցումների վերաբերյալ:
- Գործընթացը պետք է ներառի տարբեր ոլորտների կարիքների գնահատումը և առավել նպատակահարմար ուղղությունների սահմանումն ու փորձնական ծրագրերը:
- Ծրագրման գործընթացում պետք է իրականացվի մասնակցային մոտեցում՝ համայնքային ղեկավարների ընդգրկմամբ:

Առանձնահատուկ նշանակություն կունենա ԳԳԶԵՀՕ ծրագրի տեխնիկական աջակցության տարրը, քանի որ այն կնպաստի ԳԳԶԵՀՕ տիպի մոտեցումների իրականացման համար երկրի օրենսդրական և ինստիտուցիոնալ շրջանակների ձևավորմանը: Գյուղատնտեսության նախարարությունն իր կարողությունների, մասնավորապես՝ իր ծրագրերի իրականացումը գնահատելու համար վերլուծական կարողությունների հզորացման կարիք ունի: Առաջարկվում է, որպես ինստիտուցիոնալ կարողությունների խթանման մի եղանակ, ծրագրման այս փուլում ԳԳԶԵՀՕ մոտեցումներն ուղղորդել իրականացնող միավորների միջոցով՝ կենտրոնական և տեղական իշխանությունների հետ սերտ համագործակցությամբ: Սա կապահովի, որպեսզի ծրագրման հաջորդ փուլում հիմնարկությունները կարողանան իրականացման գործընթացում ավելի գործուն դեր ստանձնել:

9.2. Գյուղատնտեսության և գյուղի զարգացման փորձագիտական խմբի համար տարածաշրջանային ընդհանուր օրակարգային հարցեր

1	Գյուղատնտեսության և գյուղի զարգացման քաղաքականություն, ինստիտուցիոնալ և կանոնակարգման համակարգի ձևավորում
1.1	Գյուղի զարգացման քաղաքականություն, իրավասությունները և բյուջետային միջոցները
1.1.1	Խնդիրը. բյուջեով սահմանված՝ գյուղի զարգացման քաղաքականության, սահմանված իրավասությունների և ռազմավարական առաջնահերթությունների բացակայություն
1.1.2	Խնդիրը. փոխադարձ համապատասխանության մեխանիզմների ներառումը պետական աջակցման միջոցառումներում, որոնք նպատակաուղղված են ռազմավարական նշանակության մշակովի (հացահատիկային) և կենդանական ծագման մթերքների պարենային անվտանգության ապահովմանը
1.2	Չափորոշիչներ և կանոնակարգեր
1.2.1	Չափորոշիչների, կանոնակարգերի, օրենսդրության և համեմատական տեղեկատվության մեջ առկա բացերը Խնդիրը. միջազգային և ԵՄ չափանիշներին համապատասխան չափորոշիչների անհրաժեշտություն, համապատասխանության միջոցառումների՝ առկա կանոնակարգերի մոնիթորինգի և ստուգման մեխանիզմների ներառում
1.2.2	Մենդի անվտանգության և անասունների առողջության թերի համակարգ Խնդիրը. համապատասխանությունը SPS չափորոշիչներին, հատկապես կենդանիների և կենդանական ծագման մթերքներին վերաբերող անասնապահական-սանիտարական չափանիշներին
2	Գյուղատնտեսության և անասնապահության ոլորտի մրցունակության և կայուն արտադրողականության խթանումը
2.1	Հողի տնօրինումը և շրջակա միջավայրի բարելավումը
2.1.1	Մասնատված հողատիրությունը և արտադրողների միջև համագործակցության և միավորվածության բացակայությունը Խնդիրը. հողատարածքների մասնատվածությունը և փոքրությունը բերում են գյուղատնտեսական մթերքների անարդյունավետ և անկայուն արտադրության
2.1.2	Գյուղական համայնքներում մասնագիտական ցածր մակարդակը և վերապատրաստումների անբավարարությունը Խնդիրը. գյուղի արտադրողների համար վերապատրաստումների և կրթության հասանելիության ապահովում վերապատրաստումների, ֆերմերական դպրոցների և մասնագիտական դասընթացների միջոցով
2.1.3	Գյուղական վայրերի հնացած սարքավորումները և համապատասխան ենթակառուցվածքների բացակայությունը Խնդիրը. արտադրության և բերքահավաքի հաջորդող գործունեության համար (այդ թվում՝ պահեստավորման, մշակման, բաշխման և շուկաների) անարդյունավետ համակարգեր
2.1.4	Գյուղատնտեսական արդյունավետ գործունեության համար տարածաշրջանային կանոնները Խնդիրը. գյուղատնտեսության արդյունավետ գործունեության և աջակցման մեխանիզմների, այդ թվում՝ ջրի և ոռոգման համար, կանոնների սահմանում
3	Գյուղի համայնքահեն զարգացումը
3.1	Կյանքի բարելավումը և տնտեսական գործունեության բազմազանացման խթանումը
3.1.1	Գյուղի համայնքահեն զարգացման խթանումը Խնդիրը. գյուղատնտեսության և գյուղի զարգացման քաղաքականության և ռազմավարության մշակմանը համայնքի մասնակցությունն ապահովող մեխանիզմ

Գյուղատնտեսության և գյուղի զարգացման փորձագիտական խմբին առաջադրված առաջին թեման (Տեխնիկական սեմինար, 19 նոյեմբերի, 2012 թ.) վերաբերում էր **«Ինչ է գյուղի զարգացումը»** հարցին:

10. Հղումներ և օգտագործված աղբյուրները

1. Մենդի և գյուղատնտեսության կազմակերպություն, Լուսաբանումներ սննդի անվտանգության և գյուղատնտեսության վերաբերյալ, http://typo3.fao.org/fileadmin/user_upload/eufao-fsi4dm/docs/Armenia_highlights_April_June_2012.pdf
2. <http://smednc.am/> SME
3. Ս. Ավետիսյան, «Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը», Լիմուշ հրատարակչություն, Երևան 2010,
4. <http://www.mineconomy.am/eng>
5. <http://www.enterprise-europe-network.ec.europa.eu>
6. <http://www1.ifc.org/wps/...> «Հայաստանի գյուղատնտեսությունը», Ս. Ավետիսյան, 2008
7. Աղքատության կրճատման ռազմավարության փաստաթուղթ, Հայաստան
8. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն, 2007 «Հայաստանում գյուղի ջրամատակարարման և ջրագծերի համար ռազմավարությունների ֆինանսավորումը, բազային մոդելավորում»
9. Լուսաբանումներ սննդի անվտանգության և գյուղատնտեսության վերաբերյալ, հունվար-մարտ 2012: http://typo3.fao.org/fileadmin/user_upload/eufao-fsi4dm/docs/Armenia_highlights_Jan_March12_02.pdf
10. Մենդի անվտանգության ցուցիչները. Ժամանակային շարք, www.foodsec.org/ar
11. «ՀՀ կառավարության՝ 2010 թ. տարեկան ծրագրի ներդրման և առաջնահերթ գործողությունների իրականացման վերաբերյալ ՀՀ գյուղատնտեսության նախարարության տարեկան զեկույցը», http://www.minagro.am/am/index.php?page=agrар&sub_id=2
12. Ազգային զեկույց, «Օրգանական գյուղատնտեսությունը Հայաստանում՝ կանաչ տնտեսությանն անցման նպատակով»
13. UNEP / IFOAM, Grolink, Sweden, Eco-Globe, Armenia, 2010.
14. Օրգանական գյուղատնտեսություն: Մեկ քայլ դեպի կանաչ տնտեսություն Արևելյան Եվրոպայում, Կովկասում և Կենտրոնական Ասիայում: Հայաստանից, Մոլդովայից և Ուկրաինայից օրինակների ուսումնասիրություններ, ՄԱԿ-ի՝ շրջակա միջավայրի ծրագիր, 2011
15. «Շրջակա միջավայրի ինտեգրումը Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի գյուղատնտեսության և անտառտնտեսության զարգացման մեջ և հեռանկարներում», հատոր II, Հայաստան, Երկրի զեկույցը, Համաշխարհային բանկ, 2007
16. <http://www.giz.de/en/worldwide/374.html>
17. http://www.sdc.admin.ch/en/Home/Countries/Commonwealth_of_Independent_States_CIS/Southern_Caucasus_Georgia_Armenia_Azerbaijan11
18. <http://vestnikkavkaza.net/analysis/economy/27302.html>
19. Հայաստանի զինեզործների միություն, www.tert.am/en/news/2011/09/23/grape3/
20. Հայաստանում կոոպերատիվների զարգացման համար անհրաժեշտ օրենսդրական բարեփոխումները, Ն. Վարդանյան, OSF-Հայաստան, Երևան, 2011 <http://www.osi.am/FPRReports/Vardanyan.pdf>
21. IMF, Remittances in Armenia: Dynamic Patterns And Drivers
22. Statistics, trends, references: EUROPA, EUROSTAT, FAOSTAT, AMSTAT, IndexMundi, World DataBank, USDA, IMF

11. Հավելվածներ

Հավելված 1: Սեմինարի գեկույցը

Հավելված 2: Ոլորտի դոնորական ծրագրերը

Հավելված 3: Գյուղատնտեսության նախարարության նկատառումները հաշվետվության վերաբերյալ

Հավելված 1: Մեմինարի զեկույցը

«ԱԳ երկրներում գյուղատնտեսության և գյուղի զարգացման ոլորտների գնահատումը», Երևան, Հայաստան, 2012 թ.

1. Գյուղատնտեսության և գյուղի զարգացման քաղաքականությունը վերաբերող փաստաթղթեր

Վերջին երկու տասնամյակներում Կառավարության քաղաքականությունը անբավարար ուշադրության էր արժանացնում գյուղատնտեսության և գյուղի ոլորտը: Սակայն վերջերս բաշխումն սկսել է դրականորեն փոխվել: 2012 թ. պետական բյուջեն նախատեսում է բյուջեի ընդհանուր ծախսերի 1,7%-ի չափով ուղղակի սուբսիդավորում և բյուջեի ծախսերի 9,2%-ի չափով դրամաշնորհներ: Մրանից բացի, բյուջեից 1,07% հատկացվում է ռոռզմանը:

Նախորդ տասնամյակում գյուղատնտեսության ոլորտի քաղաքականությունն իրականացվել է մի շարք` Կառավարության կողմից օժանդակվող ծրագրերի միջոցով, որոնք նպատակաուղղված են եղել հիմնական և առաջնահերթ նպատակների²⁰, սակայն սահմանած նպատակների և կարիքների համեմատ միջամտության չափը սահմանափակ է եղել:

Հայաստանում գյուղատնտեսության առնչությամբ ռազմավարական քաղաքականությունը ներառում է հետևյալը.

- (i) Կայուն զարգացման ծրագիրը 2009-2021 թթ. համար (Աղքատության կրճատման երկրորդ ռազմավարություն),
- (ii) Գյուղատնտեսության զարգացման ռազմավարությունը (2010-2020 թթ.),
- (iii) Պարենային անվտանգության քաղաքականությունը (2005 թ.),
- (iv) Հարկերի կիրարկման ռազմավարությունը 2008-2011 թթ. համար,
- (v) Մանր և միջին ձեռնարկատիրության զարգացման հայեցակարգը` 2000 թ.

2008 թ. Կառավարության հաստատած` 2009-2021 թթ. համար Կայուն զարգացման հայաստանյան ծրագիրը նպատակ է դրել կրճատել աղքատությունը, վերացնել չքավորությունը, նպաստել տնտեսական աճին և թերզարգացած շրջանների արագացված զարգացմանը:

Գյուղատնտեսության զարգացման ռազմավարությունը պատրաստել է Գյուղատնտեսության նախարարությունը` Տարածքային զարգացման նախարարության և Արդարադատության նախարարության կողմից հաստատվելուց հետո: Ռազմավարության ադապտացման գործընթացը բավական երկար է եղել:

Մանր և միջին ձեռնարկատիրության զարգացման վերաբերյալ Հայեցակարգն ամրագրում է զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման, կյանքի բարելավման, ինչպես նաև հասարակական և քաղաքական կայունության համար մանր և միջին ձեռնարկատիրության դերը:

Մանր և միջին համայնքահեն ձեռնարկատիրությունների մրցունակության ձևավորման, զարգացման և մեծացման համար 2012 թ. Հայաստանի ՄՄՁ ԶԱԿ-ը իր քաղաքականության նոր ուղի սահմանեց` «Տեղական տնտեսական զարգացման» գործընթացը, որի նպատակն է` տեղերում մրցունակության մեծացման համար համայնքների տնտեսական ներուժի բացահայտումը և դրա հիման վրա

²⁰ Առաջնային սերմարտադրության և անասնապահության զարգացում, բույսերի և անասունների առողջություն, պարենային անվտանգություն, էռոզիա, ռոռզում, վարկերի հասանելիություն, ենթակառուցվածքներ, առավել անբարենպաստ գոտիների ֆերմերների սուբսիդավորում, որակավորման բարձրացում և այլն:

տնտեսական զարգացման նախաձեռնությունների ձեռնարկումը: Գործողությունները նպատակադրված են տեղական առանձնահատկությունների վրա հիմնված՝ ներքին և արտաքին շուկաներում մրցունակ բարձր արժեքի արտադրանքի ստեղծմանը: Գործընթացը տևական է:

ՄՄՁ զարգացման քաղաքականությունը և պետական աջակցման տարեկան ծրագրերը Էկոնոմիկայի նախարարության մանդատի մասն են կազմում՝ 2002 թ. հիմնադրված «Մանր և միջին ձեռնարկատիրության զարգացման հայաստանյան ազգային կենտրոն» հիմնադրամի միջնորդությամբ:

Կառավարության քաղաքականություններն առավել ուղղված են աղքատության և պարենային անվտանգության խնդիրներին, քան գյուղատնտեսության և գյուղի զարգացմանը: Շրջակա միջավայրի պաշտպանության վերաբերյալ օրենսդրությունը թերի է և չունի հարկադրման մեխանիզմներ: Վերահսկողությունը, կառավարումը և նախարարական գործառույթները անբավարար են և մասնատված:

Բոլոր շահագրգիռ կողմերը համաձայն են, որ գյուղի զարգացման և գյուղական շրջաններում եկամտի ոչ գյուղատնտեսական գործունեության վերաբերյալ օրենսդրության մեջ կան բացեր:

Հետևաբար կարողությունների զարգացմանը և գյուղական տնտեսական գործունեության բազմազանացմանն աջակցող նախաձեռնությունների²¹ մեծ մասն իրականացնում են միջազգային կազմակերպությունները:

2. Գյուղատնտեսության և գյուղի զարգացման աջակցության ծրագրեր

Գյուղատնտեսության նախարարության ներկայացուցչությունը մշակում և օժանդակում է գյուղատնտեսական սննդամթերքի ոլորտի զարգացման պետական քաղաքականությանը՝ մեծացնելով ոլորտի մրցունակությունը և արտադրողականությունը, նպաստելով գյուղի զարգացմանը, ինչպես նաև ապահովելով պարենային անվտանգությունը և անտառտնտեսության անվտանգությունը:

Ներկայումս Նախարարությունն իրականացնում է 2007-2015 թթ. Անասնաբուծության ծրագիրը, որն առաջնահերթություն է ճանաչվել՝ ոլորտում գլխաքանակի կտրուկ անկման պատճառով: Ծրագիրը նպատակ ունի մինչև 2015 թվականը ներմուծելու 1000 գլխաքանակ սիմենթալ, հոլթայն և շվեյցարական ցեղատեսակի հորթեր:

Կառավարության կողմից իրականացվող ծրագրերը նպատակ ունեն զարգացնելու առաջնային սերմարտադրությունը²², բույսերի հիվանդությունների կենտրոնացված վերահսկողությունը, անասնաբուծությունը, անասունների առողջության վերահսկողությունը, կրթությունը, տեղեկատվական և խորհրդատվական դաշտերը և անտառի պահպանությունը:

Քանի որ գյուղատնտեսական ծախսերը շատ մեծ են, Կառավարությունը փորձում է միջամտել գների կարգավորմամբ, որպեսզի ֆերմերները կարողանան ներդրումներ կատարել: Կառավարությունը որոշում է ընդունել մեղմացման մի քանի միջոցառումների վերաբերյալ, ինչպիսիք են՝ աջակցությունը

²¹ Օրգանական գյուղատնտեսություն, ագրո- և էկո- զբոսաշրջություն, ինտերնետի հասանելիություն, գյուղական առևտուր, զբոսաշրջություն, հյուրընկալություն և արհեստներ

²² Բարձրորակ սերմերի բաշխումը ֆերմերներին, որոնք հաջորդ տարի կվերադարձնեն կրկնակին, և մեխանիզացիայի բաշխումը

վարկերի տոկոսի, ձևակերպման և այլ հարցերում: Մակայն ֆինանսական միջոցների սղության պատճառով ծրագրերից ոչ մեկը չի իրականացվել: Գյուղատնտեսության և գյուղի զարգացմանը խանգարող խնդիրների հաղթահարման համար պետական միջոցների անբավարարությունը Հայաստանի մշտական խնդիրներից է:

3. Քաղաքականության վերաբերյալ փաստաթղթերի և օժանդակման ծրագրերի պատրաստմանը շահագրգիռ կողմերի մասնակցությունը

Ապահովվել է քաղաքացիական հասարակության և գիտնականների մասնակցությունը քաղաքականությունների և օժանդակման միջոցառումների, այդ թվում՝ Գյուղատնտեսության զարգացման ռազմավարության մշակմանը:

Ֆերմերների կազմակերպման ոլորտը մասնատված է և թույլ և ստանում է արտասահմանյան ծրագրերի աջակցությունը: Փոքր ֆերմերների մեծ մասը՝ 95%-ը, կազմակերպված և ներկայացված չեն:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, ֆերմերական ընկերությունները և մասնավոր հատվածը Հայաստանում ակտիվ մասնակցում են գյուղատնտեսությանը և գյուղին վերաբերող բարեփոխումներին: Նրանք նաև հաճախ մասնագիտական ծառայություններ են տրամադրում ֆերմերներին, որոնք խնդիրները հաղթահարելու համար բավարար գիտելիքներ չունեն:

Որոշ ակտիվ ՀԿ-ներ հանդես են գալիս որպես շահերը ներկայացնող, օժանդակում են գյուղատնտեսության և համայնքային զարգացմանը, նպաստում են կարողությունների ձևավորմանը, տրամադրում են խորհրդատվություն եկամտի աղբյուրների վերաբերյալ և նպաստում են Հայաստանում շուկայական ծրագրերի հասանելիությանը:

4. Քաղաքականության վերաբերյալ փաստաթղթերի պատրաստման և օժանդակման ծրագրերի համար օգտագործվող վիճակագրությունը

Գյուղատնտեսական վերջին հաշվառումը կատարվել է 1920 թվականին: Հայաստանն ունի տեղեկություններ հավաքագրող և վիճակագրություն հրապարակող մասնագիտացված ծառայություն: Շահագրգիռ բոլոր կողմերը որպես տվյալների աղբյուր օգտվում են այս հրապարակումներից:

Ներկայումս Հայաստանը գյուղատնտեսական նոր հաշվառմանն աջակցելու համար դնորներ է փնտրում:

Բացի վերոհիշյալից, Գյուղատնտեսության նախարարության առաջնահերթություններից է նաև անտառտնտեսության հաշվառումը:

5. Քաղաքականության վերաբերյալ փաստաթղթերի և օժանդակման ծրագրերի ցուցիչները և թիրախները

Գյուղատնտեսության առնչությամբ քաղաքականությունն ունի թիրախներ և ցուցիչներ, ինչպես նաև ստուգման պլան: Առաջընթացի վերլուծությունն արվում է երեք ամիսը մեկ անգամ:

Աջակցության բոլոր ծրագրերը պետք է ցուցիչներ ունենան, որոնք պետք է սահմանվեն նախարարների խորհրդի կողմից:

Ոչ բոլոր շահագրգիռ կողմերն են այն կարծիքի, թե վերահսկման գործընթացներն իրականացվում են նախանշվածի համաձայն և կասկածի են առնում Գյուղատնտեսության նախարարության՝ առաջընթացը վերլուծելու կարողությունը, քանի որ նախարարությունը չունի մոնիթորինգով և վերլուծությամբ զբաղվող հատուկ բաժին:

6. Այլ շահագրգիռ կողմերի և նախարարությունների կողմից իրականացվող ծրագրերի հետ համադաշնեցումը

Տարբեր նախարարությունների միջև համադաշնեցման և դոնորների հետ համակարգման առնչությամբ ընդհանուր կարծիքն այն է, որ քաղաքականություն իրականացնող և ծրագրերը վերահսկող գործակալությունների միջև շարունակում է պահպանվել տեղեկատվության անբավարար փոխանակման և անբավարար համակարգման իրավիճակը:

Կառավարական գործակալությունների կողմից տրամադրվող՝ որակավորման բարձրացման ծառայությունները համարվում են ոչ լիարժեք և ֆերմերների կարիքները չբավարարող: Հետևապես որակավորման բարձրացման ծառայությունների զգալի մասը շարունակում է տրամադրվել դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրերով:

7. Ներդրումների օժանդակման մեխանիզմները և վարկերի հասանելիությունը

Գյուղական համայնքներին աջակցություն տրամադրած մի քանի դոնորային ծրագրերից բացի, ներդրումների օժանդակման շատ քիչ նախաձեռնություններ են իրականացվել Կառավարության, մասնավորապես՝ Գյուղատնտեսության նախարարության կողմից:

Անհրաժեշտ է պատշաճ ուշադրություն դարձնել վարկի հասանելիությունը դժվարացնող խնդիրներին, այդ թվում՝ կոմերցիոն վարկատուների կողմից ֆերմերներին առաջարկվող բարձր տոկոսադրույքներին, մարման կարճ ժամկետներին (6 ամիս), երաշխիքների բացակայությանը և ընդհանուր առմամբ վարկերի փոքրությանը:

Գյուղի բնակչության համար վարկերի հասանելիության խնդիրն առհասարակ համարվում է հիմնական խորչընդոսներից, որը բարդանում է՝ հաշվի առնելով գյուղական վայրերում կանխիկի սղությունը:

8. Գյուղատնտեսության և գյուղի զարգացման օժանդակման ինստիտուցիոնալ համակարգը

Գյուղատնտեսության, անտառտնտեսության և գյուղի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման պատասխանատուն Գյուղատնտեսության նախարարությունն է:

Մակայն այս մանդատի մեջ ակնհայտորեն չեն մտնում մանր և միջին ձեռնարկատիրությանն օժանդակող գործողությունները և լոկալ քաղաքականությունները, որոնց պատասխանատուն պետք է որ Էկոնոմիկայի նախարարությունը լինի: Մանր և միջին ձեռնարկատիրության զարգացման՝ հայաստանյան ազգային կենտրոնը գյուղի զարգացմանն օժանդակող կառավարական հիմնարկություն է:

9. Եզրակացություններ և առաջարկություններ.

- Գյուղի զարգացումը ճանաչված է որպես երկրի առաջնահերթություններից մեկը, և հաշվի առնելով գյուղատնտեսության և գյուղի կարևորությունն ու մասնաբաժինը ազգաբնակչության ներգրավվածության, զբաղվածության և ՀՆԱ-ի տեսանկյունից, դեռևս կշարունակի առաջնահերթություն մնալ:
- Ներկայումս տարբեր մոտեցումներով հիմնական համակարգային քաղաքականությունները վերանայման փուլում են, և մի շարք օրենսդրական շրջանակներ մշակման ընթացքում են: Թեև ընդհանուր առմամբ կառույցները տեղյակ են, և պատրաստվում են օժանդակման մեխանիզմներ, տարիներ շարունակ պատշաճ ֆինանսավորման բացակայությունը հանգեցրել է գյուղատնտեսության և գյուղի զարգացման անբավարար օժանդակման:

Հետևաբար առաջարկվում է, որպեսզի ԳԳԶԵՀԾ աջակցությունը նպատակաուղղվի գյուղական վայրերի բնակչության համար Առանցք 1 և Առանցք 2 տիպի գործողությունների օժանդակման միջոցառումների ֆինանսավորմանը:

Ավելացնենք, որ քիչ հավանական է Կառավարության կողմից ԳԳԶԵՀԾ աջակցվող գործողությունների համար համարժեք ֆինանսավորման տրամադրումը:

- Առանձնահատուկ կարևորություն կունենա ԳԳԶԵՀԾ ծրագրի շրջանակներում տեխնիկական օժանդակության մասը, քանի որ այն կնպաստի ԳԳԶԵՀԾ տիպի մոտեցումների իրականացման համար երկրի օրենսդրական և ինստիտուցիոնալ շրջանակների ձևավորմանը:

Գյուղատնտեսության նախարարությունն իր կարողությունների հզորացման կարիք ունի, մասնավորապես՝ իրենց ծրագրերի գնահատման համար վերլուծական կարողությունների առումով:

Եվս մեկ առաջնահերթություն է վիճակագրության խնդրի կարգավորումը:

- Առաջարկվում է, որպեսզի ծրագրման այս փուլում, որպես ինստիտուցիոնալ կարողությունների ձևավորման եղանակ, ԳԳԶԵՀԾ մոտեցումներն ուղղորդվեն իրականացնող մարմինների միջոցով՝ տեղական և կենտրոնական իշխանությունների հետ սերտ համագործակցությամբ: Սրանով հնարավորություն կստեղծվի, որպեսզի ծրագրման հաջորդ փուլի համար կառույցները կարողանան իրականացման գործընթացում առավել ակտիվ դեր ստանձնել:

Մեմինարի մասնակիցների ցանկը

	Անունը	Հիմնարկությունը
1.	պ-րն Ռոբերտ Մակարյան	ՀՀ Գյուղատնտեսության փոխնախարար
2.	պ-րն Անդրանիկ Պետրոսյան	ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն, Միջազգային հարաբերությունների վարչության պետ
3.	պ-րն Գևորգ Ղազարյան	ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն, Ագրովերամշակման զարգացման վարչության պետ
4.	պ-րն Աշոտ Հովհաննիսյան	ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն, Անասնաբուծության և անասնաբուծության վարչության պետ
5.	պ-րն Գևորգ Հարությունյան	ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն, Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչության պետ
6.	պ-րն Արթուր Բաղդասարյան	ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն, Հողօգտագործման և մելիորացիայի վարչության պետ
7.	պ-րն Արթուր Ավագյան	ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն, Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնի տնօրեն
8.	պ-րն Գագիկ Խաչատրյան	ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն, «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակի» տնօրեն
9.	պ-րն Արա Մեժլումյան	«Հայանտառ» ՊՈԱԿ
10.	պ-րն Զաքար Գաբրիելյան	ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն, Գիտական և

		գյուղատնտեսական կրթության կենտրոնների գլխամասային բաժանմունքի ղեկավար
11.	տ. Տաթևիկ Կարապետյան	ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն, Միջազգային հարաբերությունների վարչության ԵՄ բաժանմունքի ղեկավար
12.	տ. Հերիքնազ Լեմբերյան	ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն, Գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչության գյուղատնտեսության ծրագրավորման բաժանմունքի ղեկավար
13.	պ-րն Արայիկ Արամյան	ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն, Գյուղատնտեսության զարգացման ծրագրերի՝ ագրովերամշակման աջակցության բաժանմունքի ղեկավար
14.	տ. Նաիրա Մուշեղյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, Առևտրի և շուկաների վարչություն, բաժանմունքի ղեկավար
15.	տ. Լիլի Մաքսուդյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, Որակի ենթակառուցվածքների վարչություն
16.	պ-րն Գառնիկ Մանուկյան	ՄՄՁ գործակալություն, Տնտեսական զարգացման ծրագրերի աշխատակից, ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
17.	տ. Մազալի Հերրանց	ՄԳԿ համագործակցող փորձագետ
18.	տ. Նունե Դարբինյան	ՄԳԿ ազգային խորհրդատու
19.	պ-րն Դրագան Անգելովսկի	ՄԳԿ միջազգային խորհրդատու
20.	պ-րն Մարկ լե Սեյլեուր	ՄԳԿ միջազգային խորհրդատու
21.	տ. Գայանե Նասոյան	ՄԳԿ ներկայացուցիչ
22.	տ. Մանե Թափալցյան	ՄԳԿ/ԵՀ ծրագրերի համակարգող
23.	տ. Իրինա Կաուշ	Միջազգային համագործակցության գերմանական կազմակերպություն (GIZ), հայաստանյան տնօրեն
24.	պ-րն Վիլեմ վան դեր Գեեստ	ԵՀ խորհրդատվական խումբ
25.	պ-րն Վիկտորս Գրապմանիս	ԵՀ խորհրդատվական խումբ
26.	տ. Արուսյակ Ալավերդյան	Համաշխարհային Բանկ
27.	տ. Զառա Ալլահվերդյան	Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալություն (SDC), Հայաստանյան ներկայացուցչություն
28.	պ-րն Պարույր Ասատրյան	ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի՝ Համայնքային զարգացման ծրագրի տնտեսագետ
29.	տ. Աննա Քարդաշյան	Հայաստանի պետական գյուղատնտեսական համալսարան
30.	պ-րն Միսակ Ղարաբոյունյան	Միացյալ Նահանգների՝ միջազգային զարգացման գործակալության/ Չեռնարկատիրության զարգացման և շուկայական մրցունակության ծրագիր (USAID EDMC), արժեքային շղթայի թիմ
31.	պ-րն Զոհրավկո Շամի	Միացյալ Նահանգների՝ միջազգային զարգացման գործակալության/ Չեռնարկատիրության զարգացման և շուկայական մրցունակության ծրագիր (USAID EDMC), արժեքային շղթայի թիմ, ղեկավար

Հավելված 2: Ոլորտի դոնորական ծրագրերը

Գյուղի զարգացման, տարածքային պլանավորման, գյուղատնտեսության և պարենային անվտանգության ԵՄ ծրագրերը

- 2007 թ. Պարենային անվտանգության ծրագրի բուջեղատային օժանդակության բախադրիչը Ոլորտը. Պարենային աջակցության/պարենային անվտանգության ծրագրերը
ԵՄ ներդրումը. € 3.000.000,00 (ամբողջի 100%-ը)
Իրականացնող կազմակերպությունը. Հայաստանի Հանրապետություն
Տնողությունը. 02/2009-ից մինչև 04/2013
Նկարագրությունը. Գործողությունների վայրը Հայաստանի Հանրապետությունն է: Հիմնական նպատակը՝ անասունների առողջության և ֆիտոսանիտարական քաղաքականության ոլորտում բաշխման և տեխնիկական արդյունավետության բարելավումը:
• Աղբատության հաղթահարումը Վայոց Ձորում՝ կաթի վերամշակման ոլորտում դինամիկ և կայուն զարգացման և կաթ արտադրողների և վերամշակողների համար գյուղատնտեսական մատակարարման և ծառայությունների հասանելիությունը խթանելու միջոցով:
Ոլորտը. Գյուղատնտեսության վերաբերյալ կրթություն/վերապատրաստումներ
ԵՄ ներդրումը. € 150.000,00 (ամբողջի 88,24%-ը)
Իրականացնող կազմակերպությունը. Տարածաշրջանային նախաձեռնությունների կենտրոն ՀԿ
Տնողությունը. 12/2011-ից մինչև 06/2013
Նկարագրությունը. Առաջարկվող գործունեության հիմնական նպատակը կաթի վերամշակման ոլորտում գյուղատնտեսության դինամիկ և կենսունակ զարգացման խթանումով և կաթ արտադրողների և վերամշակողների համար գյուղատնտեսական մատակարարման, ծառայությունների և ժամանակակից տեխնոլոգիաների հասանելիությանը նպաստելով՝ գյուղի չբավորության հաղթահարման համար Վայոց Ձորում տեղական ինքնակառավարման մարմինների և տեղական այլ շահագրգիռ կողմերի կարողությունների ձևավորումն է:
Իրականացման վայրը. Հայաստանի Հանրապետություն, Վայոց Ձորի մարզ
• Գյուղերում եկամտի աղբյուրների ստեղծման ծրագիր
Ոլորտը. Գյուղատնտեսության բնագավառի ընդլայնում
ԵՄ ներդրումը. € 150.000,00 (ամբողջի 75%-ը)
Իրականացնող կազմակերպությունը. Stitching Save the Children Nederland
Տնողությունը. 12/2011-ից մինչև 10/2013
Նկարագրությունը. Գործունեության հիմնական նպատակն է՝ այգեգործական նոր տեխնոլոգիայի ներդրմամբ նպաստել Արարատի մարզի առավել զրկված համայնքներում տնային տնտեսությունների (SS) եկամտի մեծացմանը, ինչը կիրառործվի չորս առանձնահատուկ նպատակների միջոցով:
• Հայաստանի գյուղական համայնքների գյուղատնտեսական ներուժի հզորացումը՝ ֆերմերական ընկերությունների և գյուղատնտեսական կոոպերատիվների համակարգման հաջողված մոդելների ներմուծման համար կարողությունների ձևավորմամբ:
Ոլորտը. Գյուղատնտեսության բնագավառի ընդլայնում
ԵՄ ներդրումը. € 150.000,00 (ամբողջի 85,71%-ը)
Իրականացնող կազմակերպությունը. Կայուն զարգացման իմացություն (ՀԿ)
Տնողությունը. 12/2011-ից մինչև 12/2012
Նկարագրությունը. Առաջարկվող գործունեության հիմնական նպատակն է՝ նպաստել Հայաստանում ֆերմերական ընկերությունների և գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծմանը և հետագա զարգացմանը՝ խթանելով պետական-մասնավոր կառույցների գործընկերությունը թիրախ-համայնքների և ոլորտների բացահայտման, աշխատանքային եղանակների կառուցման և համայնքի շահագրգիռ կողմերի մասնագիտական կարողությունների հզորացման առնչությամբ:
Իրականացման վայրը. Հայաստանի Հանրապետություն, Լոռու, Շիրակի և Տավուշի մարզեր

- Ուժեղացնել կենդանական ծագման մթերքների և կերի անվտանգության վերահսկողությունը Հայաստանում:

Ոլորտը. Անասունների/անասնաբուժական ծառայություններ

ԵՄ ներդրումը. € 1.000.000,00 (ամբողջի 100%-ը)

Իրականացնող կազմակերպությունը. Koninkrijk Der Nederlanden

Տևողությունը. 04/2012-ից մինչև 01/2014

Նկարագրությունը. Հզորացնել Հայաստանի համապատասխան հիմնարկությունները (Գյուղատնտեսության նախարարությունը, Պարենային անվտանգության և անասնաբուժության ծառայությունների պետական տեսչությունը և Կենտրոնական անասնաբուժական լաբորատորիան)՝ կենդանական ծագման մթերքների և կերի ապահովության վերահսկողության կատարելագործմամբ՝ հասցնելով ԵՄ-ՄՅՄ և միջազգային այլ չափանիշների մակարդակի (օրենսդրական դաշտի, կիրարկման, կառուցվածքների և ընդհանուր տեղեկացվածության առումով)

- Գյուղատնտեսության վերականգնման խնդրում աջակցություն Ջուջևանի տեղական ինքնակառավարման մարմիններին՝ գյուղատնտեսական նոր մեթոդոլոգիայի կիրառման և շրջակա միջավայրի կայունության ձեռքբերման միջոցով:

- վերահսկողությունը Հայաստանում:

Ոլորտը. Գյուղատնտեսության զարգացում

ԵՄ ներդրումը. € 99.750,00 (ամբողջի 89,86%-ը)

Իրականացնող կազմակերպությունը. Ջուջևանի գյուղապետարանի աշխատակազմը, Հայաստանի

Հանրապետություն, Տավուշի մարզ

Տևողությունը. 12/2011-ից մինչև 12/2012

Նկարագրությունը. Գործունեության հիմնական նպատակն է՝ աջակցել Ջուջևանում և հարևան համայնքներում աղքատության կրճատմանը՝ համայնքների անդամների համար համեմատաբար ցածր արժողությամբ մրցունակ գյուղատնտեսական մթերքներ արտադրելու և այն տեղի և շրջանի շուկաներում վաճառելու հնարավորություններ ստեղծելով:

Իրականացման վայրը. Հայաստանի Հանրապետություն, Տավուշի մարզ, Ջուջևան գյուղ

ԵՄ երկրներից երկկողմ աջակցություն

Գերմանական տեխնիկական համագործակցության ծրագիրը ներառում է աջակցություն ՄՄԶ-ին, մեղվապահության և օրգանական գյուղատնտեսության ոլորտներին, շրջակա միջավայրին և կենսաբազմազանությանը վերաբերող ծրագրերին, ինչպես նաև վայրի բույսերի և օրգանական գյուղատնտեսության վրա հիմնված արժեքային շղթայի զարգացմանը: Այս ասպեկտները հիմնականում ներառված են տարածաշրջանային զարգացման ծրագրերում, կարողությունների ձևավորման և պետական-մասնավոր կառույցների գործընկերության հայեցակարգերում:

Նիդերլանդները, Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամը (IFAD) և Համաշխարհային Բանկը ներգրավված են զանազան գյուղատնտեսական և գյուղատնտեսական-բիզնես ծրագրերում: Հայաստանյան ծրագրերին շվեյցարական աջակցությունը տրամադրվում է Տնտեսական զարգացման և զբաղվածության, Աղետների ռիսկի նվազեցման, Վերականգնման և վերակառուցման ոլորտներում: Գյուղական շուկաների և արժեքային շղթայի զարգացումը կիրառում է այսպես կոչված՝ չունևորների համար շուկաների ստեղծման մոտեցումը:

Գյուղատնտեսական մեքենաները ֆերմերներին են տրամադրվում Հայաստան-Ճապոնիա (2KR) և Հայաստան-Չինաստան համագործակցությամբ: ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը և Զարգացման ծրագիրը ծրագիր են իրականացրել օրգանական կարգավորման և շահագրգիռ կողմերի վերլուծության առնչությամբ, իսկ Հոլանդիայի Արտաքին գործոց

նախարարությունը Ավալոն հիմնադրամի միջոցով աջակցություն է ցուցաբերել օրգանական և գյուղատնտեսական՝ շրջակա միջավայրին առնչվող նախաձեռնություններին: Որոշ ծրագրեր օժանդակություն են ստացել հասարակական կազմակերպությունների մակարդակով և աջակցվել են ԵՄ-ի և տարբեր կառավարությունների կողմից, դրանց թվում՝ Գերմանիան, Նիդերլանդները, Նորվեգիան, Շվեյցարիան և այլ երկրներ:

Գերմանական տեխնիկական աջակցությունը (GIZ) Հայաստանում

Համագործակցության առաջնահերթ ոլորտ է կայուն տնտեսական զարգացումը՝ կայուն զարգացման համար համապատասխան համակարգի ստեղծման առանձնահատուկ շեշտադրումով: Տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության (BMZ) անունից GIZ-ի աշխատանքը հիմնականում կենտրոնանում է ինքնակառավարման մարմինների և տնտեսական զարգացման և իրավական բարեփոխումների ու խորհրդատվության վրա:

Որպես BMZ կովկասյան նախաձեռնության մաս իրականացվող ծրագրերը Հայաստանում GIZ-ի հայաստանյան գործունեության կարևոր բաղադրիչ են հանդիսանում: Կովկասյան նախաձեռնության համար համագործակցության առաջնահերթ ոլորտներն են.

- Կայուն տնտեսական զարգացումը
- Ժողովրդավարությունը, ինքնակառավարման մարմինների զարգացումը և օրենքի գերակայությունը
- Շրջակա միջավայրը և բնական պաշարները

Այս առաջնահերթությունների շրջանակներում ներկայումս Հայաստանում իրականացվում են բազմազան տարածաշրջանային ծրագրեր, գործունեության հետևյալ ոլորտներում՝ տնտեսական զարգացում, աջակցություն դատախազական բարեփոխումներին, ինքնակառավարման մարմինների զարգացման խթանում և Հարավային Կովկասում կենսաբազմազանության կայուն կառավարում. «Հարավային Կովկասում կենսաբազմազանության կայուն կառավարում» և «Տնտեսական կայուն զարգացում՝ մասնավոր հատվածի զարգացման բաղադրիչը»:

KfW կազմակերպության գործունեությունը Հայաստանում

Հայաստանի հետ Գերմանիայի ֆինանսական համագործակցությունն սկսվել է 1995 թվականից և իրականացվում է KfW Entwicklungsbank-ի կողմից՝ Տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության (BMZ) անունից: Այն գործում է ՄՄԶ-երի ֆինանսական հատվածի զարգացման ոլորտում, վերականգնելի էներգիայի և հոսանքի տարածաշրջանային փոխանցման, Արմավիրում, Գյումրիում, Վանաձորում և շրջակա գյուղերում ջրամատակարարման համակարգի վերականգնման մեջ ներդրումներ կատարելով: Ապագայի պլանները վերաբերում են աղբի տնօրինման խնդրին:

Գերմանիայի պետական ստանդարտների լաբորատորիան (PTB) տարածաշրջանային իր ծրագրերի շրջանակներում Հայաստանին աջակցություն է ցուցաբերում որակյալ ենթակառուցվածքների զարգացման և սննդամթերքի ստուգման և էներգետիկ հատվածի լաբորատորիաների կարողությունների ձևավորման համաձայնեցվածության ուղղությամբ (2010-2016 թթ.):

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (EBRD)

Տնտեսական միջավայրի, անցումային առկա մարտահրավերների և Հայաստանում բարեփոխումներին աջակցություն ցուցաբերելու իր կարողությունների հիման վրա՝ հաջորդ ռազմավարական փուլի համար Բանկը հստակեցրել է չորս հիմնական ռազմավարական առաջնահերթություն, որոնք են.

- Ֆինանսական հատվածի զարգացումը և ֆինանսական միջոցների հասանելիության բարելավումը,
- Շրջանների և քաղաքային տրասպորտի ենթակառուցվածքի բարելավումը,
- Գյուղատնտեսական բիզնեսի և բարձր ավելացված արժեքով՝ արտահանմանն ուղղորդված արդյունաբերական ընկերությունների զարգացումը,
- Վերականգնելի էներգիայի համար կանոնակարգող և ինստիտուցիոնալ համակարգի բարելավումը և ավելացված արժեքի մեծացումը հանքարդյունահանման հատվածում:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը Հայաստանում առավելագույն առանձին ներդրողն է. Նրա ներդրումները տնտեսության բոլոր հիմնական ոլորտներում կազմում են ավելի քան 200 միլիոն եվրո: Հայաստանում Բանկի ռազմավարությունը հետևյալն է՝ «ուշադրությունը կենտրոնացնել առաջին հերթին տեղական մասնավոր հատվածի, այսինքն փոքր և միջին ձեռնարկությունների և բանկային համակարգի վրա»:

Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն (FAO)²³

ՊԳԿ-ն Հայաստանի կառավարությանն աջակցում է Համաշխարհային Բանկի ֆինանսավորմամբ գյուղական ձեռնարկատիրության և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ծրագրի իրականացման գործում:

EMPRES-ի՝ կենդանիների առողջության բաղադրիչը. Կենդանիների և բույսերի անդրսահմանային հիվանդությունների՝ Արտակարգ իրավիճակների կանխման համակարգը (EMPRES) հիմնական ուշադրությունը կենտրոնացնում է Հայաստանում ընտանի կենդանիների հիվանդությունների վրա: Ներկայումս Հայաստանում իրականացվում է նաև բրուցելյոզի վերահսկման ծրագիր: Թեև Հայաստանում խիստ ախտածին թռչնագրիպի համաճարակ (ԽԱԹԳ - HPAI) երբևէ չի արձանագրվել, երկրում իրականացվում են հինգ ԽԹԱԳ ծրագրեր: EMPRES-ի՝ բույսերի առողջության բաղադրիչը. Հայաստանը հիմնականում տուժում է իտալական մորեխից, այդ պատճառով էլ ընդգրկվել է վերջերս հաստատված տարածաշրջանային ծրագրում: Այս ծրագիրը ներառում է ինը երկրներ (Աֆղանստան, Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Ղազախստան, Ղրղզստան, Տաջիկստան, Թուրքմենստան և Ուզբեկստան) և նպատակ ունի Կովկասում և Կենտրոնական Ասիայում պետական և տարածաշրջանային մակարդակով բարելավելու մորեխի վերահսկումը: Ծրագիրը պատրաստվել է EMPRES-ի ձեռք բերած փորձի հիման վրա: Ծրագրի երկարաժամկետ նպատակը թելադրվել է մորեխների համաճարակի դեպքերի և ուժգնության նվազեցման և ահագնացումից խուսափելու նպատակով կանխարգելիչ վերահսկումը խթանելու՝ EMPRES-ի մոտեցմամբ:

Տեխնիկական համագործակցության ազգային ծրագրեր

TCP/ARM/3302 – ծիրանի գենետիկ ռեսուրսների կոնսերվացումը և օգտագործումը

Տևողությունը. 2011 թ. մարտ – 2013 թ. փետրվար

Բյուջեն. ԱՄՆ \$ 355.000

Ծրագիրը կաջակցի Գյուղատնտեսության նախարարությանը՝ ծիրանի արտադրության ոլորտի բարելավման և արդիականացման համար բազա ստեղծելու՝ կայուն զարգացմանը նպաստող գործունեությունը: Սրա արդյունքում զգալիորեն կմեծանա պարենային անվտանգությունը, կստեղծվեն զբաղվածության և եկամտի հնարավորություններ: Ծրագրի հիմնական արդյունքը կլինի՝ հզորացնել ծիրանի հիմնավոր արտադրության հիմքերը՝ ծիրանի գենետիկ ռեսուրսների հավաքման և պահպանման, համապատասխան տեսակների և պատվաստակալների, ինչպես նաև բույսերի և տնկանյութերի արտադրության համար համապատասխան տեխնոլոգիաների ներմուծման միջոցով:

²³ Վերջին անգամ թարմացվել է 2011 թ. հունիսի 29-ին <http://www.fao.org/countries/55528/en/arm/>

TCP/ARM/3203 – Անտառապատումը և անտառների վերականգնումը

Տևողությունը. 2010-2012 թթ.

Բյուջեն. ԱՄՆ \$ 432.000

Ծրագրի նպատակը սերմերի հավաքման, տնկարանների, բուծարանների և բնական ռեզերվների պահպանման, անտառների վերականգնման և միջոցով աջակցություն ցուցաբերել Հայաստանի անտառների հարստացմանը, ինչը կնպաստի գյուղական շրջանների տնտեսական բարելավմանը և անտառապատկան հողերի բնական պաշարների և մասնավորապես անտառի էկոհամակարգի կայուն զարգացման առումով, արդյունավետ օգտագործմանը:

Ազգային ՊԳԿ-Կառավարության համագործակցային ծրագրերը (ԿՀՕ) Հայաստանում

GCP/ARM/003/GRE – Աջակցություն Հայաստանում պետսիցիդների որակի վերահսկման և մնացորդների մոնիթորինգի համար

Տևողությունը. 2009 թ. փետրվար – 2013 թ. փետրվար

Բյուջեն. ԱՄՆ \$ 2.000.000

Ծրագրի՝ զարգացման նպատակը գյուղատնտեսական հատվածի կենսունակ զարգացմանը նպաստելն է՝ պակաս վտանգավոր գյուղատնտեսական ներդրումներով, ինչի արդյունքը կլինի գյուղատնտեսական գործելակերպերի բարելավումը, պարենային առավել անվտանգությունը և ավելի մաքուր շրջակա միջավայրը, ինչպես նաև պետսիցիդների օգտագործման հետ զուգորդվող ռիսկերի նվազումը: Ծրագրի միջնաժամկետ նպատակն է՝ երկրում հնարավորություն ստեղծել շուկայում պետսիցիդների որակի միջազգային չափանիշներին համապատասխան վերահսկում կատարելու և գյուղատնտեսական արտադրանքի որակի բարելավման նպատակով պետսիցիդների մնացորդների վերահսկողության մոնիթորինգային ծրագրեր իրականացնելու համար:

GCP/ARM/004/GRE – Աջակցություն Հայաստանում սպանդանոցների զարգացմանը

Տևողությունը. 2009 թ. փետրվար – 2013 թ. փետրվար

Բյուջեն. ԱՄՆ \$ 1.622.000

Ծրագրի՝ զարգացման նպատակը Հայաստանի ընտրված շրջաններում անվտանգ հիգիենիկ մսամթերքների արտադրությունը և ցուցադրումն է: Ծրագրի միջնաժամկետ նպատակն է՝ ընտանի կենդանիների վերամշակման ձեռնարկություններին (թե՛ մասնավոր, թե՛ պետական) հնարավորություն ընձեռել՝ նշանակալիորեն բարելավելու մսի և մսամթերքի անվտանգությունը և որակը²⁴:

Տարածաշրջանային ծրագրեր

- ԵՀ/ՊԳԿ ծրագիր՝ տեղեկատվական համակարգի ներդրման միջոցով պարենային անվտանգության վերաբերյալ որոշումների կայացման գործընթացի բարելավում: Ծրագիրը հիմնված է ԵՀԳ-ի (ENP) վրա (GCP/GLO/275/EC): Տևողությունը և բյուջեն. 2010-2012 թթ. ԱՄՆ \$ 4.518.075:
- Մերմերի արտադրության, ռոտման տեխնոլոգիաների և կենդանիների գրանցման համակարգի (GCP/RER/026/AUS) ներդրման միջոցով փոքր ֆերմաների կարողությունների ձևավորում: Տևողությունը և բյուջեն. 2009-2012 թթ., ԱՄՆ \$ 1.404.493
- Կովկասյան երկրներում (Վրաստանում, Հայաստանում և Ադրբեջանում) դաբաղի կանխարգելում և արտակարգ իրավիճակներում արձագանքման կարողությունների ստեղծում (MTF/INT/003/EEC): Տևողությունը և բյուջեն. 2010-2012 թթ., ԱՄՆ \$ 1.997.640

²⁴ <http://coin.fao.org/cms/world/armenia/en/Projects/NationalProjects.html>

ԱՄՆ ՄԶԳ-ի (USAID) ծրագրերը նպատակաուղղված են ա) բարեփոխումների հաջորդ փուլն ավարտին հասցնելուն, բ) կառավարական և կանոնակարգող մարմինների ինստիտուցիոնալ զարգացմանը, գ) հանրային ապահով, հուսալի, մատչելի և հասանելի ծառայությունների ապահովմանը: ՀՄՀ (MCA) աջակցության էությունը գյուղական ենթակառուցվածքների բարելավումն էր: Ծրագիրն ավարտվեց 2010-ին, և արդյունքում կառուցվեցին շատ շրջանների ենթակառուցվածքներ, այդ թվում՝ ճանապարհներ և ռոտզման համակարգեր: Բացի այս, «Ջրից՝ շուկա» ծրագրային բաղադրիչի շրջանակներում հազարավոր ֆերմերների տրամադրվեց տեխնիկական օգնություն, և կարողությունների ձևավորման աջակցություն:

- Ծրագրերի ընտրության և իրականացման գործընթացում ամենից կարևոր գործոններից է շրջակա միջավայրի պաշտպանությունը: **Աջակցություն էներգետիկայի հատվածին՝ էներգիայի անվտանգությանը և տարածաշրջանային ինտեգրման օժանդակելու համար (ESRI) (\$ 5,9 միլիոն)** ծրագիրը մասնագիտական ծառայություն է մատուցում Հայաստանի կառավարությանը:
- **«Վերակենդանացրու գետը».** Որպես Գլոբալ զարգացման դաշինքի ծրագրի մաս՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը, Դիլիջանի տեղական ինքնակառավարման մարմինների, Կոկա Կոլա ընկերության և Հայաստանի կառավարության մասնակցությամբ (ՎՋԵԲ-ի ֆինանսավորումը և Դիլիջանի ինքնակառավարման մարմինների մասնակցությունը), Ադատն գետի վրա կոտեղադրեն ջրի վերամշակման համակարգ:
- **Պլաստիկ աղբի հավաքում և վերամշակում** պետական-մասնավոր գործընկերությամբ ծրագիրը նպատակ ունի Հայաստանի ջրի աղբյուրներն աղտոտող պլաստիկ տարաները հավաքելով և մեխանիկական վերամշակման ենթարկելով՝ բարելավել խմելու ջրի աղբյուրների որակը (ԱՄՆ ՄԶԳ և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, մասնավոր հատվածի միավոր «Էկո նախագծման» և բազմազան փոքր և միկրո ձեռնարկատիրությունների գործընկերությամբ):
- **Մաքուր էներգիայի և ջրի ծրագիր.** Խթանել ինտեգրված էներգիայի և ջրի պլանավորումը, Հայաստանի կառավարությանը խորհրդատվություն տրամադրել կայուն հիդրոէներգետիկայի զարգացման և ջրի տնօրինման վերաբերյալ և տեղական համայնքներին և ձեռնարկատիրություններին օգնել ջրի սելեկցիայի հարցում:
- **Ձեռնարկատիրության զարգացում և շուկայական մրցունակություն (ՁՋՇՄ)** (իրականացնող՝ Պրագմա ընկերություն) ծրագիրը Հայաստանում եկամուտները մեծացնելու և աշխատատեղեր ստեղծելու նպատակ ունի՝ խթանելով ընտրված արժեքային շղթաների (ԱՇ) աճը՝ արտահանման ներուժի միջոցով: Սրա ընդհանուր նպատակն է՝ Հայաստանին օգնել ավելի բազմազանացված և մրցունակ մասնավոր հատվածի ձևավորման հարցում: Այս նպատակներն իրագործելու համար ծրագիրը (1) նորամուծությունների միջոցով կլիթանի ձեռնարկատիրությունների արտադրողականությունը և արժեքային շղթաները, (2) կլիթանի աշխատուժի հմտությունները և ձեռնարկատիրության զարգացումը, (3) կբարելավի բիզնեսի միջավայրը՝ նվազեցնելով կանոնակարգումների բեռը և զբաղվելով մրցունակության խոչընդոտներով և (4) կնպաստի արդյունավետ ֆինանսական միջնորդավորմանը: Ընտրված ոլորտներից մեկը օրգանական սննդամթերքի արտադրությունը և օրգանական արժեքային շղթաներն են: Հուլիս 2011 – հուլիս 2016, \$ 17,5 միլիոն:

Համաշխարհային Բանկ

- Գյուղատնտեսական ռեսուրսների համայնքային տնօրինման և մրցունակության ծրագիր: \$ 16մ
- Ոռոգման վերականգնման արտակարգ իրավիճակային ծրագիր, \$ 30մ
- Սոցիալական ներդրման հիմնադրամ III, երկրորդ հավելյալ ֆինանսավորում, \$ 7մ
- «Կյանքի ուղի» ճանապարհների բարելավման ծրագիր, \$ 25մ

Համաշխարհային Բանկը 2011 թ. նախաձեռնեց Հայաստանի համար կենսունակ գյուղատնտեսության հայեցակարգի պատրաստումը և այն կցեց ՀԲ ավելի մեծ՝ Գյուղատնտեսության և գյուղի զարգացման

վերաբերյալ քաղաքականության զեկույցին: Ստորև ներկայացված ակնարկը ներկայացնում է ՀԲ հայեցակարգում շեշտադրված ուղղությունները:

Հայաստանում կենսունակ գյուղատնտեսության վերաբերյալ ՀԲ հետազոտությունը

ՀԲ-ի հետազոտության արդյունքում առաջարկվել է 10 կետից բաղկացած՝ քաղաքականության օրակարգ այն առաջնահերթ խնդիրների և գործողությունների վերաբերյալ, որոնք կարող են նպաստել Հայաստանում առավել կենսունակ գյուղատնտեսական համակարգի ձևավորման համար պայմաններ ստեղծելուն: Քաղաքականության այս օրակարգը ուժ է ստացել ԵՄ քաղաքականության նմանատիպ նախաձեռնությունների / փորձի հիման վրա.

1. Գյուղատնտեսության նոր «հարմարունակ կարողությունների» ձևավորման համար մշակել և իրականացնել քաղաքականության նոր շրջանակներ:
2. Շարունակել Հայաստանի համայնքային արոտավայրերի / անասնապահության կազմակերպման զարգացումը:
3. Մշակել, խթանել և լայնորեն տարածել Հայաստանում Գյուղատնտեսության արդյունավետ գործելակերպի կանոնները:
4. Մշակել և իրականացնել ագրոբազմազանության պահպանման Ազգային ռազմավարությունը և գործողությունների պլանը:
5. Ֆերմերական դպրոցների հետագա փորձարկում և հիմնադրում:
6. Գյուղական փոքրամասշտաբ բիզնեսների համար ստեղծել առավել բարենպաստ միջավայր:
7. Պատրաստել Հայաստանի համար Օրգանական գյուղատնտեսության գործողությունների ազգային պլան:
8. Խթանել շուկաների հետ հստակ կապով արտադրության այլընտրանքային համակարգերը:
9. Ներդրում կատարել գյուղատնտեսական կենսունակության վերաբերյալ հետազոտությունների և ընդլայնման ծրագրերում:
10. Շարունակել Համայնքահեն տեղական զարգացման պլանների փորձարկումը

Միջազգային ֆինանսական կազմակերպություն (IFC)

Հայաստանի ներդրումային միջավայրի բարեփոխման ծրագիր (2011-ից առ այսօր)

Ավստրիայի Ֆինանսների նախարարության և Նիդերլանդների Արտաքին գործոց նախարարության ֆինանսական աջակցությամբ: Հայաստանի ներդրումային միջավայրի բարեփոխման ծրագրի նպատակն է՝ նպաստել Հայաստանում ներդրումային պայմանների բարելավմանը՝ չորս հանգուցային ոլորտների (որոնցից մեկը պարենային անվտանգությունն է) կանոնակարգման արդյունավետության բարձրացմամբ: Կանոնակարգման բարելավումն անհրաժեշտ է նաև Հայաստանի ագրոբիզնեսի ոլորտում, որը երկրում զբաղվածության հիմնական ոլորտն է: Ակնկալվում է, որ ագրոբիզնեսի և պարենային անվտանգության ոլորտների կանոնակարգումը կնպաստի Հայաստանում աշխատատեղերի ստեղծմանը և մրցունակության մեծացմանը: Ծրագրված է աջակցել Պարենային անվտանգության գործկալությունում ռիսկային վերահսկման համակարգի ներդրմանը, ինչով կխթանվի տեղի սննդարտադրողների մրցունակության մեծացումը: Հայաստանում պտուղ-բանջարեղենի արտահանման պարզեցված և կենտրոնացված ընթացակարգի մշակման և ներդրման անհրաժեշտություն կա: Գործողությունների պլանը կմշակվի և կիրականացվի ագրոբիզնեսի ընդգրկմամբ, ինչով կխթանվի պետական-մասնավոր հատվածների երկխոսությունը և գործընկերության ձևավորումը:

Հայաստանում պարենային անվտանգության բարելավման ծրագիր (2012-ից առ այսօր)

Ավստրիայի Ֆինանսների նախարարության ֆինանսական աջակցությամբ, ՄՖԿ-ի՝ Հայաստանում պարենային անվտանգության բարելավման ծրագիրը նպատակ է հետապնդում մեծացնելու Հայաստանի սննդարտադրողների մրցունակությունը՝ պարենային անվտանգության խնդիրների մասին նրանց

իրագրելությունն ավելացնելու միջոցով բարելավելով պարենային անվտանգության նրանց միջոցառումները և պարենային անվտանգության համակարգերի ներդրմանն աջակցելով՝ նպաստել տեղական սննդարտադրողների համար շուկայի հասանելիությանը, ինչպես նաև տեղական խորհրդատվական կարողություններ ձևավորել:

Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամը (IFAD) Հայաստանում²⁵

ԳԶՄՀ-ի ռազմավարության²⁶

ԳԶՄՀ-ի հանգուցային տարրերից է աղքատության կրճատման լայնածավալ ծրագիրը՝ գյուղատնտեսության աճի և երկրի առավել աղքատ՝ մասնավորապես լեռնային և բարձրադիր շրջանների վրա ուշադրության կենտրոնացմամբ: ԳԶՄՀ-ն նաև ձևավորում և հզորացնում է տեղական կառույցները՝ իրականացման և կառավարման համար տեղային մակարդակի խմբերի ներգրավմամբ և այդ գործունեության համար նրանց պատասխանատու դարձնելով: Ռազմավարությունը ներառում է նպատակային մոտեցում աղքատ խմբերին, որոնք չեն շահել գյուղատնտեսության հատվածի աճից:

ԳԶՄՀ-ի ներդրումները աջակցություն են ցուցաբերում աղքատ ֆերմերների ընտանիքներին, որպեսզի նրանք կարողանան ավելցուկ արտադրել և դրա վաճառքից լրացուցիչ եկամուտ ստանալ: Գյուղում փոքր և միջին ծավալի ծառայություններ մատուցողները, ինչպիսիք են առևտրականները, վերամշակողները և մատակարարները, նույնպես աջակցություն են ստանում՝ ֆերմերների և շուկաների միջև կապող օղակ հանդիսանալու իրենց կարևոր դերի համար: Սեփական կենսապահովման համար գյուղատնտեսությամբ զբաղվող ֆերմերները շարունակում են աջակցություն, այդ թվում՝ իրենց արտադրությունը բարելավելու համար փոքր վարկեր ստանալ: Քանի որ գնալով աճում է ֆերմերների հետաքրքրվածությունը շուկայական հնարավորությունների առնչությամբ, ԳԶՄՀ-ն սուկ պարենային անվտանգությանն իր նպատակաուղղվածությունից շեղվել է՝ ընգրկելով նաև շուկայամետ գյուղատնտեսական արտադրությունը: Հայաստանում ԳԶՄՀ-ի նոր ներդրումները նպաստում են բիզնեսում, ֆինանսական և գյուղատնտեսության ոլորտներում արագ փոփոխություններին արդյունավետ արձագանքմանը, մինչ երկիրն ընթանում է առողջացման ուղիով:

Ներդրումները նպատակ ունեն մեծացնելու առավել հասույթ բերող արտադրությունն ու արտադրողականությունը՝ որպես աղքատության կրճատման հիմնական շարժիչ օգտագործելով մասնավոր հատվածի զարգացումը: ԳԶՄՀ-ն վարկային աջակցություն է ցուցաբերում ոչ ֆերմերային գյուղական տնտեսության բազմազանեցմանը և աղքատներին խրախուսում է փոքր կամ միջին ձեռնարկատիրություն սկսել: Կազմակերպությունը շարունակում է միջոցներ նպատակաուղղել գյուղական աղքատ բնակչության կյանքի պայմանների բարելավմանը, հիմնականում լեռնային շրջաններում և մասնավորապես կանանց և այլ խոցելի խմբերի համար: Ծրագիրն աջակցում է Կառավարության՝ գյուղական բնակավայրերի կանանց աշխատանքային հնարավորություններն ընդլայնելու ջանքերին:

Շվեյցարիայի զարգացման և համագործակցության (SDC) գործակալությունը և զարգացմանն ուղղված համագործակցությունը Կովկասում

2008-2012 համագործակցության ռազմավարության շրջանակներում ՇԶՀ-ի՝ Հարավային Կովկասում միջամտության հիմնական ոլորտը Տնտեսական զարգացումն ու զբաղվածությունն է: Ծրագրի հիմնական նպատակը տնտեսական անհամաչափության նվազեցումն է՝ միաժամանակ տնտեսական աճի պահպանմամբ, և սրանով անցումնային գործընթացին օժանդակումը: Ծրագիրն աշխատում է նպաստող

²⁵ <http://operations.ifad.org/web/ifad/operations/country/home/tags/armenia>

²⁶ <http://www.ebrd.com/pages/country/armenia/strategy.shtml>

և ռիսկերի կանխատեսմամբ բիզնես միջավայրի ստեղծման ուղղությամբ, որը կհանգեցնի ընտրած գյուղական շրջաններում եկամտային հիմքերի բարելավմանը և բազմազանեցմանը:

Վերը շարադրված նպատակի արդյունքում սկնկավվում է, որ.

- Ֆերմերները և գյուղական վայրերի ձեռնարկատերերը ձեռք կբերեն գիտելիքներ և կարողություններ, ինչը նրանց կօգնի ավելի քաջատեղյակ և արդյունավետորեն օգտվել ռեսուրսներից և շուկաներից:
- Աղետների ռիսկի կրճատման սկզբունքները՝ խոցելիության կանխարգելման և նվազեցման շեշտադրումով, կկիրառվեն տեղական մակարդակով:
- Ինստիտուցիոնալ կարողությունների ձևավորմամբ և որոշումների մասնակցային կայացմամբ կվեժանա փոխգործողությունը թիրախ խմբերի և տեղական ինքնակառավարման մարմինների միջև:

2008-2012 համագործակցության ռազմավարության շրջանակներում *Տնտեսական զարգացման և գրադվածության* ոլորտում միջամտությունը և վերլուծությունն առաջնորդվում են «շուկաներ աղքատների համար» (M4P) մոտեցմամբ և «աճ ի նպաստ աղքատների» սկզբունքով:

Ծրագրերի ուշադրության առարկան գյուղական շուկայի զարգացումն է, ինչը նպատակ ունի աջակցելու և հզորացնելու գյուղատնտեսական ընտրված արժեքային շղթաները, ինչպիսիք են կաթնամթերքը, միսը, բանջարեղենը, ինչպես նաև խառն ագարակատիրությունը, և բարելավելու ընտրված աշխարհագրական շրջանների գյուղական բնակչության կյանքի պայմանները և տնտեսական ապահովությունը: Ծրագիրն առաջին հերթին նպատակաուղղված է գյուղական փոքր ձեռնարկատիրություններին և ֆերմերների ընտանիքներին և միտված է նրանց օգնելու՝ սեփական ապրուստի համար արտադրողից դառնալու շուկայամետ փոքր ձեռնարկատերեր:

Հարավային Կովկասում գյուղի զարգացման շվեյցարական ծրագիրն իրականացվում է Հայաստանի Սյունիքի մարզում: Տեխնիկական համագործակցության համար ֆինանսական հատկացումները (Հարավային Կովկասի համար) կազմում են տարեկան 7-8 միլիոն շվեյցարական ֆրանկ:

Հավելված 3: Գյուղատնտեսության նախարարության նկատառումները հաշվետվության վերաբերյալ

Ոչ պաշտոնական թարգմանություն

Շնորհանուր մեկնաբանություններ – թարգմանությունը պետք է վերանայվի մի քանի ընտրված պարագրաֆներում

Մեկնաբանություններ թույլ և ուժեղ կողմերի վերլուծությունում /SWOT analysis/

Ուժեղ կողմեր /գյուղական զարգացում RD/

Կետ 4 – այս սահմանումը արտադրության ավելացված արժեքի ներուժի մասին է, ուստի պետք է տեղափոխվի <<հնարավորություններ>>, քանի որ ներկայումս այս ներուժը ամբողջությամբ չի օգտագործվում:

Ուժեղ կողմեր /գյուղատնտեսություն/

Կետ 4 – այս սահմանումը պետք է տեղափոխվի <<հնարավորություններ>>

Կետ 8 – խնդրում եմ աշխատել առանձնահատուկ բնագավառների վրա, որտեղ գրանցվել է դինամիկ աճ

Կետ 9 - այս սահմանումը պետք է տեղափոխվի <<հնարավորություններ>>

Թույլ կողմեր /գյուղական զարգացում/

Կետ 1 – ոչ հստակ և անհասկանալի

Կետ 7 - ոչ հստակ և անհասկանալի

Կետ 8 – այս սահմանումը չի արտացոլում իրականությունը, ես առաջարկում եմ խմբագրել կամ ջնջել այս մեկնաբանությունը

Թույլ կողմեր /գյուղատնտեսություն/

Կետ 1 – փոքր և մասնատված հողակտորները պետք է թողնվեն, այնուամենայնիվ մեկնաբանության երկրորդ մասը, որը վերաբերվում է նրան, որ ֆերմերները դժվարությամբ են հոգում իրենց հիմնական կարիքները, պետք է հանվի, քանի որ հիմնական խոչընդոտը և թույլ կողմը դա փոքր և մասնատված հողակտորներն են: Գյուղական համայնքներում աղքատության մակարդակը լուրջ խնդիր է, բայց այս համատեքստում էական չէ:

Կետ 7 – այս մեկնաբանությունը անհասկանալի է, ես ենթադրում եմ, որ հեղինակները նկատի ունեն վարկային ռեսուրսների մատչելիությունը, գրավի պայմանը ու բարձր տոկոսադրույթների հետ կապված հարցերը, իսկ հայերեն տեքստում խոսքը գնում է վարկերի և ներդրումների անբավարար պահանջարկի մասին է:

Կետ 8 – այս կետը կարելի է տանել <<հնարավորություններ>>, քանի որ հետագա համագործակցությունը և կոոպերատիվների ստեղծումը կարող են խթանել աճը գյուղատնտեսությունում և արտադրողականությունն այս բնագավառում: Այս կետն ինչ-որ կերպով արտացոլված է <<հնարավորություններ RD>>-ի կետ 2-ում:

Կետ 9 – այս սահմանումը միևնույն ժամանակ վերաբերվում է երեք խնդրի: Առաջին հերթին, ապրանքի որակը, պարզ չէ, թե հեղինակը ինչ նկատի ունի այս կետում: Նաև պարզ չէ, ինչ նկատի ունի անարդյունավետ արժեքային շղթա ասելով: Արժեքային շղթայի վերլուծությունը պետք է իրականացվի ապրանքների հատուկ խմբերի համար՝ վեր հանելու թույլ կողմերը, այլապես սահմանումը շատ

ընդհանրական է: Շուկայական կապերը ևս նշված են տեքստում, ուստի կրկնության կարիք չկա /օրինակ շուկայի մատչելիության վերաբերյալ մեկնաբանությունը:

Կետ 10 – Անհրաժեշտ է վերանայում, ես ենթադրում եմ, որ հեղինակները նկատի ունեն «Տեղեկատվության բաշխման մեխանիզմները, տեղեկատվության մատչելիությունը և խորհրդատվական ծառայությունները»>>

Հնարավորություններ /RD/

Կետ 3, 4, 6 – սա ավելի շատ գործողությունների պլանի սահմանում է, քան հնարավորություն

Կետ 8 – գյուղական համայնքներում սոցիալական ապահովության վերաբերյալ մեկնաբանությունը պարզ չէ

Հնարավորություններ /գյուղատնտեսություն/

Այս համատեքստում անհրաժեշտ է նշել Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու համաձայնագրի /DCFTA/ գործընթացը, որի արդյունքում տեղական արտադրության ապրանքները մուտք կունենան ԵՄ շուկա:

Վտանգներ /RD/

Կետ 2 – Ես կցանկանայի անդրադառնալ սահմանափակ ֆինանսական ռեսուրսներին ընդհանուր առմամբ, այլ ոչ միայն տեղական ինքնակառավարման մակարդակում:

Կետ 4 – բնակչության թվի նվազումը ոչ միշտ է վտանգ, եթե քաղաքային համայնքները զարգանում են ավելի արագ և ապահովում զբաղվածության հնարավորություններ և ավելի բարձր կենսապայմաններ: Այս համատեքստում, գյուղատնտեսական հողերի հետագա միավորումը /կոնսոլիդացիան/ կարող է բերել ավելի արդյունավետ գյուղատնտեսական բնագավառի:

Կետ 5 – փակ սահմանները վտանգ չեն, այլ թույլ կողմ, քանի որ Հայաստանն այժմ ունի երկու փակ սահման, ինչի արդյունք է փոխադրման բարձր գինը:

Կետ 6 – այս կետը պետք է տեղափոխվի <<թույլ կողմեր>>

Վտանգներ /գյուղատնտեսություն/

Կետ 2,3 – այս կետը չի արտացոլում իրականությունը: Հայաստանի կառավարությունը պարտավորվել է և ակտիվորեն իրականացնում է ծրագրեր՝ ուղղված գյուղատնտեսական բնագավառի զարգացմանը: Ավելին, գյուղատնտեսությունն առաջնային սեկտոր է, ինչն ամրագրված է մի շարք փաստաթղթերում:

